




ԼԻԲԵՐԱԼ
ԸՆԴՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՏԻՏՏՈՒՄ



Նիդերլանդների Թագավորության
ղեկավարություն

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԵԴԻԱ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ, ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՈՒՄ





AGAINST HATE SPEECH

Յեղիակ



ԼԻԲԵՐԱԼ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կայք՝ <https://liberalinstitute.am/>

Ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/YouthPoliticalEducation>

Էջադրող և ձևավորող՝

Անի Միրաբյան

Ամփոփագրի պատրաստող՝

Նորայր Բաղդասարյան

Խմբագիր՝

Աշոտ Մկրյան

Թարգմանիչ՝

Քրիստ Մարուքյան

Մշտադիտարկող խումբ՝

Նորայր Բաղդասարյան, Անի Սամսոնյան, Արեն Պետունց,
Մարիա Յովհաննիսյան, Արմեն Խաչատրյան

Տառատեսակներ՝

Braind Yerevan, Montserrat arm, Vrdznagir, GHEA Mariam



Նիդերլանդների Թագավորության
ղեսպանություն

Սույն աշխատանքը տպագրվում է **Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության օժանդակությամբ՝ «Ատելության խոսքի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության և հանդուրժողականության հաստատման»** ծրագրի շրջանակում:

Ձեռնարկում տեղ գտած տեսակետներն ու վերլուծություններն արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի և Նիդերլանդների Թագավորության դեսպանության դիրքորոշման հետ:

© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	5
Օգտագործված եզրույթներ և հապավումներ.....	11
1. ԲԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ.....	13
1.1. Հասարակական-քաղաքական գործիչների դեմ ուղղված ատելության խոսք.....	34
2. ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ.....	42
3. ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄՈՂՏՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ.....	64
4. ՍԵՌՈՎ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ.....	70
5. ԿՈՆԿՐԵՏ ԷԹՆԻԿ ԽՄԲԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ.....	81
5.1 Ռուսների դեմ ուղղված ատելության խոսք.....	82
5.2 Ամերիկացիների և արևմտյան արժեհամակարգի դեմ ուղղված ատելության խոսք.....	88
5.3 Թուրքերի դեմ ուղղված ատելության խոսքը հայկական մամուլում.....	93
5.4 Ադրբեջանցիների դեմ ուղղված ատելության խոսքը հայկական մամուլում.....	97
5.5 Հայերի դեմ ուղղված ատելության խոսքն ադրբեջանական մամուլում.....	100
6. ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ.....	115
7. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ.....	118
ԱՍՓՈՓՈՒՄ.....	123

Նախաբան



Որագրի ընթացքում 2022 թ. նոյեմբերի 1-ից մինչև 2023 թ. փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում **հայաստանյան մեդիադաշտում գործող զանգվածային լրատվամիջոցների՝ հեռուստահաղորդումների, տրայագիր մամուլի, սոցիալական մեդիայում գործող լրատվականների հրապարակումների, ինչպես նաև սերիալների և բլոգների եթերների** մշտադիտարկում է անցկացվել պատասխանելու հետևյալ հարցերին. ո՞ր լրատվամիջոցներն են ատելության խոսք տարածում, ինչպե՞ս է ատելության խոսքը ստեղծվում հայկական մեդիայում, ինչպիսի՞ գործոններ են ազդում դրա տարածման վրա, ի՞նչ իրադարձություններից հետո է ատելության խոսքը սրվում, որո՞նք են այն հիմնական թեզերը, որոնց շուրջ ձևավորվում է ատելության խոսք:

Հեռուստահաղորդումների մշտադիտարկման շրջանակում ուսումնասիրվել են **«5-րդ ալիք» հեռուստաընկերության «Հարցազրույց», «Մամուլի տեսություն», «Լուրերի թողարկում», «Սինթեզ»** հաղորդումները: Մշտադիտարկման է ենթարկվել «Հարցազրույց» հաղորդման 68 եթեր, որից 43-ում հայտնաբերվել է ատելության խոսքի դրսևորում: 68 եթերի ընթացքում հաղորդման կրկնվող հյուրերն են եղել Իշ-

¹ «Հարցազրույց» հաղորդաշարի հաղորդավարը Դերենիկ Մալխասյանն է. հյուրընկալում է տարբեր ոլորտների ներկայացուցիչների:

խան Սաղաթելյանը, Էդուարդ Շարմազանովը, Վոլոդյա Յովհաննիսյանը, Յրանտ Բագրատյանը (յուրաքանչյուրը՝ երկու անգամ), Նարեկ Մանթաշյանը, Արմեն Աշոտյանը, Անդրանիկ Թևանյանը (յուրաքանչյուրը՝ երեք անգամ): Մշտադիտարկման է ենթարկվել **«Մամուլի տեսություն» հաղորդման** 36 եթեր. դրանցից տասում ատելության խոսք է արձանագրվել: **«Լուրերի թողարկում»** հաղորդման դիտարկված 37 եթերից 14-ում է ատելության խոսք արձանագրվել: Այս հաղորդման ատելության խոսքը հիմնականում գեներացվել է քաղաքացիների հնչեցրած կարծիքների միջոցով: «Սիկթեզ»³ հաղորդման չորս եթեր է մշտադիտարկվել. դրանցից երկուսում է ատելության խոսքի դրսևորում հայտնաբերվել:

«Yerevan Today» հեռուստաընկերության եթերացանկից ուսումնասիրվել է «Կարճ ասած»⁴ հաղորդման 61 եթեր. դրանցից 47-ում է ատելության խոսք է արձանագրվել: «Երկիր մեդիա» հեռուստաընկերության եթերացանկից ուսումնասիրվել է «Երկրի հյուրասարահ» հաղորդման 81 եթեր. դրանցից 31-ում է ատելության խոսք հայտնաբերվել: «Լրատվական տեսանյութեր» հաղորդման ութ եթեր է ուսումնասիրվել. դրանցից վեցում է ատելության խոսքի դրսևորում հայտնաբերվել:

Վերոնշյալ հեռուստահաղորդումներում ատելության խոսքի թիրախում են եղել 33 իշխանությունները, «Զաղա-

² «Մամուլի տեսություն» հաղորդման հաղորդավարը Մարիաննա Ղարամանյանն է:

³ «Սիկթեզ» հաղորդումն ունի գրույց-բանավեճի ձևաչափ. հաղորդավարը Սպարտակ Սեյրանյանն է:

⁴ «Կարճ ասած» հաղորդման հաղորդավարը Սևակ Հակոբյանն է:

քացիական պայմանագիր» կուսակցությունը, Նիկոլ Փաշինյանը, նրա համակիրներն ու իշխանամետ անձինք և ՀՀ ոստիկանությունը:

Հատկանշական է, որ «Երկրի հյուրասրահ» և «Հարցազրույց» հաղորդումներին որպես հյուր հաճախ ներկայացել են նույն անձինք՝ տարածելով նույնաբովանդակ ատելության խոսք՝ այն դարձնելով շարունակաբար տարածվող հեռուստադիտողը տարբեր հեռուստահաղորդումներում լըսում է ատելության խոսքի նույնանման բովանդակություն: Կրկնվող հյուրերի ցանկում են եղել Էդուարդ Ծարմազանովը, Արմեն Աշոտյանը, Իշխան Սաղաթեյանը, Անդրանիկ Թևանյանը, Զրիստինա Վարդանյանը, Գեղամ Մանուկյանը, Դավիթ Զամալյանը, Վահե Հովհաննիսյանը և այլք: Վերոնշյալ անձանցից շատերը որպես ազդեցության գործակալներ են հանդես եկել, հասարակական դիրք ունեն, և նրանց տարածած խոսքն ավելի ընդունելի է հասարակության համար:

«Free News» հեռուստաընկերության եթերացանկից ուսումնասիրվել են **«Ազատ զրույց Արթուր Կիրակոսյանի հետ»**, **«Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ»** հաղորդումները: Ուսումնասիրվել է «Ազատ զրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդման 63 եթեր. դրանցից 15-ն ատելության խոսք է պարունակել, իսկ «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման պարագայում 69 եթերից 64-ում: Այսպիսով, ատելության խոսքի ամենամեծ ծավալը հայտնաբերվել է «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ժամանակ. հատկանշական է, որ այն հիմնականում գեներացրել է հաղորդավարը: Այս հաղորդումներում ատելության խոսքն ուղղված է եղել խորհրդարանական ընդդիմության, Հայ առաքելական եկեղեցու, ՀՀ նախկին իշխանությունների,

ընդդիմության հանրահավաքներին մասնակցող քաղաքացիների դեմ:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ հեռուստահաղորդման հյուրերն ընտրված են ըստ իրենց քաղաքական հայացքների: «5-րդ ակիք»-ի, «Երկիր մեդիա»-ի հաղորդումների հյուրերը հիմնականում ընդդիմության շահերը պաշտպանող անձինք են, որոնք աստելության խոսքի մթնոլորտ են ձևավորում իշխանական թևի դեմ, իսկ «FreeNews»-ի պարագայում տեսանելի է հակառակ պատկերը:

Տպագիր մամուլի մշտադիտարկման համար ուսումնասիրվել են **«Առավոտ», «Ժողովուրդ» թերթերի** 48-ական և **«Իրավունք»** թերթի 17 համար: Դիտարկված ժամանակահատվածում աստելության խոսքի դրսևորումներ են հայտնաբերվել՝ «Առավոտ» թերթում 5, «Ժողովուրդ» թերթում 37, «Իրավունք» թերթում 73: «Առավոտ» և «Ժողովուրդ» թերթերում աստելության խոսքի դրսևորումներ առկա են եղել միայն տեքստերում, իսկ «Իրավունք» թերթում և՛ տեքստերում, և՛ ծաղրանկարներում:

Սոցիալական մեդիայում գործող լրատվականներում աստելության խոսք հիմնականում տարածվել է հրապարակված նյութերի մեկնաբանությունները, ինչպես նաև ազդեցության գործակալների ֆեյսբուքյան գրառումները վերարտադրելու միջոցով: Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են **«Ազատություն» լրատվականում** հրապարակված 89 նյութ և աստելության խոսք պարունակող 2.677 մեկնաբանություն, **«168.am»** հարթակի 137 նյութ և աստելության խոսք պարունակող 1.050 մեկնաբանություն, **«Հրապարակ»** լրատվականի 43 նյութ և աստելության խոսք պարունակող 227 մեկնաբանություն, **«1in.am»** լրատվականի 118 նյութ և աստելու-

թյան խոսք պարունակող 2.890 մեկնաբանություն: Սոցիալական մեդիայում ատելության խոսքի թեմատիկ շրջանակները լայն են եղել՝ իշխանության և ընդդիմության դեմ ուղղված ատելության խոսքից մինչև էթնիկ պատկանելությամբ պայմանավորված ատելության խոսք:

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են **«Սերը թակարդում» հեռուստասերիալի** 32 սերիա, **«Կույր աշխարհ»**՝ 21, **«Ամեն տարի գարնանը»**՝ 15, **«Ագապի»**՝ 13, **«30 արծաթ»**՝ 24, **«Արդարության որս»**՝ 26: Նշվածներից «Արդարության որս», «30 արծաթ», «Ագապի» հեռուստասերիալներում ատելության խոսք չի արձանագրվել, իսկ մյուսներում այն հիմնականում դրսևորվել է բռնության տեսարաններով: «Սերը թակարդում» հեռուստասերիալի հիմնական թիրախում են եղել կանայք, իսկ «Կույր աշխարհ»-ում մանկատան երեխաները: Հունվարի 16-ից մշտադիտարկվել են նաև Աննա Աբրահամյանի և Վարդան Ղուկասյանի բլոգները, որոնք հիմնականում պարունակել են քաղաքական բնույթի ատելության խոսք:

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են նաև ադրբեջանական մամուլի հրապարակումները և սոցիալական մեդիայի հարթակները, որոնք հայերի դեմ ատելության խոսք են պարունակել: Մշտադիտարկված ժամանակահատվածում ուսումնասիրվել են ադրբեջանական **«Caliber»** (հետևորդների քանակը՝ 58.065), **«Shedevrplus»** (հետևորդների քանակը՝ 60.956), **«APA»** (հետևորդների քանակը՝ 21.120), **«Ordu.az»** (հետևորդների քանակը՝ 2.672), **«haqqin.az»** (հետևորդների քանակը՝ 17.195) **«oxu.az»** (հետևորդների քանակը՝ 22.212) տվեգրամյան ալիքներում կատարված հրապարակումների մեկնաբանությունները: Ուսումնասիրվել են Հայաստանին վերաբերող 208 հրապարակում և սոցիալական

մեդիայի 310 մեկնաբանություն. դրանք հայերի դեմ աստելության խոսք և բռնության կոչեր են պարունակել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ադրբեջանական մեդիայում աճում է աստելության խոսքի ծավալն ու նրա տարբեր դրսևորումները:

Սույն վերլուծությունն ընդգրկում է վերոնշյալ բոլոր հարթակների ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերված աստելության խոսքի դրսևորումների հիմնական թեմաներն ու կրկնվող թեզերը՝ առանձին գլուխներով: Յուրաքանչյուր գլխում համադրված են ուսումնասիրված հարթակներից դուրս բերված օրինակները:

Օգտագործված եզրույթներ և հապավումներ

ԵԶՐՈՒՅԹԸ, ՀԱՊԱՎՈՒՄԸ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Ատելության խոսք	Հանրային (հասարակական) խոսքի դրսևորում, որն արտահայտում է ատելություն կամ խրախուսում բռնություն անձի կամ անձանց խմբի դեմ պայմանավորված այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են անձի այլակարծությունը, սեռը, կրոնական պատկանելությունը, էթնիկ խումբը, գենդերային ինքնությունը ևն
ՁԼՄ	Ձանգվածային լրատվության միջոց(ներ)
ԼԳԲՏ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
Մշտադիտարկում/ մոնիթորինգ	Դիտարկում, որի նպատակն է որոշակի վիճակի կամ պայմանի ապահովման վերահսկողությունը, որակի գնահատումը
Ուղղորդված տեղեկատվություն	Տարածվող տեղեկատվություն, որը, որպես կանոն, միակողմանի, ոչ լիարժեք, երբեմն ոչ ճշմարիտ է և հանրային հստակ վարքագիծ կամ վերաբերմունք դրսևորելու նպատակ ունի
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն

Քարոզչություն/ պրոպագանդա	Ժամանակակից քաղաքական խոսույթում հասկացվում է որպես տեսակետների, փաստերի, փաստարկների և այլ տեղեկության ազատ տարածում (նաև՝ խեղաթյուրված և մոլորեցնող), որը հասարակական կարծիք կամ վերաբերմունք ձևավորելու նպատակ ունի
ՔՊ	Քաղաքացիական պայմանագիր



ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐԱՏՎՈՐՈՒՄՆԵՐ

Քաղաքական հայացքներով պայմանավորված ատելության խոսք դրսևորվել է դիտարկված գրեթե բոլոր մեդիա-հարթակներում՝ հեռուստահաղորդումներում, տպագիր մամուլում, բլոգներում, ինչպես նաև սոցիալական մեդիայում: Ատելության խոսքի քաղաքական թիրախում հիմնականում հայտնվել են իշխանությունն ու ընդդիմությունը, առանձին դեպքերում կոնկրետ անձինք: Անհրաժեշտ է ընգծել ատելության խոսքի մի քանի կարևոր թեզ, որ շրջանառվել են վերոնշյալ մեդիա-հարթակներում: Հարկ է նշել, որ այդ թեզերը գրեթե նույնաբովանդակ են, սակայն մեդիաների՝ ատելության խոսքի գեներացման ձևերը տարբերվում են:

Հատկանշական է, որ իշխանական թևին ուղղված ատելության խոսք գեներացրել են «5-րդ.ալիք», «Երկիր մեդիա» և «Yerevan Today» հեռուստաալիքները, սոցիալական մեդիայի դեպքում «168.am», «Հրապարակ», «1in.am» և «Ազատություն» լրատվականներն ու նրանց հրապարակած կյուբերի տակ

մեկնաբանություններ թողած օգտատերերը, բլոգների դեպքում Վարդան Ղուկասյանը, Աննա Աբրահամյանը, տպագիր մամուլի դեպքում «Առավոտ», «Ժողովուրդ» և «Իրավունք» թերթերը:

Ատելության խոսքի առավել տարածված դրսևորումներից մեկը **կոնկրետ բառամթերքի, թեզերի գեներացումն ու տարածումն** է: Մասնավորապես՝ վերոնշյալ թեզերից մեկն Արցախյան պատերազմից հետո դառնում է «դավաճան»-ի պիտակը, որն ընդհանուր առմամբ ուղղված է իշխանությունների, Նիկոլ Փաշինյանի և նրան սատարող քաղաքացիների դեմ:

Հեռուստահաղորդումների ընթացքում արձանագրվել է «դավաճան»-ի պիտակավորման նվազագույնը 31 դեպք: Մասնավորապես՝ «Երկիր մեդիա»-ի «Երկրի հյուրասրահ» հաղորդման հյուր Աննա Մկրտչյանն իշխանություններին պիտակավորում է որպես «դավաճաններ» և արտահայտում հետևյալ միտքը. «.....քաղաքական պայքար չէ Հայաստանում, Հայաստանում պայքար չէ մեկ դաշինքի և մյուս դաշինքի միջև, Հայաստանում պայքար է դավաճանների և հայրենիք ունեցող հայերի մեջ.....»⁵: Այս պարագայում ատելության խոսք տարածողը հաղորդման հյուր Աննա Մկրտչյանն է. վերոնշյալ հաղորդման ժամանակ ատելության խոսքի նման դրսևորումներն օրինաչափորեն կրկնվում են: ԶԼՄ-ն փաստացի ոչ միայն տրամադրել է հար-

⁵ Տե՛ս «Երկրի հյուրասրահ» հաղորդման 2022 թ. նոյեմբերի 21-ի եթերը 16:53 րոպեից՝ <https://www.youtube.com/watch?v=OmyFzrjvQU0&list=PLffuHBHoz5dpA1cMUJOb8TteMKrof286r&index=6>:

թակ, այլև ատելության խոսք տարածել: Նույն եթերի ընթացքում «դավաճան» պիտակավորումը հնչել է մի քանի անգամ տարբեր արտահայտություններով, ինչպիսիք են՝ «*հայրենիքը ծախել և դավաճան Նիկոլի կողքը կանգնել*», «*Յայաստանում պայքար է դավաճանների և հայրենիք ունեցող հայերի մեջ*», «*հողատու*», «*կապիտուլյանտ*»⁶:



Պատկեր 1.

Ատելության խոսք պարունակող ծաղրանկար՝ հրապարակված «Իրավունք» թերթի 2023 թ. փետրվարի 28-ի 22 (3633) համարում

Ջևարավոր է, որ հաղորդում դիտողը ատելության խոսքի նման շղթայական տարածման հետևանքով քաղաքական

⁶ Տե՛ս «Երկրի հյուրարարա» հաղորդման 2022 թ. նոյեմբերի 21-ի եթերը 24:09 րոպեից՝ <https://www.youtube.com/watch?v=OmyFzrjvQU0&list=PLffuHBHoz5dpA1cMUJOb8T1eMKrof286r&index=6>:

կոնկրետ վերաբերմունք ձևավորի ոչ միայն իշխանությունների, այլև իշխանություններին աջակցող քաղաքացիների նկատմամբ, ինչն իր հերթին կարող է հանգեցնել հասարակության բևեռացմանը: Նույն թեզը կրկնվում է նաև «5-րդ ակիք» հեռուստաընկերության «Հարցազրույց» հաղորդման ընթացքում, որն արտահայտում է ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը: «Երբ որ Նիկոլ Փաշինյանը տասնութին, քսանին, քսաներկուսին ասում ա, որ Հայստանի արտաքին քաղաքականության այցեքարտը ժողովրդավարությունն ա, նա շարունակում ա դա ասել անգամ էսքան կորուստներից հետո. նա դավաճան ա: Այլևս ես հանում եմ էս բառը, որ նա իմբիցիլ ա: Նա դավաճան ա»⁷:

«Դավաճան»-ի պիտակավորումն ավելի է տարածվում, երբ պարզվում է, որ վերականգնվել են հայ-հունգարական հարաբերությունները, որոնք խզվել էին 2012 թ.՝ 2004 թ. Հունգարիայում հայ լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի սպանության համար դատապարտված Ռամիլ Սաֆարովի արտահանձնումից հետո:

«168.am»-ը հրապարակել է Արմեն Աշոտյանի ֆեյսբուքյան լայվը, որտեղ վերջինս խոսում է հայ-հունգարական դիվանագիտական հարաբերությունների հնարավոր վերականգնման մասին: Արմեն Աշոտյանը նշում է. «*Էս դավաճան սրիկաները այնուհանդերձ զնում են հերթական ուրացմանը՝ այս անգամ ուրանալով 2004 թ. դաժանաբար սպանված*

⁷ Տե՛ս «Հարցազրույց» հաղորդման 2022 թ. դեկտեմբերի 21-ի եթերը 19:51 րոպեից՝

<https://www.youtube.com/watch?v=Dq4wrLevwEo&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4IRRNgm&index=4>

Գուրգեն Մարգարյանի հիշատակը»⁸: Յութություն տեսանյութի տակ օգտատերերը Փաշինյանի հասցեին վիրավորական եզրույթներ պարունակող մեկնաբանություններ են գրել նրան անվանելով «թուրք», «սրբապիղծ», «փաշողի»: «Դավաճան» եզրույթն անձին ոչ միայն պիտակավորում, վիրավորում և նսեմացում է, այլև հասարակության մեջ թշնամանք և աստելություն է քարոզում:



Պատկեր 2.

«Իրավունք» թերթի 2023 թ. փետրվարի 22-ի համարում տեղ գտած ծաղրանկար, որը պարունակում է քարոզչական տարր, և օգտագործվելով որպես աստելության գեներացման գործիք կոչված է ՀՀ վարչապետ Փաշինյանին ներկայացնելու որպես թշնամական պետության համար աշխատողի՝ «դավաճան»-ի:

⁸ Տե՛ս «168.am»-ի 2022 թ. նոյեմբերի 2-ի հրապարակումը
<https://www.youtube.com/watch?v=hd5DiE5TZe4>,
<https://168.am/2022/12/02/1804819.html>:

Չարկ է նշել, որ Արմեն Աշոտյանը, լինելով ՀՀ փոխնախագահ, հասարակության մեջ որոշակի դիրք է զբաղեցնում և հաճախ է հրապարակային խոսքով հանդես գալիս, այդ իսկ պատճառով կարող է ազդեցության գործակալ համարվել, այս պարագայում ատելության խոսքն ավելի արագ և հիմնավոր կերպով է տարածվում հասարակության մեջ: Չարկ է ընդգծել այն, որ Աշոտյանը դիտարկված ժամանակահատվածում չորս անգամ հարցազրույց է տվել «Երկիր մեդիա»-ի և «5-րդ ալիք»-ի հաղորդումներում, իսկ «168.am»-ը նրա ֆեյսբուքյան հրապարակումները սոցիալական մեդիայում արտատպել է նվազագույնը 40 անգամ, ինչը նշանակում է, որ Աշոտյանի ասելիքն ունի կոնկրետ հասցեատեր, և այն օգտագործում են կոնկրետ լրատվամիջոցներ:

Սոցիալական մեդիայում ևս Նիկոլ Փաշինյանը թիրախավորված է որպես «դավաճան»: Սակայն, այս պարագայում մի կողմից սոցիալական մեդիայի լրատվականներն են արտատպում ընդդիմադիր գործիչների ֆեյսբուքյան գրառումները և այսկերպ դառնում ատելության խոսքի տարածողներ, մյուս կողմից՝ սոցիալական մեդիայի լրատվականն ատելության խոսք չպարունակող չեզոք նյութ է հրապարակում, սակայն օգտատերերն են ատելության խոսքով համեմված մեկնաբանություններ գրում: Վերոնշյալ համատեքստում հարկ է նաև նշել, որ իշխանություններին շատ հաճախ նույնականացրել են թուրքերի և ադրբեջանցիների հետ՝ հասարակությանը ցույց տալով, որ իշխանություններն աշխատում են հօգուտ Ադրբեջանի և Թուրքիայի, ինչը հատկապես Արցախյան 44-օրյա պատերազմից հետո շատ զգայուն հարց է հայերի համար:

2023 թ. հունվարի 10-ին «1in.am»-ը հրապարակում է նյութ՝ *«Ժողովրդից ստացած իշխանությունը չեմ կարող*

փողոց հանել ու ասել՝ ով է ուզում. Փաշինյան» վերնագրով: Զոդվածն ատելության խոսք չի պարունակում, սակայն դրա մեկնաբանություններում առկա են թե՛ «դավաճան»-ի պիտակավորման, թե՛ թուրքերի հետ նույնականացման արտահայտություններ: Օրինակ՝ «Որքան կույր եք, որ դեռ էսքանից հետո շարունակում եք էս թուրքին համարել ղեկավար, միթե չեք տեսնում ով է. լավ, էլ ո՞նց ասի իր թուրք լինելը», «Անինք-նասեր, անհայրենիք ստահակ: Կուտը սովեցիր խաբեցիր ժողովրդին, հիմա էլ արդարացնում ես քո ստորությունները»: Սա մի կողմից ատելության խոսք է տարածում ուղղված Նիկոլ Փաշինյանի համակիրների դեմ, մյուս կողմից՝ թիրախավորում Նիկոլ Փաշինյանին՝ նրան ներկայացնելով որպես հայրենիքի համար վտանգավոր անձ: Իշխանություններին ադրբեջանիցների հետ համեմատելու խոսքային դրսևորումների կարելի է հանդիպել նաև տպագիր մամուլում: Այսպես՝ «Իրավունք» թերթի 2022 թ. դեկտեմբերի 23-ի համարի հենց առաջին էջում առանձնանում է «Չայաստանի Չանրապետության ադրբեջանական իշխանություններն են մեղավոր» վերնագիրը: Նախ հարկ է ընդգծել, որ վերնագիրը հենց առաջին էջում է՝ ուշադրության կենտրոնում, ուստի ընթերցողը գուցե տպավորություն ունենա, որ կարևոր հոդվածը է: ԶԶ իշխանություններին ադրբեջանական իշխանությունների հետ նույնացնելով ԶԼՄ-ն կարող է ընթերցողների շրջանում թշնամական զգացում առաջացնել իշխանությունների դեմ: Նույն թերթի մեկ այլ համարում նշվում է. «Իսկ Նիկոլի թրքահարճ խուճուճ ռեպրեսիաներ ծավալեց ԶՅԴ-ի դեմ՝ ճիշտ ու ճիշտ իր հոգևոր հայրիկ Լևոն Տեր-Պետրոսյանի օրինակով»⁹: Ատելության խոսքի թիրախում այս դեպքում ոչ միայն

⁹ Տես «Իրավունք» թերթի 2-3 համարը:

Նիկոլ Փաշինյանն է, այլև Լևոն Տեր-Պետրոսյանը, ինչն ընթերցողների շրջանում կարող է կարծիք ձևավորել նախկին նախագահի և Նրա ծավալած գործունեության վերաբերյալ: «Իրավունք» թերթն այս թեմայով ութ ծաղրանկար է հրապարակել: Ըստ ՄԱԿ-ի՝ ատելության խոսքն արտահայտվում է նաև ծաղրանկարներով, երբ հեղինակը ծաղրանկարի բուն էությունը պայմանավորող երգիծանքի սահմաններն անցնում է և իր աշխատանքը ողողում վիրավորանքով և ատելությամբ:

Դիտարկված ժամանակահատվածում ատելության խոսքի թիրախում է եղել նաև **վարչապետի տիկին Աննա Զակոբյանը**: Զատկանշական է, որ Աննա Զակոբյանի դեմ ուղղված ատելության խոսքը ոչ թե սեռով է պայմանավորված, այլ քաղաքական գործընթացներին մասնակցությամբ և Նիկոլ Փաշինյանի կինը լինելով: Աննա Զակոբյանը դիտարկված ժամանակահատվածում թիրախավորվել է նվազագույնը 30 անգամ: Նրա դեմ ուղղված ատելության խոսքը հատկապես սրվում է Իրան կատարած այցից հետո: «168.am» լրատվականը հրապարակել է ֆեյսբուքյան օգտատեր Վահե Սարգսյանի գրառումը, որտեղ նա վարչապետի տիկին Աննա Զակոբյանին և իշխանականներին անվանում է «սատանայի սպասավոր»։ *«Ըստ իմ տեղեկությունների՝ Նույնիսկ Թեհրանի հայկական եկեղեցիներում Աննա Զակոբյանը հնարավորություն չի ունեցել հանդիպել հոգևորականների հետ կամ օրհնություն ստանալ: Սատանայի սպասավորների առաջ Աստծո տան դռները փակ են»*¹⁰: Լրատվականի ֆեյսբուքյան էջում տեղադրված այս նյութի տակ օգտատերերը

¹⁰ Տե՛ս «168.am»-ի բլոգի հրապարակումը՝ https://blog.168.am/blog/426388.html?fbclid=IwAR0eybjraD23oBcc6kX55YmJSj4mWlbyaZtu-hbnofsY_z5Ume16dVvAxog:

թիրախավորել են Աննա Հակոբյանին և նրա դստերը (Նյութի լուսանկարում երկուսով են)՝ «բոշաներ», «աջեբներ», «ազառկա», «գեշ զգվելիներ», «գորտ», «ցրոծե» ևն: «Իրավունք» թերթում տպագրված հոդվածում հեղինակը նախ Աննա Հակոբյանին անվանում է «տխրահռչակ էրատո», ապա՝ «գարջելի տիկին»¹¹: Այս հոդվածին կից ծաղրանկար կա, որի նպատակն է Աննա Հակոբյանի և Սուրեն Պապիկյանի անձերը կապել Հայաստանի պատմության կեղծման, նենգափոխման և թուրքական քարոզչության հետ (տե՛ս՝ Հավելված): Վիրավորական նման ձևակերպումները միտված են հասարակության շրջանում նսեմացնելու Աննա Հակոբյանի դերը:

Ամենահաճախ քննարկվող և ատելության խոսք պարունակող մյուս թեզը Արցախի որևէ շրջան հանձնելու մասին է: Այս թեմայի շուրջ տարբեր հարթակներում արձանագրվել է ատելության խոսքի նվազագույնը 63 դրսևորում: Թեմայի վերաբերյալ Նյութերը հաճախ լեցուն են ոչ միայն պարզապես քննադատություններով, այլև կոնկրետ ատելության խոսք պարունակող արտահայտություններով, կարծիքներով, որոնք հաճախ *բամբասանքներ* են կամ *ապատեղեկատվություն*: Օրինակ՝ «Հրապարակ» տպագիր թերթում հրապարակվել է Նյութ՝ «Մինչև տարեվերջ կկնքվի այնպիսի պայմանագիր, որով Արցախը կմնա Ադրբեջանի կազմում» վերտառությամբ: Հոդվածի վերնագիրն այնպես է ձևակերպված, կարծես այն ոչ թե հեղինակի համոզմունքն է, այլ հաստատված իրողություն է, որն առաջիկայում պետք է տեղի ունենա: Հարկ է նշել, որ այս սկանդալային վերնագիրը կոնկրետ նպատակ ունի՝ ապատեղեկատվություն տարածել հակաիշխանական տրամադրություններ բորբոքելու համար:

¹¹ Տե՛ս «Իրավունք» թերթի 2023 թ. հունվարի 24-ի համարը:

Յեղիևակը գրում է. «Յարգարժան հայերնասերներ, մինչև տարեվերջ շատ քիչ ժամանակ է մնացել, արթնացեք վերջապես (հետո չասեք, թե մենք քնած, Յոյդար օղիին եկավ, ողջը վերցրեց ու գնաց), արթնացեք և տեր կանգնեք ձեր հայրենիքին, թե չէ շուտով հայտնվելու եք թուրքի ոտքերի առաջ և աղերսելու եք, որ գթա ձեզ, չկոտորի, թույլ տա՛ իր մոտ ծառա աշխատել»¹²: Նման բովանդակությամբ կյուրը ոչ միայն ապատեղեկատվություն և աստելության խոսք է տարածում, այլև հասարակության շրջանում խուճապ և տագնապ է առաջացնում:

Արցախի շուրջ քաղաքական ենթատեքստով աստելության խոսքն ավելի է սրվում **Լաչինի միջանցքի փակումից հետո**: «Կարճ ասած» հաղորդման ժամանակ հաղորդավարն իշխանություններին մեղադրում է «բանակից թռնելու, արցախցիներին սովի մատնելու և ամեն բան սվաղել ու սևացնելու» համար. «Եթե էս իշխանությունը մնա, այս իշխանությունը շարունակի իր ազգակործան քաղաքականությունը, ապա մենք Արցախի կորցնելուն ավելի մոտ կգտնվենք»¹³: Մեկ այլ եթերում նույն հաղորդավարն ասում է. «Ձեզ թվում է՝ Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը նոր է փակվել, էդ ճանապարհը փակվել է էն օրը, երբ Սերժը ձեր ոռնոցների ֆոնին հրաժարական տվեց, երբ Լաչինն ազատագրելու օրը էլի ձեր ոռնոցների ֆոնին նստած էին Լաչինն ազատագրած Զոչարյանը, Օհանյանը, Խաչատուրովը»¹⁴: Աստելության խոսք վերոնշյալ դեպքերում տարածել է հենց ՁԼՄ-ն, այս պարագայում «Yerevan Today» ալիքը՝ հաղորդավարի հնչեցրած

¹² Տեն «Յրապարակ» օրաթերթի 200 (3427) համարը:

¹³ Տեն «Կարճ ասած» հաղորդման 2022 թ. դեկտեմբերի 29-ի եթերը՝ https://www.youtube.com/watch?v=1_Xav9UQj4w

¹⁴ Տեն «Կարճ ասած» հաղորդման 2022 թ. դեկտեմբերի 15-ի եթերը:


կարծիքի միջոցով: Հատկանշական է, որ այս դեպքում ատելության խոսքն ուղղված է ոչ միայն ՀՀ իշխանությունների, այլև բոլոր այն քաղաքացիների դեմ, որոնք մասնակցել են 2018 թ. հեղափոխությանը. «ոռնոց»-ը բնորոշ է կենդանիներին, և հետևաբար հեղափոխությանը մասնակցած քաղաքացիները կարող են իրենց ոչ միայն նվաստացած, այլև մեղավոր զգալ ճանապարհների փակման համար:

Նիկոլ Փաշինյանի համակիր քաղաքացիների դեմ ուղղված ատելության խոսք

Լաչինի միջանցքի փակումից հետո նկատվել է նաև տպագիր մամուլում: Նմանատիպ դեպքեր արձանագրվել են նվազագույնը 16 անգամ: Այսպես, «Ժողովուրդ» օրաթերթում նշված է. «Արցախցիներին զորակցելու կամ անգամ կարեկցելու ոչ մի պատճառ չկա: Փաշինյանական ընտրազանգվածի այս ծայրահեղական դրսևորումները, կարծում եմ, մի քանի տասնյակից ավելի են»¹⁵: Նման ձևակերպումների պատճառով ընթերցողը կարող է կարծել, որ Նիկոլ Փաշինյանին ընտրած քաղաքացիներն անտարբեր են իրենց հայրենակիցների խնդիրների նկատմամբ: Ատելության խոսքի նման դրսևորումները կարող են բևեռացում ստեղծել Փաշինյանին ընտրած քաղաքացիների և արցախցիների միջև: Հարկ է նշել, որ Փաշինյանին ընտրած քաղաքացիներն ատելության խոսքի թիրախավորման կենտրոնում են նաև «Իրավունք» թերթի հոդվածներից մեկում: Հեղինակը գրում է. «Ինչպիսին են 688 հազար ընտրողները, այդպիսին է և դրանց ընտրած «իշխանությունը»՝ աչքածակ և ցուցամոլ: Սրանց իրոք ճոխ տոնածառն ավելի է հետաքրքրում, քան մարտական դիրքերի ծակ վրանները:

¹⁵ Տե՛ս «Ժողովուրդ» օրաթերթի 2022 թ. դեկտեմբերի 23-ի համարը:

Այդ տեսակի ընտրածը, առավել ևս՝ չնայած կապիտուլյացիային ընտրածը, պետությունն անխուսափելիորեն տանում է կործանման և բացում է նոր ցեղասպանության դուռը»¹⁶: Այս դեպքում թիրախավորվում է ՀՀ հասարակության մի զգալի հատված՝ շուրջ 688 հազար քաղաքացի: Նման բովանդակությամբ ատելության խոսքի շղթայական տարածումը կարող է բերել հասարակության բևեռացման և թշնամանքի առաջացման «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ընտրողների և չընտրողների միջև: Այս թեմայով «Իրավունք»-ը հրապարակել է նաև ծաղրանկարներ: Թերթն այսպերպ քաղաքական ենթատեքստով ատելության խոսք է գեներացնում: Օրինակ՝ ծաղրանկարներից մեկում պատկերված է Նիկոլ Փաշինյանը, որ հաշվում է 688.000 «ոչխարների» ծաղրանկարի հեղինակը Նիկոլ Փաշինյանի ընտրազանգվածին համեմատում է «ոչխարների» հետ (տես՝ Նկար 3.):



Պատկեր 3.

«Իրավունք» թերթում տեղ գտած ծաղրանկար, որը թիրախավորում է Նիկոլ Փաշինյանի ընտրողներին:

¹⁶ Տես «Իրավունք» թերթի 2022 թ. դեկտեմբերի 6-ի համարը:

Մեկ այլ օրինակ. «Կարճ ասած» հաղորդման ժամանակ հաղորդավար Սևակ Յակոբյանն ասում է. «Կար մարդկանց խմբակ, որում ներգրաված էին հիմնականում բանակում չծառայածներ, սորոսական ՅԿ-ների անդամներ, փողով միտինգ անողներ, աղքատներ, մուտիլովչիկներ: Նրանք այս թվարկածս ու չթվարկածս բոլոր խմբերին խոստումներ տվեցին, վերցրին իշխանությունը, վերցրին ամեն մեկն իր գլխից մեծ պաշտոն ու մեր սիրուն երկիրը տարան քանդեցին»¹⁷: Այստեղ թիրախավորվել են ՅԿ-ները, հանրահավաքների մասնակցիները, սոցիալապես անապահով մարդիկ ինչպես նաև բոլոր նրանք, ովքեր չեն ծառայել բանակում: Հաղորդավարն այս բոլոր խմբերին մեղադրել է իշխանությանն աջակցելու և իշխանության խոստումներին հավատալու համար: Նման ձևակերպումները ևս մեկ անգամ սեպ են խրում հասարակության տարբեր շերտերի միջև և կարող են վերոնշյալ խմբերի նկատմամբ հակակրանք ձևավորել:

Լաչինի միջանցքի փակումից հետո ատելության խոսքին միանում է նաև *ապատեղեկատվության* մի մեծ ծավալ: Օրինակ՝ «168.am» սոցիալական լրատվամիջոցի «Ռիվյու» հաղորդման ընթացքում հյուրը՝ Էդգար Ղազարյանը, կարծիք է հնչեցնում Ի. Ալիևի և Ն. Փաշինյանի՝ Լաչինի ճանապարհը փակելու պայմանավորվածության մասին, որը *Նպատակաուղղված ապատեղեկատվություն է*: ՋԼՄ-ն Նյութը հրապարակել է հետևյալ վերնագրով՝ «Արցախը հանձնված է. Փաշինյանն Ալիևի հետ իրականացնում է երկու խոշոր

¹⁷ Տես «Կարճ ասած» հաղորդման 2022 թ. դեկտեմբերի 19-ի եթերը 6:41 րոպեից՝ <https://www.youtube.com/watch?v=SyzuEG9SNzk>:

ծրագիր. Ղազարյան»¹⁸: Սա պարզապես ապատեղեկատվությունն է. սկանդալային վերնագրի միջոցով ՀԼՄ-ն հասարակության մեջ խուճապ է տարածում Նիկոլ Փաշինյանին որպես Արցախը հանձնողի ներկայացնելով: Հարկ է ընդգծել, որ լրատվականը նյութը տարածել է երեք հարթակում «168.am»-ում, «168.am»-ի բլոգում և յուրօրօրյան ավիջում, որտեղ հաղորդումն ունի շուրջ 19 հազար դիտում:

Միջանցքի փակումից հետո ատելության խոսք ուղղված է ոչ միայն ՀՀ, այլև Արցախի իշխանությունների, մասնավորապես՝ Արայիկ Հարությունյանի, Դավիթ Բաբայանի, Ռուբեն Վարդանյանի դեմ: Արցախի Հանրապետության իշխանությունների դեմ ատելության խոսք ուղղած հեռուստահաղորդումների մեջ առանձնանում են «FreeNews»-ի հաղորդումները, իսկ սոցիալական մեդիայում հիմնականում սոցիալական մեդիայի լրատվականների տարածած նյութերի մեկնաբանությունները: Այսպես՝ «FreeNews»-ի «Ազատ զրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդման հյուր Տիգրան Խզմայանը հետևյալ ձևակերպումներն է օգտագործում *«Ռուսական զավթիչներ.....: Վարձու գործակալները՝ Դավիթ Բաբայանի գլխավորությամբ.....», «Այն վերնախավը, որը մտնեց Արցախը, որը բռնաբարեց Արցախը.....»¹⁹*: Այստեղ հանդիպում ենք ատելության խոսքի, որն ունի միանգամից երեք ուղղություն: Առաջինն ռուս խաղաղապահների դեմ է. նրանց «ռուսական զավթիչներ» անվանելով՝ ունկնդիրների

¹⁸ Տե՛ս «Ռիվյու» հաղորդման 2023 թ. հունվարի 4-ի եթերը՝ https://168.am/2023/01/04/1816212.html?fbclid=IwAR2pH_uptxbWLo1WpRaelzelZRQ03OTAuc_kqCpuVIVObbj6Uy8_BjF9Ik:

¹⁹ Տե՛ս «Ազատ զրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդման 2023 թ. հունվարի 9-ի եթերը 19:25 րոպեից՝ <https://www.youtube.com/watch?v=pP6sG5p-b6M>:

շրջանում տպավորություն կարող է ստեղծել, որ ռուս խաղաղապահները բռնի ուժով են հսկում Արցախը, քանի որ զավթել նշանակում է բռնի ուժ գործադրել: Սա կարող է հանգեցնել ռուս խաղաղապահների հեղինակագրկմանը հասարակության մեջ: Երկրորդ՝ ատելության խոսքն ուղղված է Արցախի արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի դեմ: Նրան «վարձու գործակալ» պիտակավորելը հասարակության մեջ կարող է հակակրանք և վախ առաջացնել նախարարի անձի նկատմամբ: Երրորդ՝ ատելության խոսքն ուղղված է առհասարակ Արցախի իշխանությունների դեմ: «Մխիթել» և «բռնաբարել» արտահայտությունները հասարակության մեջ կարող են ձևավորել կոնկրետ կարծիք և համոզմունք, որ Արցախի իշխանությունները պարզապես եկել են վատնելու պետության ունեցվածքը: Հաղորդումն ունեցել է շուրջ 16.070 դիտում: Տիգրան Խզմայանն ազդեցության գործակալ է «FreeNews»-ի համար, քանի որ նա այս հեռուստաընկերության եթերի հիմնական հյուրերից է. «Ազատ գրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդման դիտարկված 63 եթերից առնվազն 4-ին մասնակցել է:

Սոցիալական մեդիայում ևս Արցախի իշխանությունները թիրախավորման կենտրոնում են եղել: Մասնավորապես՝ ատելության խոսքի մեծ ծավալ ուղղված է եղել Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի դեմ: Օրինակ՝ «in.am»-ն իր յուրօրյան ալիքում տեղադրել է Արցախի Հանրապետության պետնախարար Ռուբեն Վարդանյանի՝ մամուլի հեռավար ասուլիսից հինգ առանձին տեսանյութ՝ տարբեր վերնագրերով: Բոլոր տեսանյութերի տակ օգտատերերը թիրախավորել են Վարդանյանին՝ նրան անվանելով «ուռող», «ռուսի ագենտ», «մուտիլովզիկ», «չաթլախ», «սրիկա», «պուտլեռի

սիրուհի», «դալբայոր» ևն, տեսանյութերի տակ ամենից հաճախ գրված արտահայտությունը «թաթար ոռութ» պիտակավորումն է: Այս արտահայտությունը հանդիպել նվազագույնը 16 անգամ: Կարող ենք ասել, որ հասարակությունն իր անհանդուրժողականությունն է հայտնում ոչ թե Վարդանյանի գործունեությանը, այլ Վարդանյանի անձին՝ վիրավորանքներով նսեմացնելով նրան, ինչը հատկապես Լաչինի միջանցքի փակումից հետո կարող է կարծիք ձևավորել Վարդանյանի անձնային որակների վերաբերյալ: Մեկ այլ օրինակ. նույն լրատվականը հրապարակել է հարցազրույց Արման Բաբաջանյանի հետ, որը Վարդանյանին անվանում է «ինքնակոչ, խաբեբա, շառլատան»²⁰: Այս պարագայում արդեն ոչ միայն սոցիալական ցանցերի օգտատերերն են թիրախավորում Վարդանյանին, այլև քաղաքական գործիչը, որի խոսքը հասարակության մեջ կարող է կարծիք ձևավորել Վարդանյանի՝ խաբեբա լինելու վերաբերյալ: Հատկանշական է՝ Բաբաջանյանը որևէ ապացույց չի բերում, որ Ռուբեն Վարդանյանը խաբեբայությամբ է զբաղվում, ուստի այս խոսքերը կարող են ընդունվել որպես անձի նկատմամբ զրպարտություն: Վարդանյանը որպես խաբեբա ներկայացվում է նաև Վարդան Ղուկասյանի բլոգում, որն իր ուղիղ եթերի ժամանակ մասնավորապես նշել է. «Ռուբեն Վարդանյանը զբաղվել է փողերի լվացումով. սրա նման մախինատոր ֆինանսիստ չկա»²¹: Ղուկասյանը, բամբասանքից բացի, ամբողջ հաղորդման ժամանակ հայիոյանքներ է ուղղել

²⁰ Տե՛ս «Tin.am»-ի 2023 թ. հունվարի 12-ի հրապարակումը՝ <https://www.tin.am/3215271.html>:

²¹ Տե՛ս Վարդան Ղուկասյանի բլոգը՝ <https://www.youtube.com/watch?v=YjkWlOtOUv0&t=104s>:

Վարդանյանի հասցեին: Ռուբեն Վարդանյանը թիրախավորման կենտրոնում է եղել նաև Աննա Աբրահամյանի բլոգում, որն իր ուղիղ եթերի ժամանակ ասել է. «Բոլորը, ով պաշտպանում է Ռուբեն Վարդանյանին՝ անգլիական երկնքից ընկած անասունի ծնունդ, պետականամետ մտածողություն չունեցող եթիմներ են: Ինքը երկիրը ծախել ա»²²:

Հարկ է ընդգծել, որ, քաղաքական իրադարձություններով պայմանավորված, ասելության խոսքի թիրախում հայտնվել են նաև **արցախցիներն առհասարակ**: «in.am» լրատվականը ցուցադրել է կառավարության շենքի դիմաց քաջաթաղցիների՝ գումարի փոխհատուցման կամ բնակարանով իրենց ապահովելու պահանջով բողոքի ակցիան: Յուրօրվան հարթակում տեսանյութի տակ օգտատերերը թողել են գրառումներ, որոնք անհանդուրժողականության տարրեր են պարունակում արցախցիներ նկատմամբ: Արցախցիներին մեղադրում են երկիրը թալանելու համար, ինչպես, օրինակ, «*Эт карабахцикин вор таланел эн еркирн хи чек димум, ми кани миллион инч э драниц һамар*»: Օգտատերերն արցախցիներին հորդորում են վերադառնել «իրենց Արցախ» հրամայական նախադասություններով: Հանդիպել է նաև այսպիսի մեկնաբանություն՝ «*Ո՛ր եք գնալու, ո՛ւմ եք պետք*»²³: Անհանդուրժողական այս ոճի և բովանդակության գրառումները կարող ենք դիտարկել որպես արցախցիների թիրախավորում և նրանց դեմ ասելության գեներացում:

Քաղաքական հայացքներով պայմանավորված ասելության խոսք ուղղված է եղել նաև ընդդիմության դեմ:

²² Տե՛ս Աննա Աբրահամյանի 2023 թ. հունվարի 14-ի բլոգը՝ <https://www.youtube.com/watch?v=N2poFyYvsBM>:

²³ Տե՛ս «in.am»-ի 2022 թ. նոյեմբերի 24-ի հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=LMwGRi9RDCO>:

Ատելության խոսք է հնչել «FreeNews»-ի տարբեր հաղորդումների ընթացքում: Ընդդիմությունը հեռուստաալիքի տարբեր հաղորդումների ընթացքում որակվել է որպես «ահաբեկչական խումբ»: Այսպես՝ «Դե ինչ, այսօր Ազգային ժողովում քառօրյա նիստը վերսկսեց իր աշխատանքները. Ազգային ժողովը և ընդդիմությունն էլ ներկա էր, ընդդիմություն կոչված ահաբեկչական ուժերը ներկա էին»²⁴, «.....դե չենք կարող առանց մեր ընդդիմադիր իրենց հռչակած ահաբեկչական ուժերի»²⁵: Այս թեզը պարբերաբար կրկնվում է տարբեր հաղորդումների եթերների ժամանակ, ինչը խոսում է այն մասին, որ հեռուստաալիքն ունի կոնկրետ նպատակ՝ հասարակության մեջ ձևավորել կարծիք, ըստ որի՝ ընդդիմությունը վտանգավոր է: «FreeNews»-ի հաղորդումների ընթացքում ատելության խոսքն արտահայտվում է ոչ միայն վիրավորանքով, այլև ապատեղեկատվությամբ և բամբասանքով: Հատկանշական է, որ եթե սոցիալական մեդիայի կամ տպագիր մամուլի դեպքում *ապատեղեկատվությունը* կամ *բամբասանքը* ներկայացվում են որպես հավանական տեղեկատվություն, ապա այս հեռուստաընկերության պարագայում ապատեղեկատվությունը կամ բամբասանքը ներկայացվում են որպես իրական, միանշանակ, ճշգրիտ փաստ: Օրինակ՝ «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ընթացքում հաղորդավարն ասում է. «Արմեն Չարչյանը՝ Հայաստան

²⁴ Տե՛ս «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2022 թ. դեկտեմբերի 6-ի եթերը:

²⁵ Տե՛ս «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2022 թ. նոյեմբերի 14-ի եթերը 32:56 րոպեից:

դաշինքից՝ փրկիչներից մեր՝ Արցախի համար ուշքը գնացողներից, ստորագրել է կեղծ բժշկական փաստաթուղթ»²⁶: Նույն հաղորդման մեկ այլ եթերում ասվում է. «Է՞դ չեք դուք, Ղազինյաններ, խաբեքա Արսեն Բաբայաններ, չեկիստ Արթուր Վանեցյաններ, ծննդատինց երեխա գողացողներ»²⁷: Սա խոսում է այն մասին, որ «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ընթացքում հաղորդավարն ինքն է ընդդիմության ներկայացուցիչների դեմ ատելության խոսք ստեղծում, չստուգված տեղեկատվություն, ապատեղեկատվություն ու բամբասանք (ընդ որում այնպիսիք, որոնք անընդունելի են հասարակության համար, ինչպես «երեխա գողացող» պիտակավորումը) տարածում հասարակության մեջ հակակրանք և անվստահություն առաջացնելով ընդդիմության և նրա առանձին ներկայացուցիչների նկատմամբ: Հարկ է նշել, որ ընդդիմության ներկայացուցիչները նույնպես նույնացվում են աղբբեջանցիների ու թուրքերի հետ կամ մեղադրվում նրանց հետ աշխատելու համար. «Գեղամ Մանուկյան, քո անունն եմ տալիս, բայց ձեր ողջ թմի մասին եմ խոսում. իբր իրենց ազատական դրած ալիևյան թևն ա դա»²⁸, «Եկեք շատ չմանրամասնեմ, որովհետև ես վստահ եմ, որ ձեզանից շատերը աշխատում են թուրքական գործակալների հետ»²⁹:

²⁶ Տե՛ս «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2023 թ. հունվարի 24-ի եթերը 23:00 րոպեից:

²⁷ Տե՛ս «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2023 թ. փետրվարի 14-ի եթերը 37:00 րոպեից:

²⁸ Տե՛ս «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2023 թ. փետրվարի 9-ի եթերը 1:30 րոպեից:

²⁹ Տե՛ս «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2023 թ. հունվարի 25-ի եթերը 26:00 րոպեից:

Սոցիալական մեդիայում ընդդիմության դեմ ուղղված աստելության խոսք գեներացվել է հիմնականում օգտատերերի մեկնաբանությունների կամ սոցիալական մեդիայում գործող լրատվականների միջոցով, որոնք հրապարակել են իշխանության ներկայացուցիչների ֆեյսբուքյան գրառումները կամ ելույթները, որոնցում առկա է աստելության խոսք: Օրինակ «1-in.am»-ը հրապարակել է ԱԺ պատգամավոր, «Հայաստան» խմբակցության անդամ, ՀՀԴ անդամ Աղվան Վարդանյանի ելույթը Ազգային ժողովի ամբիոնից՝ «*Երկու լավ նորություն ունեմ. Աղվան Վարդանյան*» վերնագրով՝ և ֆեյսբուքյան էջում, և՛ Յություբում: Ֆեյսբուքի և Յություբի օգտատերերը պատգամավորին թիրախավորել են վիրավորական արտահայտություններով և հայիոյանքներով՝ նրան անվանելով «կոլխոզի եգ», «որկրամուլ գիբիլ», «անատամ կենդանի», «ջիուդ» ևն³⁰: Սակայն, բացի պատգամավորի անձը թիրախավորելուց, օգտատերերի գրառումներն ընդհանուր առմամբ աստելության խոսք են արտահայտում ՀՀԴ անդամների՝ որպես քաղաքական ուժի դեմ: Օգտատերերն օգտագործել են նաև «ջիուդ» եզրույթը պատգամավորին վիրավորելու համար. դա հակասեմիտիզմի դրսևորում է:

«1in.am»-ը հրապարակել է Նյութ՝ «*Իշխան Սաղաթեյանին դրդում են քաղաքական ոչնչացման. Ալեն Սիմոնյան*» վերնագրով: Ալեն Սիմոնյանը հանրային դեմք է. այս դեպքում՝ նա կոնկրետ կարծիք է տարածում Իշխան Սաղաթեյանի մասին: Նյութի մեկնաբանությունները ողողված են Իշխան Սաղաթեյանի դեմ ուղղված աստելության խոսքով և Ալեն Սիմոնյանին ուղղված գովեստի խոսքերով: Ատելության

³⁰ Տե՛ս «1in.am»-ի 2022 թ. դեկտեմբերի 23-ի հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=5PEU94xBKn4>, <https://fb.watch/hCxq5ngG1J/>:

խոսքի նման դրսևորումները կարող են նսեմացնել Սաղաթեյանի դերը հասարակության մեջ և հակակրանք առաջացնել թե՛ Սաղաթեյանի և թե՛ այն քաղաքական ուժի նկատմամբ, որը ներկայացնում է Սաղաթեյանը:



1.1. Հասարակական-քաղաքական գործիչների դեմ ուղղված ատելության խոսք

Մշտադիտարկված ժամանակահատվածում ատելության խոսքի թիրախում են հայտնվել նաև մի շարք հասարակական-քաղաքական գործիչներ՝ **պայմանավորված ինչպես նրանց հասարակական-քաղաքական հայացքներով, այնպես էլ հասարակական ակտիվություն ցուցաբերելու հանգամանքով:**

Դիտարկված ժամանակաշրջանում ատելության խոսքի թիրախում հայտնվել է **ԱԺ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը:** Սուքիասյանին ուղղված ատելության խոսքը հիմնականում կապված է եղել նրա գործարարական գործունեության հետ: Օրինակ՝ 5-րդ ակիբի «Լուրերի թողարկում» հաղորդման ժամանակ մատնանշվում է Սուքիասյանի մականունը՝ «գռզո», ինչը հասարակության շրջանում դրական իմաստով չի ընկալվում, թողարկման մեջ մասնավորապես նշվում է. «*ինչպես է «Գռզոն» բողոքում թալանից, «այդ ժամանակ պատգամավորը «Գռզո»*

մականունով հայտնի օլիգարխ էր»³¹ Մեկ այլ օրինակում Աժ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը ճեպագրույց է անում լրագրողների հետ, որտեղ բղավում է լրագրողների վրա և խոսում շատ բարձր տոնայնությամբ: Տեսանյութը ասելության խոսք չի պարունակում, սակայն ֆեյսբուքյան և յութուբյան հարթակներում օգտատերերը վիրավորական գրառումներ են թողել պատգամավորի հասցեին նշելով «Դեմքիցդ երևում է: Թե ինչ զգվելի ես», «Կլոուն»: Մեկ այլ օրինակում օգտատերերը թողել են վիրավորանք, հայիոյանք պարունակող մեկնաբանություններ ԶԶ իշխանությունների և պատգամավորի հասցեին և բռնության կոչեր, ինչպես օրինակ՝ «Սրան պետք է վերացնել ընտանիքով հանդերձ»: Օգտատերերը որպես վիրավորական եզրույթ օգտագործում են նաև «թուրք» բառը:³² Սուքիասյանն ընդհանուր առմամբ թիրախավորվել է առնվազն 7 անգամ:

Գործարարական գործունեությամբ պայմանավորված ասելության խոսքի թիրախում է հայտնվել նաև **Սամվել Ալեքսանյանը**: Մասնավորապես «Իրավունք» թերթի 22 (3633) համարում առկա է ծաղրանկար, որտեղ պատկերված է Սամվել Ալեքսանյանը՝ ծաղրանկարին կից գրված է «Մուտացիա», ապա նշված է. «ԶՈՎԵՐ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՄԻԹԻԻ» ՄԻՋԵՎ ԸՆԹԱՑՈՂ ԿԱՂԱՄԲԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ) Ըստ տնտեսագետների՝ Լֆիկին արագիլը չի բերել բիզնես դաշտ, այլ կաղամբի միջից են գտել:³³ Չնայած նրան, որ նյութը հրապարակված է «Զաղաքական հումոր» ենթաբաժնում, այնուամենայնիվ

³¹ Տե՛ս 5-րդ ալիքի «Լուրերի թողարկում» հաղորդման նոյեմբերի 7-ի եթերը 27:47 և 28:57 րոպեներից:

³² Տե՛ս 168.am -ի նոյեմբերի 7ի հրապարակումը:

³³ Տե՛ս «Իրավունք» թերթի փետրվարի 28-ի 22 (3633) համարը:

գրառման մեջ դարձյալ նշվում է Ալեքսանյանի մականունը, ինչը կարող է առաջացնել բացասական ընկալում հասարակության կողմից: Դրանից բացի «մուտացիա» բառն այս պարագայում օգտագործված է վիրավորական բովանդակությամբ և ծաղրանկալում Ալեքսանյանին երեխայի մարմնով կաղամբի մեջ պատկերելը կարող է ընկալվել որպես վիրավորանք և անձի հեղինակագրկման փորձ:

Ատելության խոսք նշված ժամանակաշրջանում ուղղվել է նաև **Դավիթ Խաժակյանին, Դանիել Իոհաննիսյանին, Ստյոպա Սաֆարյանին:**

«Իրավունք» թերթում տպագրված հոդվածում Դավիթ Խաժակյանին ատելության խոսքը պայմանավորված է Նիկոլ Փաշինյանի հետ ծառատունկի մասնակցությամբ: Հոդվածում մասնավորապես նշվում է. «*ԼՅԿ-ական հայտնի «ստուկաչ» Դավիթ Խաժակյանը առաջին պատահածից բաժիխլեց, որպեսզի Նիկոլի հետ միասին ծառ տնկի: Հուսանք, որ այդ ծառը չար պտուղ չի տա, չի ներծծի այդ երկուսի զգվելի էներգետիկան:*»³⁴ Այս պարագայում ատելության խոսքի թիրախում են և՛ Դավիթ Խաժակյանը և՛ Նիկոլ Փաշինյանը: «Զգվելի էներգետիկա» արտահայտությունը վիրավորանք է և կարող է ընթերցողի մոտ առաջացնել բացասական տրամադրվածություն Խաժակյանի հանդեպ: «Իրավունք» թերթի մեկ այլ համարում էլ թիրախավորվել է Դանիել Իոհաննիսյանը: Թերթում մասնավորապես նշվում է. «*Տխրահռչակ Դանչիկի անունը երևում է մի խոշոր գործակալական սկանդալի կենտրոնում: Տխրահռչակ Դանիել Իոհաննիսյանը վերջերս մեկումեջ քննադատում է*

³⁴ Տե՛ս Իրավունք թերթի նոյեմբերի 8-ի համարը:

Նիկողիս:»³⁵ Նախ վերլուծականի հեղինակը Իոննիսյանին անվանում է «Դանչիկ» վիրավորական մականունով (սման ձևակերպում առկա է նաև թերթի նույնբերի 15-ի համարում) ,ապա նրան մեղադրում գործակալության և լրտեսության մեջ: Մի կողմից սա ատելության խոսք է ուղղված Իոննիսյանին, մյուս կողմից՝ տարածելով ապատեղեկատվություն վերլուծականի հեղինակը ընթերցողի մոտ առաջացնում է ատելության զգացողություն Իոննիսյանի նկատմամբ, քանի որ գործակալությունն ու լրտեսությունը հասարակության կողմից դատապարտելի երևույթներ են և բնականավար անձի շուրջ տարածվող նման տեղեկատվությունը բացասական պետք է ընկալվի հասարակության կողմից: «Իրավունք» թերթի հոդվածներում ատելության խոսքի թիրախում հայտնվել են նաև Սասուն Միքայելյանն ու Ստյոպա Սաֆարյանը: Թերթի փետրվարի 18-ի համարում նշված է. «Սասուն Միքայելյանն ու Ստյոպա Սաֆարյանը ճանաչվեցին քույր ասկարիղներ»³⁶, գրառումն ուղեկցված է նաև ծաղրանկարով: Նման ձևակերպումները, որոնք կարծես մատնանշում են Սասուն Միքայելյանի և Ստյոպա Սաֆարյանի վտանգավորությունը, նպատակ ունեն հասարակության մեջ թուլացնելու վերոնշյալ անձանց դիրքը և առաջացնելու վախ այս անձանց նկատմամբ: Մեկ այլ օրինակում, դարձյալ նույն թերթը թիրախավորել է Ստյոպա Սաֆարյանին՝ ծաղրանկարի և «քաղաքական հումորի ձևով», նրան պատկերել են բանտում նշելով՝ «ՌԴ դատախազությունում վարույթ է ընդունվել նոր գործ, որպեսզի քրեական հետապնդում սկսեն Սաֆարյան Ստյոպիկի դեմ մամուլի լուրերի կապակցությամբ: Բացեցին՝

³⁵ Տե՛ս Իրավունք թերթի նույնբերի 30-ի 3600 (126) համարը:

³⁶ Տե՛ս Իրավունք թերթի փետրվարի 18-ի համարը:

տեսան գրված է զակոնում, որ Ստյոպիկը Սիբիր է գնում:»³⁷
Նման ձևակերպումները, անվան փոփոխությունը՝ ծաղր են
անձի նկատմամբ և նպատակ ունեն ստեմացնելու անձին՝
հասարակության մեջ թուլացնելով նրա դիրքը:

³⁷ Տե՛ս Իրավունք թեթրի ևոյեմբերի 15-ի համարը:

Ամփոփելով



«Քաղաքական հայացքներով պայմանավորված արելության խոսքի դրսևորումներ» գլուխը՝

անհրաժեշտ ենք համարում նշել, որ քաղաքական հայացքներով պայմանավորված ատելության խոսքը **հեռուստահաղորդումների** պարագայում «Երկիր մեդիա», «5-րդ ալիք» և «Yerevan Today» հեռուստաալիքներում, հիմնականում ուղղված է իշխանությունների, Նիկոլ Փաշինյանի և նրա համակիրների դեմ, իսկ «FreeNews» հեռուստաալիքի հաղորդումներում հիմնականում ընդդիմության ներկայացուցիչների և նախկին իշխանությունների դեմ:

Տպագիր մամուլում դիտարկված երեք թերթերի ստեղծած ատելության խոսքն ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի և նրա համակիրների դեմ: Դիտարկված ժամանակահատվածում «Իրավունք» թերթն ամենաշատն է տարածել քաղաքական հայացքներով պայմանավորված ատելության խոսք՝ 44 տեքստի և 24 ծաղրանկարի միջոցով: Տպագիր մամուլում քաղաքական ուղղվածությամբ ատելության խոսքի ամենափոքր ծավալով բովանդակությունը հայտնաբերվել է «Առավոտ» թերթում 5 դեպք, իսկ «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել է քաղաքական ուղղվածությամբ ատելության խոսք պարունակող 15 հոդված: Հատկանշական է, որ «Իրավունք» թերթում ատելության խոսք գլխավորապես տարածվում է քաղաքական սատիրայի, «Ժողովուրդ» օրաթերթում բամբասանքների միջոցով: Վերջինս բամբասանք պարունակող նվազագույնը 12 նյութ է տարածել:

Սոցիալական մեդիան տարբերվում է վերոնշյալ հարթակներից, քանի որ այս պարագայում քաղաքական ուղղվածությամբ ատելության խոսքը հիմնականում տարածել է ՋԼՄ-ն, այսինքն՝ այս հարթակում դիտարկված լրատվականները հիմնականում տարածել են քաղաքական որևէ գործչի ֆեյսբուքյան գրառումները կամ լայվերը: Այս հարթակներում քաղաքական ուղղվածությամբ ատելության խոսքը տարածվել է նաև օգտատերերի մեկնաբանությունների միջոցով:

**Քաղաքական հայացքներով պայմանավորված
ատելության խոսքի հիմնական թիրախում են եղել.**

Նիկոլ Փաշինյանը

Նիկոլ Փաշինյանի համակիրները, ընտրագանգվածը,
ընտանիքը

ՔՊ-ն

Կուսակցության անդամները, կուսակցության անդամ
պաշտոնատար անձինք

Արցախի իշխանությունները

Դավիթ Բաբայանը, Ռուբեն Վարդանյանը, Արայիկ
Չարությունյանը, Արցախի նախկին իշխանությունները

Ընդդիմադիր գործիչները

Իշխան Սաղաթեյանը, Արծվիկ Մինասյանը, Սեյրան
Օհանյանը, Արամ Վարդանյանը, Աննա Մկրտչյանը

Նախկին իշխանությունը

Ռոբերտ Քոչարյանը, Արմեն Աշոտյանը, Սերժ Սարգսյանը



ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Պետական ինստիտուտների դեմ ուղղված ատելության խոսքը պետական մարմինների և նրանց գործունեության դեմ է՝ նպատակ ունենալով հեղինակազրկել տվյալ մարմինների գործունեությունը և ցույց տալու դրա բացասական կողմերը: Պետական մարմիններից ատելության խոսքի թիրախում հայտնվել են հիմնականում **ՀՀ Նախագահը, ոստիկանությունը, կառավարությունը, Պաշտպանության նախարարությունն ու անձնապես նախարարը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, դատարանները:**

Դիտարկված ժամանակահատվածում ատելության խոսքի թիրախում է հայտնվել նաև ՀՀ Նախագահ Վահագն Խաչատուրյանը: «Իրավունք» թերթում հրապարակված ծաղրանկարում Խաչատուրյանն ու Խաչատուր Սուքիասյանը պատկերված են «Տժվժիկ» ֆիլմի հերոսների դերով, քննարկում են ՍԻԼ Պլազայի սեփականաշնորհման գործընթացը, որտեղ Սուքիասյանը Խաչատուրյանին ասում

Է. «Վահագն աղբար, կհիշե՞ս ան փողը, աղէկ էր...»³⁸ Նման ձևակերպումներն ու ծաղրանկարը միտում ունեն ցույց տալու Սուքիասյանի և Խաչատուրյանի ֆինանսական կապը միմյանց հետ՝ հասարակության մեջ առաջացնելով անվստահություն տվյալ անձանց նկատմամբ: Մեկ այլ օրինակում Յրապարակ-ը հրապարակել է Էդիկ Անդրեասյանի հոդվածը (լրատվականի հեղինակ), որտեղ վերջինս անդրադարձել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ նշելով նաև նրա հարաբերությունները նախագահ Խաչատուրյանի հետ: Հոդվածում մասնավորապես նշված է. «Նիկոլը մի նախագահ է նշանակել՝ Վահագն Խաչատուրյան: Սա էլ մուգիկայի գծով է շինում Նիկոլին՝ սրա-նրա մոտ ամենամանպատեհ պահերին դաշնամուր նվագելով: Աչքիս՝ նոր Арам Хачатурян ունենք՝ վրաներս խաբար չկա»:³⁹ Այս պարագայում հեղինակը ցանկանում է ցույց տալ Փաշինյանի և Խաչատուրյանի կապը՝ սատիրայի տեսքով: Այստեղ ակնհայտ չէ ատելության խոսքը, սակայն հոդվածի համատեքստում հեղինակը միտում ունի հեղինակագրկելու Փաշինյանին և համախոհ անձանց՝ այս պարագայում Խաչատուրյանին նույնպես:

Ոստիկանության դեմ ուղղված ատելության խոսքն առավել ցայտուն դրսևորվել է **գոհված ծնողների հարազատների բողոք-հավաքների ժամանակ՝ Եռաբլուրում հունվարի 28-ին վարչապետի անվտագությունն ապահովելուց հետո**: Ատելության խոսքի նման դրսևորումներ կան թե՛ հեռուստահաղորդումներում, թե՛ սոցիալական մեդիայում:

³⁸ Տե՛ս Իրավունք թերթի նոյեմբերի 18-ի 3595 (121) համարը:

³⁹ Տե՛ս Hraparak.am-ի հունվարի 21-ի համարը: Հասանելի է այստեղ՝ <https://hraparak.am/post/3d52a13b732c4f290d8ef0ed5e64b4e9>

«Yerevan Today» հեռուստաալիքի «Կարճ ասած» հաղորդման ժամանակ հաղորդավարն ասում է հետևյալը. «Ոստիկանների գործունեությունը անմարդկային է, որ տեսանկյունից ուզում ես վերցրու, անբարոյական քայլ է, երբ դու մարդկանց, այն էլ քեզ պաշտպան զինվորի ծնողին ծեծում ես, հետո նրան դատի ես տալիս: Սա լրիվ նման է Նիկոլի քայլին, որ մարդկանց տանում է մահվան, հետո գնում գերեզմաններին չորքում. չեն թողնում, ծեծելով է չորքում: Սա լրիվ նման է այն մարդասպանի քայլին, որ իր զոհի հուղարկավորությանը գնում է գերեզմանոց՝ ցավակցելու»⁴⁰: Հաղորդավարը թիրախավորում է և՛ ոստիկաններին, և՛ Նիկոլ Փաշինյանին՝ նրանց քայլերը պիտակավորելով «անբարոյական»: Հաղորդավարը օրինակներ է բերում ոստիկանների և զինվորի ծնողների բախումներից, որ զգայուն թեմա է հայ հասարակության համար և ատելություն կարող է առաջացնել հասարակություն մեջ՝ ուղղված ոստիակնության դեմ: Բացի սա՛ Փաշինյանը և ոստիկանությունը համեմատվում են մարդասպանի հետ, ինչը կարող է հասարակության մեջ առաջացնել վախ և անվստահություն ոստիկանության նկատմամբ: Նույնաբովանդակ ատելության խոսքի հանդիպում ենք նաև սոցիալական մեդիայում: Օրինակ՝ «168.am»-ը տարածել է Ավետիք Իշխանյանի հետևյալ միտքը. ««Պարեն կոչվող վայրենի ենիչերիները համոզված լինելով իրենց անպատժելիության մեջ, ոհմակային հարձակումով հաշվեհարդար են տեսնում անպաշտպան մարդկանց հետ». Ավետիք Իշխանյան»⁴¹: Լրա-

⁴⁰ Տե՛ս «Կարճ ասած» հաղորդման 2022 թ. նոյեմբերի 25-ի եթերը 9:59 րոպեից:

⁴¹ Տե՛ս «168.am»-ի 2023 թ. նոյեմբերի 28-ի հրապարակումը <https://168.am/2022/11/28/1803253.html?fbclid=IwAR17esZFPxGOuNilpUB>

տվականը որպես նյութի վերնագիր ընտրել է հենց վերոնշյալ հատվածը, ինչը խոսում է այն մասին, որ լրատվականն այս պարագայում ոչ միայն աստելության խոսք է տարածում է, այլև աստելության խոսք պարունակող նախադասությունը վերնագիր դարձնելով՝ հասարակության ուշադրությունը էլ ավելի է կենտրոնացնում աստելության խոսք պարունակող նյութի վրա: Նույն արտահայտությունը երկրորդ անգամ իրավապաշտպանը կրկնել է նյութի հաջորդ հատվածներում. *«Իսկ ինչո՞վ են տարբերվում պարեկ ենիչերիներն իրենց ադրբեջանցի եղբայրներից»:* Չարկ է ընդգծել, որ ենիչերիներն ասոցացվում են դաժան հրոսակների հետ, և նման համեմատությունը կարող է հասարակության մեջ կարծիք ձևավորել ոստիկանների դաժանության մասին: Իրավապաշտպանը ոստիկաններին ներկայացրել է որպես ադրբեջանցիների եղբայրների, ինչը նպատակաուղղված է հասարակությանը ցույց տալու ոստիկանություն (իշխանական համակարգ) – Ադրբեջանի հնարավոր համագործակցությունը: **Բանակի օրվա հետ կապված իրադարձությունները** նույնպես աստելության խոսքը սրել են, օրինակ՝ «168.am»-ը հրապարակել է ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Չակոբյանի ֆեյսբուքյան գրառումը, որտեղ հեղինակը նշում է. *«Ուշադրություն դարձրեք հատկապես Ոստիկանությանը հատկացված գումարի չափին և պարզ կդառնա, թե ինչու գունավոր բերետավորները պետք է վիժվածքի մոտ գելիոտին աշխատող ոստիկանապետի հրահանգով բռնություն գործադրեին զոհվածների հարազատների նկատմամբ: Իսկ*

a_dOqniH4lQkxEJeKd1fV3Vu6Tk0MAE8sGADNRU,<https://www.facebook.com/168Armenia/posts/pfbidOvhBd6YMd8Xdhw4mmp9MLSAKsn5jp34rb25Y9AguVWBxUD1bRxpJ1e9baZ1ZVDQy9l>:

ծնողների պահանջը մեկն էր՝ թույլ չտալ, որ հրենց զավակներին գլխաստող դահիճը մոտենա զոհվածների շիրիմների»⁴²:

168.am
Բաժիններ՝ [Քաղաքականություն](#)
© 13:52 Հունվար 26 2023 | Գիտվել է՝ 128
Like 10 Share

«Ուշադրություն դարձրեք հատկապես Ոստիկանությանը հատկացված գումարի չափին». Ռուբեն Հակոբյան

Պատկեր 3.

«Ուշադրություն դարձրեք հատկապես Ոստիկանությանը հատկացված գումարի չափին». Ռուբեն Հակոբյան
<https://168.am/2023/01/26/1824034.html>

⁴² Տե՛ս «168.am»-ի 2023 թ. հունվարի 26-ի հրապարակումը՝ https://168.am/2023/01/26/1824034.html?fbclid=IwAR2OO9qq_GHLrGPgE xaEWCyPSHRAKfCoqZCBs7KSX-lp1yeL5FsBZ02OJ6Y, <https://blog.168.am/blog/426673.html?fbclid=IwAR1tahe9xbi-3gbuBmwI3K8XnU7JV6FHaJiqDEHaHAqhnyE33f4yCJ7970>, <https://www.facebook.com/168am/posts/pfbid02gjjyAytmKy18MSKRxk4BZtMApMWND38PGujqmVYN0HEWWr2S85UCyR4K5fb7WKvAbl>:

Այստեղ հեղինակը թիրախավորում է ոչ միայն ոստիկաններին, այլև Նիկոլ Փաշինյանին՝ նրան անվանելով «գլխատող դահիճ», «վիժվածք»: Ձոհված զինվորների ծնողները մեծ դեր ունեն հասարակության մեջ, և վերոնշյալը բավական նուրբ և զգայուն թեմա է քաղաքացիների համար, ուստի սման բովանդակությունը կարող է հակակրանք և ատելություն առաջացնել ոստիկանության, նաև Նիկոլ Փաշինյանի անձի նկատմամբ: Բացի այդ՝ քաղաքական գործիչը խոսում է ոստիկանության ստացած գումարների մասին, ինչից ընթերցողը կարող է ենթադրել, որ ոստիկանները գումար են ստանում զինվորների ծնողների նկատմամբ բռնություն գործադրելու համար: Հատկանշական է, որ թեև «168.am»-ի լրագրողները չեն նյութի հեղինակը, այնուամենայնիվ նյութը տարածվել է լրատվամիջոցի երեք հարթակներում, ինչը խոսում է այն մասին, որ այս պարագայում սոցիալական մեդիայում գործող լրատվականը նպաստում է ատելության խոսքի տարածմանը:

Պետական մյուս մարմինը, որի դեմ ատելության խոսք է ուղղված, **ՊՆ-ն** է, հիմնական թեման՝ **բանակի վերաբերյալ հարցերը**: Հարկ է նշել, որ **Ազատ գյուղի ՊՆ գործմասի պայթյունից հետո** այս պետական մարմնի, նախարար Սուրեն Պապիկյանի և վարչապետ Նիկոլ Փաշինյանի դեմ ուղղված ատելության խոսքի ծավալներն աճում են: «Երկիր մեդիա», «5-րդ ալիք», «Yerevan Today» հեռուստաալիքների հաղորդումներում թիրախավորվել են հիմնականում ՀՀ իշխանությունները, Սուրեն Պապիկյանը և Նիկոլ Փաշինյանը: Հեռուստահաղորդումներում ատելության խոսքն ունի հե-

տևյալ բովանդակությունը. «Պաշտոնական վարկածին հավատալ միշտ պետք է և կարելի է, սակայն, եթե պաշտոնական վարկածը ցինիկ է, և զուրկ է դատափորձաքննական ամբողջականությունից, ապա հավատալ պաշտոնական վարկածին՝ ուղղակի հանցագործություն է»⁴³, «Վարդենիսի զորամասում տեղի ունեցած ողբերգությունը նշվազագույնը այս իշխանությունների թույլ տված հանցավոր անփութության հետևանք է»⁴⁴, «Եկար, ժողովրդի աչքը փակեցիր, կլուքնիկ կերցրիր զինվորներին, էսօր զինվորին խաշլամա ես անում»⁴⁵: Սրանցից վերջինը փողոցում հարցախույզի ենթարկված քաղաքացու կարծիքն է, ինչը խոսում է հասարակական անհանդուրժողականության մասին: Հարկ է ընդգծել, որ վերոնշյալ հաղորդումները հեռարձակվել են ոչ միայն դեպքի, այլև դրան հաջորդած օրերի ընթացքում, ինչը խոսում է թեմայի շուրջ ատելության խոսքի շարունակական ստեղծման և տարածման մասին: Նման բովանդակությամբ ատելության խոսքը հասարակության մեջ կարող է հակա-իշխանական տրամադրություններ և պաշտոնական տեղեկատվության նկատմամբ անվստահություն ձևավորել: Զո-

⁴³ Տե՛ս «Հարցագրույց» հաղորդման 2023 թ. հունվարի 24-ի եթերը 1:00 րոպեից՝

<https://www.youtube.com/watch?v=BLSQQfdFaeU&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lRRNgm&index=2>:

⁴⁴ Տե՛ս «Մամուլի տեսություն» հաղորդման 2023 թ. հունվարի 20-ի եթերը 3:10 րոպեից՝

<https://www.youtube.com/watch?v=ksTOaD5tOcE&list=PLnu1d6PlghpRz5chndFTC8fWpeer7ljbJ&index=3>:

⁴⁵ Տե՛ս «Լուրերի թողարկում» հաղորդման 2023 թ. հունվարի 21-ի եթերը 16:00 րոպեից՝

<https://www.youtube.com/watch?v=sqgxeaHscUU&list=PLnu1d6PlghpR59qzPTKdEHANAVRPwn5V9&index=13>:

րամասի պայթյունից հետո «FreeNews» հեռուստաընկերությունն ատելության խոսքի թիրախ է դարձնում զորամասի կապիտանին: Այսպես, «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ժամանակ հաղորդավարն անում է հետևյալ արտահայտությունները, որոնք ատելության խոսք են պարունակում. «*սրա նման անասունները*», «*.....Էս տեսակ ապուշներին ո՞րտեղից եք գտել ու լցրել բանակ: Ինչքա՞ն մարդ եք վանել բանակից ու էս անասուններով լցրել*»⁴⁶:

Հասարակական անհանդուրժողականությունը դրսևորվել է նաև սոցիալական մեդիայի միջոցով, որտեղ օգտատերերը թողել են մեկնաբանություններ՝ իշխանություններին և Սուրեն Պապիկյանին ուղղված: «*lin.am*»-ի «*Վառարանը վառելիս օգտագործել են արգելված միջոց. Սուրեն Պապիկյան*» վերնագրով նյութի (որտեղ նախարարը խոսում է զորամաս-կացարանում բռնկված հրդեհի դժբախտ պատահարի մասին) տակ օգտատերերը թիրախավորել են Սուրեն Պապիկյանին և իշխանություններին հետևալ արտահայտություններով՝ «*տականքներ*», «*անողնաշարավորներ*», «*ոչ-խար*», «*չարիքի հանցախումբ*», «*խոզ*», «*վիժվածք*», «*թաղվածներ*», «*թաղվեք դուք*», «*սատկեք դուք*», «*թույն կեր սատկի*», «*ծեր նմանների քոքը կտրենք*», «*թափթփուկներ*», «*դուք պետք ա վառվեիք*», «*եզի ծնունդներ*», «*ցեղասպաններ*», «*մահաբեր հրեշավոր ստախոսներ*», «*դավաճաններ*», «*գրողի բաժին դառնաք*» ևն⁴⁷: Հնչել են նաև բռնության կոչեր՝ Սուրեն

⁴⁶ Տե՛ս «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2023 թ. հունվարի 31-ի եթերը 9:50, 10:20 րոպեներից:

⁴⁷ Տե՛ս «*lin.am*»-ի 2023 թ. հունվարի 19-ի հրապարակման մեկնաբանությունները՝

<https://www.facebook.com/lin.am/posts/pfbid0VHe8VwDRjKp79SV6LastTkaTg7cZxAMoJ9wEAmBTUBwiU8SLw2YniPgrDnTKemiJI>:

Պապիկյանին կամ իշխանությանը վառելու վերաբերյալ՝ «ծեզ պետք ա վառենք»: Բանակն ատելության խոսքի թիրախում է եղել Նաև բլոգների դեպքում: Վարդան Ղուկասյանն իր ուղիղ եթերի ժամանակ Նշել է. «Չայաստանի բանակը ամենաչմո բանակն ա տարածաշրջանում, բայց ամեն քայլի վրա եկեղեցի եք կառուցում»⁴⁸: Այս պարագայում ատելության խոսքն ուղղված է թե՛ բանակի, թե՛ եկեղեցու դեմ: Նման արտահայտությունները կարող են հասարակության մեջ ձևավորել կարծիք բանակի թուլության և անմարտունակության մասին, ինչն էլ կարող է իր հերթին առաջացնել անպաշտպանության զգացողություն և այդ իրավիճակում ամենուր մեղավորների փնտրտուք:

«5-րդ ալիք»-ի «Չարցագրույց» հաղորդման տարբեր եթերներում հնչել են մեղադրականներ՝ ուղղված Նիկոլ Փաշինյանին: Փաշինյանին՝ որպես վարչապետի, և նրա ղեկավարած իշխանությանը մեղադրում են «բանակը քանդելու», «հակապետական քաղաքականության», «պետական մարմինները քանդելու» ևն համար. «Իրենք [իշխանությունները] Նպատակաուղղված ձևով կազմաքանդում են զինված ուժերը: Կազմաքանդել են արդեն և շարունակում են կազմաքանդել, որովհետև վտանգ են տեսնում Նիկոլ Փաշինյանի անձնական իշխանության համար: Սա տիպիկ բռնապետական գործելաոճ ա»⁴⁹, «Այո, այս ճգնաժամը բացառապես

⁴⁸ Տես Վարդան Ղուկասյանի ուղիղ եթերը՝
<https://www.youtube.com/watch?v=Sb1ds2InCt4>:

⁴⁹ Տես «Չարցագրույց» հաղորդման 2023 թ. հունվարի 23-ի եթերը 16:00 րոպեից՝
https://www.youtube.com/watch?v=AWwCRO_s5nw&list=PLnu1d6PIghpSgWw4r9CaY9aQmR4IRRNgm&index=4:

Նիկոլ Փաշինյանի տգետ, հակապետական քաղաքականության հետևանքն է»⁵⁰, «Եկել են իշխանությունը տասնութ թվականին զավթել են որպեսզի Արցախը տային, պլանները տապալվեց, որովհետև ռուսներն այնտեղ ներկայություն ունեցան, հիմա փորձում են Հայաստանի ամբողջ պետականությունն ու հայկական աշխարհը ջլատել, և չլինի այստեղ Հայաստանի Հանրապետություն, որը քարտեզի վրա կնշվի», «ՀՀ իշխանությունը զավթած անձինք լեղապատառ տարածքներ էին գիջում»⁵¹, «Ըստ մամուլի հրապարկումների՝ ԶՊ կեղծված ընտրության հեղինակներից մեկն էլ ԶՊ-ական պատգամավոր Արփի Դավոյանն էր, որ հստակ ու կոնկրետ հրահանգներ էր տվել՝ ում պետք է ընտրել, ում ոչ: Այժմ, փաստորեն, ո՛չ ավել, ո՛չ պակաս, նա ընտրական գործընթացների մասին նախաձեռնությամբ է հանդես եկել»⁵²: Հատկաշահական է, որ վերոնշյալ օրինակներից վերջին երեքում կասկածի տակ է դրվում նաև ՀՀ իշխանության լեգիտիմությունը՝ ընթերցողին ցույց տալով, որ գործող իշխանությունը մի դեպքում զավթել է իշխանությունը, մյուս դեպքում կեղծել: Սա կարող է անվստահություն առաջացնել հասարակության մեջ կառավարության և Ազգային ժողովի նկատմամբ:

⁵⁰ Տես «Հարցազրույց» հաղորդման 2023 թ. հունվարի 18-ի եթերը 15:00 րոպեից՝


https://www.youtube.com/watch?v=hBv6FOb_LxU&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4IRRNgm&index=3:

⁵¹ Տես «Հարցազրույց» հաղորդման 2023 թ. փետրվարի 1-ի եթերը 20:00 րոպեից՝

<https://www.youtube.com/watch?v=dxQX4YRMb50&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4IRRNgm&index=3>:

⁵² Տես «Ժողովուրդ» օրաթերթի 2022 թ. նոյեմբերի 25-ի 170 (2650) համարը, էջ 1:

Դիտարկված ժամանակահատվածում ատելության խոսքի թիրախում է եղել նաև **դատական համակարգը**: Դատական համակարգի դեմ ատելության խոսք հիմնականում հրապարակվել է տպագիր մամուլում և ուղղված եղել **հակակոռուպցիոն դատարանների ստեղծմանը**:



Պատկեր 4.

Տիգրան Աթանեսյանի հարցազրույցը հակակոռուպցիոն գործեր քննող դատարանների մասին՝ հրապարակված «Առավոտ» օրաթերթի 2022 թ. նոյեմբերի 19-ի 193/6747 համարում:

Այսպես, «Առավոտ» օրաթերթի 2022 թ. նոյեմբերի 19-ի համարում տեղ է գտել Տիգրան Աթանեսյանի հարցազրույցը **ՀՀ հակակոռուպցիոն դատարանի վերաբերյալ**, որտեղ նշվում է. «Մենք հիմա ունենք ավելի մեծ վտանգ՝ հակակոռուպցիոն

դատարանները. սրանք ստալինյան «տրոյկաներն» են: Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ ցանկացած մարմնի, որի անունը դնում են հակակոռուպցիոն և այդ մարմինն ունի իշխանություն, դրանք դառնում են ամենակոռումպացվածը»⁵³: Նման բովանդակությամբ կյուլթն ընթերցողների շրջանում կարող է առաջացնել բացասական տրամադրվածություն հակակոռուպցիոն դատարանների և դրանց արդյունավետության նկատմամբ: Բացի այդ՝ հեղինակը համոզմունք է արտահայտում, որ այդ դատարանները վերջիվերջո դառնալու են կոռումպացված, ինչը հասարակության մեջ կարող է առաջացնել անվստահություն դատական համակարգի և հատկապես նոր ստեղծվող հակակոռուպցիոն դատարանների նկատմամբ: Անհրաժեշտ է նշել, որ թեև օրաթերթի լրագրողը չի արտահայտել միտքը, այնուամենայնիվ ՁԼՆ-ն հրապարակել է ատելության խոսք պարունակող կյուլթ և այն զետեղել համարի 1-ին էջում ուշադրություն գրավելու համար: Հարկ է ընդգծել, որ արդարադատության համակարգն անուղղակի կերպով ատելության խոսքի թիրախում է նաև «Կույր աշխարհ» և «Սերը թակարդում» հեռուստասերիալներում: Սերիալներում ներկայացված տեսարանները դատական համակարգերի կոռումպացված և անօրեն լինելու վերաբերյալ հաղորդագրություններն ունեն: Օրինակ՝ «Կույր աշխարհ» հեռուստասերիալում *դատավորը սպառնում է, որ «գործ կկարի վրան»* և *«բանտ կնստեցնի»*⁵⁴ (այս սերիան ունի մոտ 348.337 դիտում), մեկ այլ տեսարանում *դատավորին խնդրում են «իր պատվերով»*

⁵³ Տե՛ս «Առավոտ» օրաթերթի 2022 թ. նոյեմբերի 19-ի 193/6747 համարը, էջ 1:

⁵⁴ Տե՛ս «Կույր աշխարհ» հեռուստասերիալի 61-րդ սերիան 21:57 րոպեից:

աղջկան դուրս հանել ոստիկանությունից, իսկ դատավորն ասում է, որ մի բան կանի⁵⁵: Քանի որ սերիալի գործողությունները տեղի են ունենում Հայաստանում, հեռուստադիտողը կարող է սերիալում ցուցադրվող անօրինական գործողությունները նույնացնել իրական կյանքում արդարադատության համակարգում առկա իրավիճակի հետ:

Ատելության խոսքի թիրախում է նաև **ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանը**:

«Երկրի հյուրասարահ» հաղորդման հյուր Էլինար Վարդանյանը հնչեցնում է հետևյալ միտքը. «Ամենևին, հաստատ չեմ ցանկանում արձագանքել Էդմոն Մարուքյանի հայտարարություններին, որովհետև ես կարծում եմ, որ որքան էլ Էդմոն Մարուքյանն այսօր պետական պաշտոնյա է, այնուամենայնիվ Էդմոն Մարուքյանի հայտարարություններին արձագանքը կնշանակի լուրջ ընդունել Էդմոն Մարուքյանին: Ես չեմ արձագանքի Էդմոն Մարուքյանին, որովհետև ես լուրջ չեմ ընդունում իր հայտարարությունները»⁵⁶: Էլինար Վարդանյանի նման հայտարարությունը կարող է հասարակության մեջ ձևավորել անլուրջ վերաբերմունք հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանի նկատմամբ: Մարուքյանի դեմ ուղղված ատելության խոսք հնչեցրել է նաև «5-րդ ալիք»-ի «Հարցացրույց» հաղորդման հյուր Բորիս Մուրազին. «Նախ՝ Էդմոն Մարուքյանի մասին: Ինձ համար հասկանալի է՝ ինչու է ինքը խոսում, որովհետև որպես հատուկ

⁵⁵ Տե՛ս «Կույր աշխարհ» հեռուստասերիալի 61-րդ սերիան 15:16 րոպեից:

⁵⁶ Տե՛ս «Երկրի հյուրասարահ» հաղորդման 2022 թ. դեկտեմբերի 17-ի եթերը 20:55 րոպեից՝

<https://www.youtube.com/watch?v=eVVe30B9xyE&list=PLffuHBHoz5dpA1cMUJOb8TTeMKrof286r&index=4>:

հանձնարարություններով դեսպան ինքը ոչինչ անելու էսպես տեղ չունի. նա պետք է հանրային ատելության մի հատվածը իր վրա վերցնի, որպեսզի արդարացնի իր աշխատավարձը»⁵⁷: Այս հայտարարությունը նպատակ ունի հասարակությանը ցույց տալու, որ պետությունը նման պետական պաշտոնի կարիք չունի, և պաշտոնատար անձը՝ Էդմոն Մարությանը, ոչինչ չի անում, փոխարենն աշխատավարձ ստանում: Սա կարող է հանգեցնել հասարակության մեջ պետական մարմնի նկատմամբ անվստահության:

Պետական մարմիններից ատելության խոսք ուղղվել է նաև **ԱԻՆ-ի դեմ**: Սոցիալական մեդիայում գործող «Յրապարակ» լրատվականը հրապարակել է նյութ՝ «Անգրագիտությունը թավջյա ԱԻՆ-ում» վերնագրով (հեղինակ-լրագրող՝ Արեգ Մարգարյան), որտեղ հեղինակը իշխանականներին երկու անգամ անվանում է «թավջյա անգրագետներ»՝ մասնավորապես նշելով. «Դասական անգրագիտություն է տիրում ԱԻՆ-ում նախարար, փոխնախարարներ, մամուլի քարտուղար, հաղորդագրություններ գրող աշխատակից, և այսպես շարունակ»⁵⁸: Այս պարագայում հենց ՁԼՄ-ն, ատելության խոսք ստեղծելով, նպատակ ունի հասարակությանը ցույց տալու, որ ԱԻՆ-ում աշխատողներն արհեստավարժ չեն: Ավելին հողվածի հեղինակը թիրախավորում է միանգամից նախարարին, փոխնախարարին և մյուս աշխատակիցներին:

⁵⁷Տե՛ս «Յարցագրույց» հաղորդման 2023 թ. հունվարի 20-ի եթերը 10:00 րոպեից՝ <https://www.youtube.com/watch?v=yI9-dLndkkU&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4IRRNgm&index=5>:

⁵⁸ Տե՛ս «Յրապարակ»-ի 2022 թ. դեկտեմբերի 16-ի հրապարակումը՝ <https://hraparak.am/post/eb0e47ca5c3deb112c0d954438b5894f>:

ԱԻՆ-ի, կառավարության և Նիկոլ Փաշինյանի դեմ ուղղված ատելության խոսքի ծավալներն աճում են նաև **Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժից հետո, երբ Հայաստանի կառավարությունը որոշում է կայացնում փրկարարական ջոկատներ ուղարկել:** «Ազատություն լրատվականը հրապարակել է լուր՝ «Հայաստանն այսօր փրկարարական ջոկատներ է ուղարկում Սիրիա և Թուրքիա. ԱԳՆ խոսնակ» վերնագրով: Ֆեյսբուքյան օգտատերերը Թուրքիայի նկատմամբ ունեցած ատելության հողի վրա թիրախավորել են իշխանությանը՝ «թուրք», «թրքաբարո», «թուրքի լամուկներ» և համանման այլ արտահայտություններով: Օգտատերերը թիրախավորել են նաև հայ փրկարարներին «անհրճաստեր լրքի ծնունդներ», «թքեմ ձեր վրա», «թքեմ ձեր երեսին», «ոչխարներ», «զզվելի ու գարշելի փերիներ», «չաթլախներ», «անթասիբներ», «ով փրկի թուրքի թուլայա», «անհրճաստեր տականքներ», «ով գնա թուրք ա», «փալասներ», «գնաք ու հետ չգաք», «դիշովկաներ», «հայ ազգի դավաճաններ» և այլ արտահայտություններով: Մի մասն էլ հորդորել է հրաժարվել և չգնալ Թուրքիա⁵⁹: Նույնաբովանդակ ատելության խոսք կա նաև «Հրապարակ» թերթի «Հայ փրկարարաներին ուղարկում են Թուրքիա» վերնագրով նյութի մեկնաբանություններում, որտեղ ֆեյսբուքյան օգտատերերը Թուրքիայի նկատմամբ ատելության հողի վրա թիրախավորել են Թուրքիա գնացող հայ փրկարարներին՝ «նիկոլի

⁵⁹ Տե՛ս «Ազատության» 2023 թ. փետրվարի 7-ի հրապարակումը՝ <https://www.facebook.com/azatutyun/posts/pfbid031PUzRSVyCb2W6eezHcL4knQj2wHTEjEjCYy8dzRRdurkGx9V12d5vtNreyHBhjT5I>, https://www.instagram.com/p/CoXYDWPlzFr/?utm_source=ig_web_copy_link:

տրյապկեք», «անթասիբներ», «հայ կոչվելու իրավունք չունեք», «անինքնասեր», «անասուն», «դուք թուրքից էլ բեթար եք» «Նեռի վաստակներ», «թուրքի ծնունդներ», «պոռնիկներ», «փողով ծախված դեբիլներ», «թուրքի տակ պառկող բոզեր», «գնացողը թուրք ա», «անթասիբ շներ», «գնացողները հետ չգան», «գնացողները սատկեն» և այլ արտահայտություններով⁶⁰: Օգտատերերը ամոթանք են տվել փրկարարներին Թուրքիա գնալու համար և որոշ դեպքերում նրանց նույնացրել թուրքերի հետ: Մի քանի օգտատեր կոչ է արել փրկարարներին ահաբեկչություն կատարել Թուրքիայում:

Պետական մարմինների, հատկապես **Երևանի քաղաքապետարանի դեմ** ուղղված ատելության խոսքի ծավալներն աճում են նաև **Ամանորյա զարդարանքներից կառավարության շենքի քարերի վնասման մասին լուրերից** հետո: Թեման հատկապես թեժ քննարկվել է սոցիալական մեդիայում: Օրինակ՝ «Չրապարակ»-ը հրապարակել է հոդված, որտեղ Երևանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը նշում է, որ կառավարության շենքի վրա հին ժամանակներից մնացել են անցքեր և մետաղյա ձողեր. այդ ձևակերպումն ընտրվել է որպես վերնագիր: Ֆեյսբուքյան տիրույթում օգտատերերը Տիգրան Ավինյանի հասցեին գրել/հնչեցրել են վիրավորանքներ և հայհոյանքներ՝ նրան անվանելով «տգետ», «արտադրական կանեփ», «չաթլախ», «հիմար», «շիզո» ևն⁶¹:

⁶⁰ Տե՛ս «Չրապարակ» թերթի 2023 թ. փետրվարի 7-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/hraparak/posts/pfbid022tXPzBvWYVWpTtzt8hcegUz7AnfgimmvKQFq1Mvs9hUBZD12zhYTt9kRSQmgnEpVI:>

⁶¹ Տե՛ս «Չրապարակ»-ի 2022 թ. նոյեմբերի 2-ի հրապարակման մեկնաբանությունները՝



Պատկեր 5.

«Իրավունք» թերթի 2022 թ. դեկտեմբերի 6-ի 3602 (128) համարում տեղ գտած ծաղրանկար, որի ուղեկցող տեքստն աստիճայան խոսք է պարունակում

«168.am» կայքը թեմայի վերաբերյալ կյուրերի համար օգտագործել է հին լուսանկարներ, որոնք ներկա իրավիճակի հետ կապ չունեն, բայց շատ տպավորիչ են ընթերցողի համար և նրան գցում են մոլորության մեջ: Օգտագործվել է համացանցով տարածվող նկարը, որտեղ հեղույսը խրված է զարդաքանդակի մեջ, և ոչ մի կապ չունի Երևանի քաղաքապետարանի ամանորյա լուսավորության նախագծի հետ: Լրատվականը հրապարակել է չորս հոդված, որ վերաբերում

<https://www.facebook.com/hraparak/posts/pfbidOzRy8aFLrytuVCGj9AaBKoacVYR8j3aSqbWB5yiaEAHNwQ8MXtHTSLwCiVRqgPuBFi>:

Է Կառավարության շենքի լույսերի մոնտաժման աշխատանքներին⁶²: Այս պարագայում լրատվականն ատելության խոսք է տարածել *ապատեղեկատվության* միջոցով, որն ուղղված է եղել հասարակության ուշադրությունը քաղաքապետարանի և կառավարության գործունեության բացասական կողմերի վրա սևեռելուն:

Կառավարության դեմ ուղղված ատելության խոսքի ծավալներն աճում են նաև հունվարին, երբ որոշում է կայացվում փակել Մալաթիայի տոնավաճառը: «168.am»

լրատվականը հրապարակել է ֆեյսբուքյան օգտատեր Արամ Սարգսյանի գրառումը, որտեղ նա վիրավորական եզրույթ է օգտագործում անձի հասցեին և ատելություն հրահրում մի խումբ անձանց միջև: Լրատվականը ընտրել է որպես վերնագիր՝ *«Ես չեմ չարախնդրում «Մալաթիայի» առևտրականների էս վիճակի վրա. ես պարզապես ասում եմ, որ արդար ա էն ամենը, ինչ կատարվում ա իրանց հետ. նիկոլ ընտրողն ու սատարողը չպետք ա լավ ապրի»*⁶³: Այս պարագայում լրատվականը չէ ատելության խոսք ստեղծողը, սակայն նա ոչ

⁶² Տե՛ս թեմայի շուրջ «168.am»-ի հրապարակումները՝ https://168.am/2022/12/01/1804458.html?fbclid=IwAR0WRPj9tGBZ_d4n7x6ViH4RBD6l9scu7x-YEEAb55EEwSn0mLgBuWpOZc0, https://168.am/2022/12/01/1804320.html?fbclid=IwAR2EITkjmzmyKxwwwl0p_ediSASBuYzxlRn4XL3ROH-qob_qwYGMbPtBRT4, <https://168.am/2022/12/01/1804796.html?fbclid=IwAR0F4TypuciBPED9GScvvaYPXlbnZpVDaEHyOM5boonPGvza7eNNia9i6g4>, <https://168.am/2022/12/02/1805174.html>:

⁶³ Տե՛ս «168.am»-ի 2023 թ. փետրվարի 1-ի հրապարակումը՝ https://blog.168.am/blog/427472.html?fbclid=IwAR25o4qVllDoNOoPEUdMC02GGf82X3FZqQEGUqM6rt22XS5kx_AU1Ybyhrl, <https://www.facebook.com/168am/posts/pfbid02Tp2YBHksQTjXtEBWwzGSa63qmqPbtwSx4XUzoBfj4HGERsRw1nC82ABSbsdjXpFbl>:

միայն տարածել է ատելության խոսք պարունակող հրապարակում, այլև ընտրել այնպիսի վերնագիր, որով նպաստում է ատելության խոսքի տարածմանը: Հոդվածի վերնագիրն արդեն իսկ թիրախավորում է Մալաթիայի առևտրականներին: Տարածված գրառման մեջ մասնավորապես նշված է. «Գաղտնիք չի, որ առևտրականների 70-80%-ը նիկոլապաշտ, նիկոլամոլ ա: Փեթակում ամեն երկրորդը յա Perfect TV-ա լսում, յա էն ալկաշ գնելին»: Այստեղ օգտատերը դերասան Գնել Սարգսյանին անվանում է «ալկաշ գնել».

«նիկոլ ընտրողն ու սատարողը չպետք ա լավ ապրի, ինքը պետք ա սեփական մաշկի վրա զգա նիկոլին ընտրելու խերը, իրա էրեխեքը նիկոլի ԱԻՆ-ի որոշումների պատճառով պիտի սոված մսան, հիվանդներն էլ՝ առանց դեղ, ոնց նիկոլի որոշումների արդյունքում են Արցախում առանց դեղի ու սնունդի մնացել»: Այստեղ օգտատերը ՀՀ վարչապետի անունը միտումնավոր գրում է փոքրատառով, իսկ նրա համակիրների և ընտրողների դեմ ատելություն քարոզում, որ նրանք չպետք է լավ ապրեն, նրանց երեխաները պետք է սոված մսան, իսկ հիվանդները՝ առանց դեղ:

Դիտարկված ժամանակահատվածում ատելության խոսքի թիրախում է հայտնվել նաև «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը: Նրա հասցեին հնչել են վիրավորանքներ, անձի շուրջ տարածվել բամբասանքներ և ապատեղեկատվություն: Օրինակ՝ «Yerevan Today» հեռուստաալիքի «Կարճ ասած» հաղորդման ընթացքում հաղորդավար Սևակ Հակոբյանը նշում է. «Անդրանիկ Քոչարյանը, որ մի որդուն պատերազմից առաջ ազատել էր տվել բանակից, մյուսին պատերազմի օրերին տարհանել տվեց անվտանգ գոտի, այս մարդկանց շրջապատում ամեն

բան կարող է լինել՝ բացի պատասխանատվությունից»⁶⁴: Այստեղ հաղորդավարը հնչեցնում է չճշտված տեղեկատվություն և այն ներկայացնում է որպես բացարձակ փաստ: Հարկ է ընդգծել, որ բանակի վերաբերյալ հարցերը զգայուն են հասարակության համար և նման հայտարարությունները կարող են հասարակությանը բացասաբար տրամադրել ԱԺ պատգամավորի դեմ:

Ատելության խոսքի թիրախում հայտնվել է նաև ԱԺ

Նախագահ Ալեն Սիմոնյանը: «Իրավունք» թերթում հրապարակված հոդվածում նշվում է. «Ալենը հաղթանակի մասին լրիվ այլասերված պատկերացումներ ունի, քանի որ միայն նվաստացումից սեռական հաճույք ստացող մազոխիստի մտքով կարելի է անցնել՝ վերջին երկու տարվա մղձավանջը կողմի դիվանագիտական հաղթանակ որակել»⁶⁵: Այս պարագայում ատելության խոսքը դրսևորվել է մի շարք վիրավորանքների ձևով, որոնք միտված են նսեմացնելու Սիմոնյանի դերը հասարակության մեջ: Մեկ այլ օրինակ. «168.am»-ի «Ռիվյու» հաղորդման հյուր Նաիրի Հոխիկյանը նշել է, որ. «Ինչպես ԱԺ Նախագահ Ալեն Սիմոնյանն է աջուձախ հայտարարում Արցախից պրծնենք, որ Հայաստանը նորմալ երկիր սարքենք. սա իրենց դիրքորոշումն է»: Նման ձևակերպումները, որոնք զրպարտություն են, կարող են հասարակության մեջ անվստահություն առաջացնել ԱԺ Նախագահի նկատմամբ:

⁶⁴ Տե՛ս «Կարճ ասած» հաղորդման 2022 թ. նոյեմբերի 14-ի եթերը 2:09 րոպեից:

⁶⁵ Տե՛ս «Իրավունք» թերթի 2022 թ. նոյեմբերի 18-ի 3595 (121) համարը:



Ամփոփելով

«Պետական ինստիտուտների դեմ ուղղված
ափսոսանքի խոսք» գլուխը՝

անհրաժեշտ ենք համարում նշել, որ **պետական մարմինների դեմ ուղղված ատելության խոսքի** վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ թե՛ հեռուստահաղորդումներում, թե՛ **տպագիր մամուլում** և **սոցիալական մեդիայում** պետական մարմինների դեմ ուղղված ատելության խոսք ստեղծվել և տարածվել է հասարակության մեջ կոնկրետ պետական մարմնի կամ պետական պաշտոնային դերի նսեմացման ու թուլացման նպատակով: Հեռուստահաղորդումների պարագայում պետական մարմինների դեմ ատելության խոսք ուղղվել է **«5-րդ ալիք», «Երկիր մեդիա», «Yerevan Today»** հեռուստաալիքների հաղորդումների ժամանակ, իսկ տպագիր մամուլում առավելապես **«Ժողովուրդ»** և **«Իրավունք»** թերթերում տպագրված հոդվածներում:

Պետական ինստիտուտների դեմ ուղղված ատելության խոսքի հիմնական թիրախում են եղել՝

Կառավարությունը և ԱԺ-ն

Նիկոլ Փաշինյանը, Ալեն Սիմոնյանը, ԶԶ Նախագահը, ԱԺ-ն «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները

Պաշտպանության նախարարությունը

Սուրեն Պապիկյանը, ԶԶ զինված ուժերը

Արտակարգ իրավիճակների նախարարությունը

Փրկարարները


Ոստիկանությունը

Հատուկ հանձնարարություններով դեսպան Է. Մարությանը

Դատական համակարգը

ԶԶ հակակոռուպցիոն դատարանները

Երևանի քաղաքապետարանը



ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄՈՋՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Ատելության խոսքի թիրախում հայտնվել է նաև **Հայ առաքելական եկեղեցին**: Հատկանշական է, որ եկեղեցուն ուղղված քննադատությունները բավական զգայուն են հասարակության լայն շրջանակների համար: Ոչ միայն քննադատություն, այլև կոնկրետ ատելության խոսք է ուղղվել թե՛ եկեղեցու, թե՛ կոնկրետ հոգևոր սպասավորների դեմ: «Ազատ գրույց Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ժամանակ հաղորդավարը թիրախավորել է եկեղեցուն, տարբեր թեմերի եպիսկոպոսների, ինչպես նաև կաթողիկոսին: Գնել Սարգսյանն անդրադառնում է Պարզև Սրբազանին նշելով. «Պարզև Սրբազան, գուցե փորձեք մի բան անեք Միացյալ Նահանգներում: Միայն զբաղված եք հայության մեջ թույն ու թարախ սրսկելով, որովհետև Բաքվից ա եղե՛լ հրամանը»⁶⁶: Հաղորդավարն այս կերպ թիրախավորում է Պարզև

⁶⁶ Տե՛ս «Ազատ գրույց Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2022 թ. դեկտեմբերի 13-ի եթերը 17:43 րոպեից՝ <https://www.youtube.com/watch?v=OB0cnZFYLhs>:

Սրբազանին՝ հեռուստադիտողների շրջանում տպավորություն ստեղծելով, որ Պարզև Սրբազանը պառակտում է հայությանը: Այս դեպքում հաղորդավարը, անձին վիրավորելուց զատ, նպատակ ունի հասարակության մեջ նսեմացնելու նրա դերը: Մեկ այլ դեպքում դարձյալ նույն հաղորդման ժամանակ, հաղորդավար Գնել Սարգսյանն անդրադառնում է Տավուշի թեմի առաջնորդ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստյանին. «...այսպես պատասխանեց Տավուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ (պահ, Գերաշնորհ) Տեր Բագրատ արքեպիսկոպոս Գալստյանը», «ապա անդրադառնալով Արցախում առկա իրավիճակին՝ Սրբազան Հայրը փաստում է (մարդ չի կարում գոնե էդ կոչումները կարդա. հըմ, Սրբազան Հայր)....»⁶⁷: Հաղորդավարն արհամարհանքով է խոսում եկեղեցական կոչումների մասին՝ նպատակ ունենալով հեռուստադիտողների շրջանում արհամարհական նույն վերաբերմունքն առաջացնելու եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ:

Մեկ այլ դեպքում դարձյալ նույն հաղորդման ժամանակ, հաղորդավարն անդրադառնում է եկեղեցու սպասավորներին. «Հայ առաքելական եկեղեցու սպասավորների գլխավորությամբ արհամարհանքը դեպի համահայկական կոնսուլիդացիա, այսինքն՝ աշխարհի հայերը հավաքվում են գագաթնաժողովի, բայց ինքը, բացե՛հրբաց իր գրասենյակից ստում են, որ չեն ստացել հրավերք: Եթե անգամ չէիք ստացել, կներեք, էդ շատ վատ ա, վատ ա ձեր մասով: Բայց հետո ինչպես հասկացանք, լավ էլ ստացել էին, ուղղակի էլի իրենց պրիմիտիվ ստի շրջանակներում էին գտնվում, ամեն

⁶⁷ Տե՛ս «Ազատ գրույց Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2022 թ. դեկտեմբերի 14-ի եթերը 18:47, 19:16 րոպեներից՝ <https://www.youtube.com/watch?v=s77Dy32M45Q>:

դեպքում դեկոնսոլիդացիայի կողմնակից են, այսինքն՝ պառակտիչ գործողությունների կողմնակից են»⁶⁸: Այս դեպքում հաղորդավարի նպատակն է ցույց տալ, որ Հայ առաքելական եկեղեցին արհամարհական վերաբերմունք ունի վերոնշյալ գազաթնաժողովի նկատմամբ, բացի այդ՝ հաղորդավարը, իր կարծիքը պարտադրելով, եկեղեցուն մեղադրում է պառակտիչ քաղաքականություն ծավալելու համար: Վերոնշյալ բոլոր արտահայտությունները հնչեցրել է բացառապես հաղորդավարը. դա խոսում է այն մասին, որ նույն ՁԼՄ-ն և նույն անձը կառույցի դեմ ուղղված ատելության խոսք են ստեղծում և տարածում:

Եկեղեցու քաղաքականության դեմ ուղղված ատելության խոսք կա նաև «Առավոտ» օրաթերթի 2022 թ. նոյեմբերի 12-ի համարի հենց առաջին էջում. թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանն իր վերլուծականում գրել է. «*Հայ առաքելական եկեղեցին նույնպես որպես «կոռուպցիայի որջ» չէր դիտարկվի, եթե [իշխանություններին] հաջողվեր իրականացնել «Նոր Հայաստան-նոր հայրապետ» օպերացիան, և կաթողիկոս նշանակվեր իշխանությանը հարմար մի թեկնածու, որն, օրինակ, կողջուներ Արցախի հանձնումը և հայաթափումը*»⁶⁹: Այս պարագայում հեղինակն ուղղակիորեն ատելության խոսք չի ուղղում եկեղեցուն, սակայն «կոռուպցիայի որջ» արտահայտությունն արդեն իսկ վիրավորանք է կառույցի համար և ընթերցողների շրջանում կարող է բացասական տրամադրվածություն առաջանալ: Բացի այդ՝ Արամ Աբրահամյանն այստեղ անուղղակի կերպով ատելության

⁶⁸ Տե՛ս «Ազատ գրույց Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2022 թ. նոյեմբերի 15-ի եթերը 12:15 րոպեից:

⁶⁹ Տե՛ս «Առավոտ» օրաթերթի 2022 թ. նոյեմբերի 12-ի 188/6742 համարը, էջ 1:

խոսք է ուղղում նաև իշխանություններին՝ նշելով, որ նրանք ողջունում են Արցախի հանձնումն ու հայաթափումը: Եկեղեցու դեմ ուղղված ատելության խոսքի հանդիպում ենք նաև «Իրավունք» թերթում, որտեղ նշված է. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայտնում են, որ հիմնական տարածայնությունները իշխանությունների հետ սկսվել են այն պահից, երբ Նիկոլը եկեղեցու գործառույթը, այսինքն՝ սատանա բռնելը դրեց ԱԱԾ-ի վրա»⁷⁰: Այստեղ թերթի վերլուծականի հեղինակը ծաղրում է եկեղեցու գործառույթը. նման ձևակերպումները կարող են վիրավորել հավատացյալ անձանց, եկեղեցու սպասավորներին: Դրանց միջոցով փորձ է արվում նսեմացնել եկեղեցու դերը հասարակության մեջ: Վերոնշյալ հրապարակման մեջ եկեղեցի-պետություն հարաբերությունները դարձյալ ծաղրաբար են ներկայացվում:

Սոցիալական մեդիայում թեման քննարկվել է հիմնականում օգտատերերի մեկնաբանություններում: Օրինակ՝ «Ազատություն» լրատվականը ֆեյսբուքյան և յություբյան ալիքներում հրապարակել է Գարեգին Բ կաթողիկոսի ամառային տեսաուղերձը: Օգտատերերը երկու հարթակներում էլ թիրախավորել են կաթողիկոսին՝ վիրավորական և անհանդուրժողական գրառումներ անելով: Մասնավորապես նրան անվանել են «պիղծ փչացած», «աղբ», «անիծված ցիուղալրտես», «թալանչի», «անամոթ տականք», «թրքի մոլա», «սատանա», «ուռոդ», «մուտ» ևն: Օգտատերերը գրել են նաև «հեռացիր», «գնա գրողի ծոցը»⁷¹: Առկա են նաև վիրավորական նշաններ պարունակող գրառումներ: Օգտատերերը

⁷⁰ Տե՛ս «Իրավունք» թերթի 2023 թ. փետրվարի 21-ի համարը:

⁷¹ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2023 թ. հունվարի 1-ի հրապարակման մեկնաբանությունները՝

վիրավորական գրառումներ են թողել կաթողիկոսի՝ Սուրբ Ծննդյան ուղերձի տակ՝ նրան անվանելով «խաբերա», «թալանչի», «սատանա»⁷²:

Հակակրոնական ուղղվածությամբ աստելության խոսքի թիրախ են եղել նաև աթեիստները: «Առավոտ» թերթում Արամ Աբրահամյանը գրում է. «Ինչպես օրինակ՝ մարտնչող աթեիստները նույն մոլի հավատացյալներն են եւ նույն բթամիտ խանդավառությամբ հավատում են, որ Աստված չկա: Հիմա էլ հայաստանցի «արեւմտամետներն» են. նրանք հաստատ չեն կարդացել, ասենք, Կանտի աշխատությունները, որտեղ գրված է, որ մարդը չպիտի լինի միջոց, մարդը նպատակ է»⁷³: Չնայած նրան, որ Արամ Աբրահամյանի հողվածն ունի քաղաքական բնույթ, այնուամենայնիվ նա համեմատություններ է անում աթեիստների հետ՝ նրանց անվանելով «բթամիտ», ինչն անձի նկատմամբ վիրավորանք է:

<https://www.facebook.com/watch/?v=1332000027554556>,<https://www.youtube.com/watch?v=jVRhEMRPSQU>:

⁷² Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2023 թ. հունվարի 6-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/azatutyun/posts/pfbid02FJJyn6WrAZ91QR3yuHJ8eXry5V1rhLwwa7U3qQvrDcxqk644e8AV1hdgZzcsLLH3I>:

⁷³ Տե՛ս «Առավոտ» թերթի 2022 թ. դեկտեմբերի 20-ի համարը՝ <https://www.aravot.am/2022/12/21/1312591/>:



Ամփոփելով

«Կրոնական Բանվճարներով պայմանավորված
ատելության խոսք» գլուխը՝

անհրաժեշտ ենք համարում նշել, որ հակակրոնական ուղղվածությամբ ատելության խոսք հիմնականում հնչել է **Չայ առաքելական եկեղեցու** և **աթեիստների** դեմ: Հեռուստատեսություններից եկեղեցու դեմ ուղղված ատելության խոսք հնչել է միայն «FreeNews» հեռուստատեսության «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 4 եթերների ընթացքում, իսկ տպագիր մամուլի դեպքում ատելության խոսք արձանագրվել է միայն «Առավոտ» և «Իրավունք» թերթերում: Աթեիստների դեմ ուղղված ատելության խոսքի դրսևորում հայտնաբերվել է միայն «Առավոտ» թերթում:



ՍԵՌՈՎ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐԱՏՎՈՐՈՒՄՆԵՐ

Սեռով պայմանավորված ատելության խոսք դրսևորվել է հիմնականում **կանանց նկատմամբ**: Հատկանշական է, որ կանայք թիրախում եղել են գլխավորապես հեռուստատես-րիալներում, սակայն հեռուստահաղորդումների եթերների ժամանակ նույնպես գրանցվել են ատելության խոսքի դեպ-քեր: Կանանց դեմ ուղղված ատելության խոսք դրսևորվել է հիմնականում «Սերը թակարդում», «Կույր աշխարհ» և «Ամեն տարի գարնանը» հեռուստատեսերիալներում:

«Սերը թակարդում» հեռուստատեսերիալում հիմնակա-նում քննարկվել է կնոջ «ամուսնացած-բաժանված» լինելը. «*Էն անունը, որ քեզ կպավ՝ ամուսնացած, բաժանված, քա-ղաքի տղամարդիկ քեզ հանգիստ չեն տա*»⁷⁴, «*Աղջիկներդ լավ ճանապարհ չեն բռնել, մեկն ամուսնացած-բաժանված է, մյուսն էլ...*»⁷⁵: Նման պիտակավորումները և ամուսնալուծված

⁷⁴ Տե՛ս «Սերը թակարդում» հեռուստատեսերիալի 65-րդ սերիան 7:40 րոպեից:

⁷⁵ Տե՛ս «Սերը թակարդում» հեռուստատեսերիալի 79-րդ սերիան 04:22 րոպեից:

կնոջը բացասական կոնտեքստում ներկայացնելը կարող են հասարակության մեջ ձևավորել կարծիք, ըստ որի՝ ամուսնալուծված կանայք հասարակության մեջ դեր չունեն. նրանք այդպես կարող են միայն բացասաբար ընկալվել: Այս պիտակավորումը հնչում է տարբեր սերիաների ընթացքում, ինչը խոսում է ատելության խոսքի կրկվող բնույթի մասին:

Մեկ այլ օրինակ. նույն սերիալում հնչում է հետևյալ միտքը. «*Ես էն աղջիկը չեմ, որ քարտուղարուհի դառնամ*»⁷⁶: Այստեղ թիրախավորված են բոլոր այն աղջիկները, որոնք քարտուղարուհի են աշխատում. նման ձևակերպումը կարծրատիպային մտածելակերպ կարող է առաջացնել նաև քարտուղարուհու աշխատանքի նկատմամբ: Աշխատանքային սահմանափակման թեման քննարկվում է նաև մեկ այլ սերիայում, որտեղ մայր ու աղջիկ գրուցում են, որ եթե հայրը տանը լիներ և իմանար, որ աղջիկն այդքան երկար մնացել է աշխատվայրում, «*ձեռքից չէին պրծնի*»⁷⁷: Նման ձևակերպումներն ու տեսարանները ոչ միայն կնոջ ազատության սահմանափակման օրինակներ են, այլև հայր-դուստր հարաբերությունների բացասական երանգներով ներկայացում:

«Կույր աշխարհ» հեռուստասերիալում անընդհատ թիրախավորվում են մանկատանը մեծացած աղջիկները. «*Որբի հետ կարաս ժամանակ անցկացնես, իսկ ես ժամանակ անցկացնելու աղջիկ չեմ*» (329.000 դիտում)⁷⁸, «*մանկատան*

⁷⁶ ՏՆՍ «Սերը թակարդում» հեռուստասերիալի 79-րդ սերիան 04:22 րոպեից:

⁷⁷ ՏՆՍ «Սերը թակարդում» հեռուստասերիալի 60-րդ սերիան 13:18 րոպեից:

⁷⁸ ՏՆՍ «Կույր աշխարհ» հեռուստասերիալի 71-րդ սերիան 12:58 րոպեից:

երեխան չի կարող լավ գեներ, լավ դաստիարակություն ունենալ, և չես իմանա նրանից ինչ սպասել. ավելի լավ է՝ նորմալ ընտանիքից աղջկա հետ ամուսնանաս» (351,966 դիտում)⁷⁹: Մեկ այլ սերիայում աղջկան առևանգել և ասում են, որ, միևնույնն է, ոչ մեկին պետք չէ, քանի որ որբ է⁸⁰: Այս և նմանտիպ այլ ձևակերպումներ թիրախավորում են մանկատանը մեծացած աղջիկներին՝ բևեռացնելով հասարակությանը: Դրանք կարող են նախ վիրավորել մանկատանը մեծացած աղջիկներին, ապա հասարակության մեջ կարծրատիպեր ձևավորել մանկատների, դրանց անարդյունավետ գործունեության, այնտեղ մեծացած երեխաների վերաբերյալ:

Հեռուստասերիալներում ընդգծված թեմա է նաև կանանց բարոյականության հարցը: «Ամեն տարի գարնանը» հեռուստասերիալում հերոսը վերհիշում է, որ աղջկան տնից հանել է՝ չամուսնացած լինելով՝ տղամարդու հետ կապվելու համար (249,268 դիտում)⁸¹: «Կույր աշխարհ» հեռուստասերիալում կնոջն ասվում է, որ հեռու է սրբությունից, քանի որ «վատ անցյալ» ունի (348,337 դիտում)⁸², «...որ թույլ չտայիր, չէր անի» (խոսքը բռնաբարության մասին է) (339,435 դիտում)⁸³: Նման ձևակերպումներն ատելության խոսքի դրսևորումներ են, և կանանց շրջանում կարող են առաջացնել հասարակությունից դատապարտված լինելու զգացողություն և վախ:

⁷⁹ Տե՛ս «Կույր աշխարհ» հեռուստասերիալի 46-րդ սերիան:

⁸⁰ Տե՛ս «Կույր աշխարհ» հեռուստասերիալի 60-րդ սերիան 11:40 րոպեից:

⁸¹ Տե՛ս «Ամեն տարի գարնանը» հեռուստասերիալի 211-րդ սերիան 4:05 րոպեից:

⁸² Տե՛ս «Կույր աշխարհ» հեռուստասերիալի 61-րդ սերիան 24:15 րոպեից:

⁸³ Տե՛ս «Կույր աշխարհ» հեռուստասերիալի 63-րդ սերիան 16:56 րոպեից:

Վերջին օրինակում առկա է բռնության ենթարկված կնոջն ուղղված մեղադրանք, այնինչ կինը պարզապես գոհ է: Այս ձևակերպումները բռնաբարությունը դիտարկում են որպես բնական երևույթ, ինչն անընդունելի է: «Կույր աշխարհ», «Սերը թակարդում», «ՅՕ արծաթ» հեռուստասերիալներում առկա են եղել թե՛ բռնաբարության, թե՛ բռնության տեսարաններ, ինչը խոսում է բռնությունը, ատելությունը հասարակության շրջանում որպես երևույթ տարածելու մասին:

Կանանց դեմ ուղղված ատելության խոսքի դրսևորումներ են եղել նաև քաղաքական հարցերի շուրջ քննարկումներում:

«5-րդ ալիք»-ի «Լուրերի թողարկում» հաղորդումն անդրադարձել է ՀՀ ԱԺ պատգամավոր, «Հայաստան» խմբակցության անդամ Աննա Գրիգորյանի և ԱԺ Պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Բոչարյանի վեճին, որտեղ Աննա Գրիգորյանն ասում է. «...*եթե մինչև այսօր բամբասկոտ կնոջ նման որտեղ նստում իմ անունն եք տալիս...*», իսկ Անդրանիկ Բոչարյանը՝ պատասխանում. «*Բամբասկոտ կինը Ձեր ամուսինն է*»⁸⁴: Աննա Գրիգորյանը Բոչարյանին վիրավորելու համար օգտագործում է «բամբասկոտ կին» արտահայտությունը, որը կնոջ սեռի պիտակավորում է: Նույն թեման քննարկվել է նաև սոցիալական մեդիայում, որտեղ օգտատերերը գրառումներ են կատարել, որոնցում կնոջ սեռը նսեմացնող ձևակերպումներ կան, ինչպես. «*Ախր ով ա տեսել, որ կինը գլուխ լինի, որ գլուխը դեկավարի... կինը պետք է լինի տանը, երեխաներ դաստիարակելու, տան մաքրություն անելու, սկեսուր սկեսրայր պահելու մեջ...*», «*Կանայք ոչ մի տեղ*

⁸⁴ Տե՛ս «Լուրերի թողարկում» հաղորդման 2023 թ. հունվարի 11-ի տի՛թերը 19:58 րոպեից՝ <https://www.youtube.com/watch?v=yT2n-mhQb8I&list=PLnu1d6PlghpR59qzpTKdEHANAVRPwn5V9&index=10>:

չպետք է ունենան կառավարության ոլորտում: Զսպվածությունն էլ վերացելա է արողջությամբ», «Այս հայ կանայք որ այսքան լկտիացել են-տղամարդկանց թուլությունից է-ազատ խոսքն ու լրբությունը շփոթել են-սերժի սայլուտները մոռացել են-ճիշտ են ասումստրուկին ազատություն չպետք է տալ-դեմոկրատիայից մենք ավելի հեռու ենք քան արևից»⁸⁵: Սրանք հասարակության մեջ կարծրատիպեր են տարածում կնոջ դերի վերաբերյալ ցույց տալով, որ կինը չպետք է զբաղվի քաղաքականությամբ: Վերջին մեկնաբանության մեջ երևում է կին-տղամարդ անհավասարության ընդգծումը:

«Յրապարակ» լրատվականն իր վեբ կայքում հրապարակել է Էդիկ Անդրեասյանի հոդվածը, որտեղ նա, խոսելով Նազելի Բադդասարյանի մասին, գրում է. «...չուկա» Նազիկին գործից հանենք, ԶՊ պատգամավորները թող էջ-էջ դուրս տան...: Միշտ այսպիսի բաներ պետք է լինեն Յայաստանում, որ Նիկոլը չթռնի աթոռից»⁸⁶: Կինն այսպես պիտակավորվում է արտաքին հատկանիշների համար:

⁸⁵ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2023 թ. հունվարի 11-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/watch/?v=1340449726496709>, <https://www.youtube.com/watch?v=M2tuuaHU-0>, https://www.instagram.com/reel/CnRUSseJ1PK/?utm_source=ig_web_copy_link, https://www.tiktok.com/@azatutyuntv/video/7187331241488682246?is_from_webapp=1&sender_device=pc&web_id=7167648969714091521:

⁸⁶ Տե՛ս «Յրապարակի» 2023 թ. հունվարի 27-ի հրապարակումը՝ <https://hrparak.am/post/a3317bcb746d7d8190f181cf2b5c6145>:

ԼԳՔՏ համայնքի ներկայացուցիչները թիրախավորվել են ինչպես սոցիալական մեդիայում, այնպես էլ տպագիր մամուլում: Ընդհանուր առմամբ դիտարկված ժամանակահատվածում սեռական փոքրամասնությունները թիրախավորվել են առնվազն 6 անգամ:

Այսպես՝ Ազատություն լրատվականը հրապարակել է լուր այն մասին, որ *«Ռուսաստանի նախագահը ստորագրել է ԼԳՔՏ քարոզչությունն արգելող օրենքը»:* Լրատվականի ֆեյսբուքյան տիրություն նյութի տակ օգտատերերը թողել են մեկնաբանություններ, որոնք պարունակում են ատելության խոսք, վիրավորանք և նույնիսկ բռնության կոչ ԼԳՔՏ համայնքի կամ սեռական փոքրամասնությունների նկատմամբ: Մասնավորապես նրանց անվանում են *«վիրուս», «մոլախոտ», «այլասերված», «փնթի»՝* նշելով *«Քանի ուշ չէ այդ այդ մոլախոտերի դեմ պայքարել է պետք: Օգտատերերից մեկի գրառումը պարունակում է նաև բռնության կոչ՝ «դրանց միայն վառելը կփրկի»⁸⁷:* Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ սոցիալական մեդիայի մեկնաբանություններում սեռական փոքրամասնությունները ներկայացվում են որպես վիրավորանքի ձև: Օրինակ՝ Ազատություն լրատվականը հրապարակել է լուր, որտեղ նշվում է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոնի հեռախոսազրույցի մասին: Նյութի ֆեյսբուքյան հղման տակ հայ օգտատերերը թողել վիրավորական մեկնաբանություններ: Պետք է շեշտել, որ

⁸⁷ Տե՛ս Ազատության դեկտեմբերի 6-ի հրապարակման մեկնաբանությունները: Հասանելի է այստեղ՝<https://rb.gy/mnfffm>, www.azatutyun.am/a/32163634.html?fbclid=IwARON3cCiwQMmYqJhjeeh3tw9JeAQcNaPKmcMWIJKmAPID0eN-14Y5av5o98

երկու մեկնաբանությունների բովանդակությունն էլ առնչություն ունեն սեռական փոքրամասնությունների հետ («պիդ», «գեյ»), և այստեղ որպես վիրավորանք են գործածվել.⁸⁸ Մեկ այլ օրինակում ևս սեռական փոքրամասնություններն օգտագործվել են որպես անձի վիրավորանք: Այսպես՝ «Եկեղեցին իրավունք չունի կաշխանդվելու. գիտեք մի քանի, էսպես, անորոշ սեռական կողմնորոշման տեր մարդիկ կամ գրանտային էդ լափամաններին գամված մարդիկ, որոնք ասում են, եկեղեցին չպետք է զբաղվի քաղաքականությամբ...»⁸⁹: Այստեղ հաղորդման հյուրը թիրախավորում է քաղաքացիական հասարակության կոնկրետ հատվածին՝ նրանց անվանելով՝ «անորոշ սեռական կողմնորոշման տեր մարդիկ կամ գրանտային էդ լափամաններին գամված մարդիկ»: Պետք է նշել, որ այս թիրախավորումները լայնորեն տարածված են հանրության շրջանում և նախկին պատգամավորը օգագործում է այն՝ հանրության մի հատվածի համակրանքը շահելու նպատակով՝ այդպես էլ ավելի սրելով ատելությունը: Այստեղ ատելության խոսքի թիրախում են թե՛ սեռական փոքրամասնությունները, թե՛ գրանտներից օգտվող քաղաքացիները:

⁸⁸ Տե՛ս 1-in.am-ի նոյեմբերի 11-ի հրապարակման մեկնաբանությունները: Հրապարակումը հասանելի է այստեղ՝<https://www.facebook.com/1in.am/posts/pfbid02FUyVXnnOrn6i21beSoiDAmX6KJ3h2kzZKWjg1coGcQVdTi2pB7ZbigovT6QrBkqil>

⁸⁹ Տե՛ս Ռեվյու հաղորդման հունվարի 5-ի եթերը 08:10 րոպեից: Հասանելի է այստեղ՝
<https://www.youtube.com/watch?v=hc5mmwyGAqg>:



Պատկեր 6.

ԼԳԲՏ անձանց ինքնությունը թիրախավորելու միտում ունեցող պատկեր «Իրավունք» թերթից

ԼԳԲՏ համայնքի դեմ ուղղված ատելության խոսքի

օրինակ կա նաև «Իրավունք» թերթում: Թերթի N°2-3/2023 համարում անդրադարձ է կատարվել 2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի կողմից ընդունված 03.11.2022 թվականի թիվ 74-Ն հրամանին, որով հաստատվել է «Երեխայի հիվանդության պատմագիրը»: Այդ փաստաթղթում «սեռ» դաշտի ներքո որպես այլընտրանքային տարբերակ օգտագործվել էր «չճշտված» եզրույթը, ինչի առնչությամբ «Իրավունք» թերթի խմբագրությունը թերթի հերթական համարի առաջին էջի գլխագրում հրապարակել է ԼԳԲՏ

անձանց ինքնությունը թիրախավորող պատկեր և ուղեկցող տեքստային բովանդակություն. «Ընթերցողը հավանաբար կհիշի, որ ժամանակին Վիգեն Սարգսյանը, ով այդ ժամանակ ՉՉ նախագահի աշխատակազմի ղեկավար էր, կառավարության նիստին հանձնարարեց բոլոր գերատեսչական փաստաթղթերից դեն նետել «գենդեր» այլանդակ բառը, քանզի դա հարուցում էր հայ մարդու նողկանքը և արդեն հասցրել էր դառնալ նոր հայիոյանքներ գեներացնող բառարմատ: Իսկ հիմա ունենք չճշտված սեռի քաղաքականություն, որը գենետիկ քննության կարիք էլ չունի թուրքական գենետիկա հայտնաբերելու համար»: ⁹⁰

Մեկ այլ դեպքում սեռական կողմնորոշմանն ուղղված ատելության խոսքը դրսևորվել է ապատեղեկատվության կամ չճշտված տեղեկատվության միջոցով: Հրապարակ լրատվականը հարցազրույց է վերցրել գրականագետ, դասագրքերի հեղինակ Դավիթ Գասպարյանից: Վերջինս քննադատելով հանրակրթական նոր դասագրքերի բովանդակությունը՝ նշում է հետևալը. «Ավելին. սթափ մարդու հայացքով այն ամենը, ինչ արվում է, աղետ է: «Գրականություն» առարկայի 7-րդ դասարանի փորձարկվող դասագրքերից մեկում, որն ստեղծել է «Զանգակի» հեղինակային խումբը, 79-րդ էջում կա մի նկար, որտեղ երկու աղջիկ համբուրվում են, եւ դա մատուցվում է 7-րդ դասարանի աշակերտին՝ հասունացման շրջանում գտնվող 13 տարեկան երեխային: Այն չարիքը, որ նախապատրաստվում էր, իրականացվում է, հիմա կընտրվեն հանձնաժողովի անդամներ, եւ այն չափորոշիչով, որն ինքնին աղետ է ու անեծք, պետք է դասագիրքը չափեն,

⁹⁰ Տե՛ս Իրավունք թերթի №2-3/2023- համարը:

ընդունեն կամ չընդունեն»:⁹¹ Երկու աղջիկների համբուրվելու մասին հատվածը հարցազրուցավարը և լրագրողն ընտրել է որպես վերնագիր՝ առանց ստուգելու փաստը: Այնուհետև հրատարակչության հանրային կապերի պատասխանատու Սյուզան Չիչակյանը պարզաբանել է, որ նկարը Մարտիրոս Սարյանի ամենահայտնի նկարներից մեկն է և «Փորձարկվող դասագրքի 79-րդ էջի նկարը Սարյանի ամենահայտնի նկարներից՝ «Յեքիաթներ ու երազներ» շարքի «Սեր: Յեքիաթ» նկարն է»: Զոդվածը հրապարակվել է նաև Տպագիր օրաթերթի N 206 (3433) համարում: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ դժվար է հստակ նշել, արդյոք գրականագետը գիտեր նկարի մասին և դիտավորյալ է այդպիսի տեղեկություններ տարածում (disinformation), թե պարզապես տեղեկացված չէր նկարի մասին և նրան այդպես է թվացել (misinformation):

⁹¹ Տե՛ս Hraparak.am-ի նույնբերի 30-ի հրապարակումը: Դասանելի է այստեղ՝ https://hraparak.am/post/70de0b8b6a5977e804d0b0f2e3721c8d?fbclid=IwAR0TKW24DKr7XpalqhyoDxd8O9Mfz8mys7zMC4IR43WFUJZ2P-bQKC_IOOs

Ամփոփելով

«Սեռով և գենդերային ինժեներությամբ պայմանավորված արելության խոսք» գլուխը՝



Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ սեռով պայմանավորված ատելության խոսքի թիրախում եղել են կանայք, իսկ գեներացման հիմնական լծակները՝ սերիալները, հեռուստահաղորդումները և սոցիալական մեդիան: Ատելության խոսք հնչել է հիմնականում «Սերը թակարդում» և «Կույր աշխարհ» հեռուստասերիալներում: Դրանցից առաջինի դիտումները փակ են, իսկ «Կույր աշխարհ» հեռուստասերիալի՝ ատելության խոսք պարունակող սերիաների դիտումները միջինում հատում են 320.000-ը, ինչը խոսում է հեռուստասերիալի բարձր դիտողականության և, մինևույն ժամանակ, ատելության խոսքի տարածման առավել լայն մասշտաբների մասին:

Ամփոփելով անհրաժեշտ է ընդգծել, որ սեռական փոքրամասնությունների շուրջ ձևավորված ատելության խոսքն ունի երկու ուղղվածություն: Մի դեպքում ատելության խոսքն ուղղված է հենց ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին, մյուս դեպքում սեռական փոքրամասնությունները և նրանց վերաբերող բառ-արտահայտություններն օգտագործվել են սոցիալական այլ խմբերին թիրախավորելու և վիրավորելու համար:



ԿՈՆԿՐԵՏ ԷԹՆԻԿ ԽՄԲԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Սույն գլխի շրջանակներում անդրադարձ կկատարվի հետևյալ էթնիկ խմբերի նկատմամբ ատելության խոսքի դրսևորումների վերաբերյալ հավաքագրված տվյալները:

Ռուսների դեմ ուղղված ատելության խոսք

Ամերիկացիների և արմտյան արժեհամակարգի դեմ ուղղված ատելության խոսք

Թուրքերի դեմ ուղղված ատելության խոսք

Ադրբեջանցիների դեմ ուղղված ատելության խոսք

Չայերի դեմ ուղղված ատելության խոսք



5.1 Ռուսների դեմ ուղղված ատելության խոսք

Ռուսաստանի, ռուս քաղաքական գործիչների դեմ ուղղված ատելության խոսքը մեծ ծավալների է հասնում հատկապես ՀԱՊԿ-Հայաստան հարաբերությունների, ինչպես նաև Լաչինի միջանցքի փակումից հետո՝ ռուս խաղաղապահների գործունեության արդյունավետության վերաբերյալ քննարկումների ժամանակ: Ռուս քաղաքական գործիչների դեմ ատելության խոսք հնչել է հիմնականում «FreeNews» հեռուստաալիքի հաղորդումներում: «Ազատ գրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդման հյուր Լևոն Ծիրինյանն ասում է. «Ռուսական քաղաքական միտքը մեզ մոտ էնպես են ուռճացնում, իբր խելք ունեն. խելք ունենային Ուկրաինա չէին մտնի», «Դրանք չե՛ն: Դրա համար հոգեկան տվայտանքի մեջ են Մարիա Զախարովան, Պեսկով կոչված պետուկը»⁹²: Նման հայտարարությունները նպատակ ունեն հասարակությանը ցույց տալու, որ ռուս քաղաքական միտքն անարժեք է, և ռուսները չունեն բավարար մտավոր ունակություններ: Նման ձևակերպումները կարող են հասարակության մեջ հակակրանք առաջացնել ՌԴ

⁹² Տե՛ս «Ազատ գրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդման 2023 թ. հունվարի 26-ի եթերը 16:30, 21:00 րոպեներից՝ <https://www.youtube.com/watch?v=bWJ7BwTTjg>:

քաղաքական գործիչների և նրանց գործունեության հանդեպ: Հաղորդման հյուրը թիրավորում է նաև Դմիտրի Պեսկովին, որ պաշտոնատար անձ է ՌԴ-ում:

Ատելության խոսքի թիրախում է եղել նաև ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: «Ազատություն» լրատվականը տեղադրել է լուր այն մասին, որ ՌԴ նախագահը գալիս է Հայաստան: Լրատվականի հրապարակման մեջ չկա ատելության խոսքի որևէ դրսևորում, սակայն Ֆեյսբուքում և Ինստագրամում տեղադրված լուրի տակ հայ օգտատերերը ՌԴ նախագահի հասցեին վիրավորական արտահայտություններ են գրել, ինչպես՝ «տականք», «կեղտոտ առնետ», «դահիճ», «շիզիկ»⁹³: Վլադիմիր Պուտինի դեմ ուղղված ատելության խոսքը մեծ ծավալների է հասնում նաև Հայաստան կատարած այցի ժամանակ, ընդ որում դարձյալ այն արտահայտվել է օգտատերերի մեկնաբանություններով: «1in.am» լրատվականը տեղադրել է իրավապաշտպան Դանիել Իոննիսյանի ֆեյսբուքյան գրառումը՝ «Պուտինը պետք է «դիմավորվի»» վերնագրով: Ֆեյսբուքում օգտատերերը ՌԴ նախագահի հասցեին վիրավորական արտահայտություններ են գրել, ինչպես նաև կոչ արել, որ Վլադիմիր Պուտինին և Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյին ձվերով հարվածեն. «Ձվերով հարվածել Լուկաշենկոյի ու Պուտինի ավտոներին», «Շակալ Լուկաշենկոյին հոտաց ձվով հարվածելա պետք է՛ AM իսկ

⁹³ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2023 թ. նոյեմբերի 18-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://rb.gy/8gdmtd>, https://www.instagram.com/p/CIGYx7dNSPJ/?utm_source=ig_web_copy_link:

պուտինին էլ չդիմավորել, ոնց որ ուրիշ երկիրներն են ա-
նում»⁹⁴: Ատելության խոսքն ուղղված է նաև Ալեքսանդր
Լուկաշենկոյի դեմ. օգտատերերը նաև բռնության կոչեր են
արել, ինչը խոսում է հասարակության մեջ ատելության խոս-
քի և բռնության կորմալիզացիայի մասին: Հարկ է նշել, որ
Ալեքսանդր Լուկաշենկոյի դեմ ուղղված ատելության խոսք
կա նաև այլ հարթակներում: Բելառուսի նախագահ Ա. Լուկա-
շենկոյի՝ «Ազատություն» լրատվականի հրապարակած հար-
ցազրույցի մեկնաբանություններում օգտատերերը նրա հաս-
ցեին վիրավորական գրառումներ և արտահայտություններ
են արել, մասնավորապես՝ նրան անվանել են «կոլխոզի բեդ-
լու», «կեղտ», «եզի ծնունդ», «եթիմ» ևն⁹⁵: Բելառուսի նախագահ
Ա. Լուկաշենկոյի հասցեին վիրավորանքներ և հայիոյանք-
ներ են գրվել նաև լրատվականի մեկ այլ՝ «Հայկական կողմը
փաստաթղթում լրացում էր առաջարկել, բայց որոշեցինք
այդ երկու կետը չընդունել. Լուկաշենկո» վերնագրով տեսա-
նյութի տակ Ֆեյսբուքում⁹⁶ և Յություքում⁹⁷: Օգտատերերը նա-
խագահին անվանել են «գանդաշենկո», «տրյապկա», «ղախ-
պա», «թուրք», «մարդկային վիժվածք», «թագի թուլա», «նեխած
կարտոշկա», «տականք»: «Ազատ շփում Գնել Սարգսյանի
հետ» հաղորդման ընթացքում ևս հնչել է ատելության խոսք՝

⁹⁴ Տե՛ս «1in.am»-ի 2022 թ. նոյեմբերի 18-ի հրապարակումը՝
<https://www.1in.am/3192898.html?fbclid=IwAR35epysz2eJsET2iMR1KynEDZsWlY4vWgDdHzB8eX1vXXUHjulfbHFhNM>, <https://rb.gy/qoqcgw>:

⁹⁵ Տե՛ս «Ազատության» 2022 թ. նոյեմբերի 24-ի հրապարակման
մեկնաբանությունները՝
<https://www.facebook.com/azatutyun/videos/694133438644329>:

⁹⁶ Տե՛ս «Ազատության» ֆեյսբուքյան հրապարակումը՝
<https://www.facebook.com/watch/?ref=saved&v=525339532584675>:

⁹⁷ Տե՛ս «Ազատության» յություքյան հրապարակումը՝
<https://www.youtube.com/watch?v=bleojADSy3s>:

Լուկաշենկոյի դեմ ուղղված: Հաղորդավարն ասում է. «Բելա-ռուսի նախագահ բայստրուկ հանդիսացող բանը՝ Լուկաշենկոն՝ ցնդած ծերունին»⁹⁸: Այնուհետև շարունակում է. «...«բայստրուկ» անվանում են ապօրինի երեխաներին»: Այսպես նա թիրախավորում է նաև հասարակության մեկ այլ խմբի:

Լաչինի միջացնքի փակումից հետո դիտարկված ժամանակահատվածում ատելության խոսքի թիրախում են եղել նաև ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը, ՌԴ ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովան և ռուս խաղաղապահները: Ատելության խոսքը դարձյալ հիմնականում գեներացվել է սոցիալական մեդիայում: «Ազատություն» լրատվականի հրապարակած «Լավրովը մանրամասներ է բացահայտել բանակցային գործընթացից, մեղադրանքներ հնչեցրել Արևմուտքի հասցեին» և «Լավրով. «Տեսնում ենք հայ-ադրբեջանական կարգավորումը այլ խաղացողների կողմից խոչընդոտելու փորձեր» վերնագրերով տեսանյութերի տակ՝ Ֆեյսբուքում, Յություբում և Ինստագրամում, օգտատերերը վիրավորական եզրույթներով և հայիոյանքներով թիրախավորել են արտգործնախարարին՝ «տականք», «սրիկա», «հորթ» անվանելով⁹⁹:

«1in.am»-ն իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է «Մեր գինվորականներին հանելու կոչ անողները ավանտյուրիստ-

⁹⁸ Տե՛ս «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման 2022 թ. նոյեմբերի 2-ի եթերը:

⁹⁹ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2022 թ. դեկտեմբերի 1-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/azatutyun/posts/pfbid02qBRBx5nrdTneeSExxUC68rNjxfDiuWBz6XofY6pa2aEzMsgLAcyuXCMoFNarwWU1I>, https://www.instagram.com/reel/CloFeXELNIR/?utm_source=ig_web_copy_link:

ներ են»։ *Զախարովա*» վերնագրով լուրը։ Օգտատերերը մեկնաբանություններում թիրախավորել են ՌԴ ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովային՝ վիրավորական բառերով՝ «սուկա», «գիրիլ», «սպիտակ թուրք», «վիուկ», «ալկաշկա», «շմագադյավկա», «լիրք»¹⁰⁰։ «Ազատություն» լրատվականի «Մարդասիրական բեռներով մեկ ավտոշարասյուն է ուղեկցվել Արցախ։ ՌԴ ՊՆ» վերնագրով հոդվածի մեկնաբանություններում ֆեյսբուքյան օգտատերերը թիրախավորել են ռուս խաղաղապահների՝ «հրեշ», «սպիտակ թուրքեր», «մարդակերներ», «օկուպանտներ», «կապիկներ» վիրավորական եզրույթներով և պիտակավորումներով¹⁰¹։ Նման մեկնաբանությունները մի կողմից արտահայտում են հանրային դժգոհությունը, մյուս կողմից՝ նսեմացնում ռուս խաղաղապահների դերն Արցախում։

Ատելության խոսք ուղղված է եղել նաև Ռուսաստանի Դաշնության դեմ։ «Ազատություն» լրատվականը ֆեյսբուքյան ուղիղ եթերով հրապարակել է «Ազգային ժողովրդավարական բևեռ»-ի քաղաքական ակցիան ՌԴ դեսպանատան մոտ։ Ակցիայի ամբողջ ընթացքում ԱԺԲ անդամներն ատելություն սերմանող, հակառուսական կոչեր են հնչեցրել։ «Ռուսաստանը դավաճան է», «Ռուսաստանը օկուպանտ է», «Ռուսաստանը

¹⁰⁰ Տե՛ս «1-in.am»-ի 2023 թ. հունվարի 12-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/1in.am/posts/pfbid027Y3JX9DmNqer1Dqmqd3HvaaLU43AAEJpxN712siws73kxyz4WwqFY5PQ95QHkd2I>։

¹⁰¹ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2023 թ. հունվարի 24-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/azatutyun/posts/pfbid02U8G9dFgRjDjjUbSp8LUEjc4bAnCJLbtzKUzsHXUHBb6QTibwmaBuBmmf89XnseUQI>։

ագրեսոր է», «Ռուսաստանը թշնամի է», «Մահ օկուպանտին»¹⁰²: Լրատվականը հրապարակել է բողոքի կոնկրետ ակցիա, որի ընթացքում հնչող կարծիքները չէր կարող կառավարել, սակայն, այնուամենայնիվ, հրապարակման մեջ հնչող կոչերը հասարակության մեջ կարող են հակակրանք, վախ և անվստահություն առաջացնել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ռուսների նկատմամբ:

Ատելության խոսքի թիրախային խումբը հիմնականում ընդգրկել են ռուս պաշտոնյաները, ռուս խաղաղապահները: Ռուսների դեմ ուղղված ատելության խոսք հիմնականում գեներացվել է սոցիալական մեդիայում օգտատերերի մեկնաբանությունների միջոցով:

¹⁰² Տե՛ս «1in.am»-ի 2023 թ. հունվարի 11-ի հրապարակումը՝ <https://www.facebook.com/1in.am/videos/1234843410445011>:



5.2 Ամերիկացիների և արևմտյան արժեհամակարգի դեմ ուղղված ատելության խոսք

Հայկական մամուլում ատելության խոսքի թիրախում են հայտնվել նաև **եվրոպացիները և ամերիկացիները**: Հարկ ենք համարում ընգծել, որ ատելության խոսքն այս խմբերի դեմ գեներացվել է հիմնականում տպագիր մամուլի վերլուծականներում առնվազն 5 անգամ և առանձին դեպքերում ծաղրանկարներում: Օրինակ՝ «Իրավունք» թերթի դեկտեմբերի 23-ի համարում նշված է. «*Բրիտանիան պիտի դառնա արյան ծով, ամեն կողմից ատոմային ռումբեր ընկնեն շոտով:*»¹⁰³ Այս պարագայում ատելության խոսքը դրսևորվել է բռնության կոչի միջոցով, որտեղ հեղինակն ակնհայտորեն աղետ է ցանկանում տեսնել Մեծ Բրիտանիայում: Մեկ այլ դեպքում «Ժողովուրդ» թերթը հրապարակել է վերլուծական, որտեղ նշվում է. «*ԵՄ-ի համար միևնույն է՝ Արցախում կամ ընդհանրապես տարածաշրջանում հայերն ապրելու են, թե չէ: Այդ կազմակերպության այսօրվա մտահոգությունն է ձմռանը*

103 Տես Իրավունք թերթի, Դեկտեմբերի 23, 2022, համար 3610 (136)-ի

համարը:

տաքանալը, և Ռուսաստանի հետ հարաբերությունների վատացումից հետո ԵՄ-ին պետք է հուսալի գործընկեր Ադրբեջանի վառելիքը:»¹⁰⁴ Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նման ձևակերպումները հայ հասարկության մեջ կարող են առաջացնել բացասական վերաբերմունք ուղղված ԵՄ-ին և նրա գործունեությանը և կարող են ստեղծել տպավորություն՝ կառույցի անտարբերության մասին: Վերլուծականում խոսվում է նաև ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների փոխշահավետության մասին, ինչը հայ ընթերցողի մոտ կարող է ձևավորել կարծիք՝ Արցախյան հարցի մասին կառույցի կողմնակալության շուրջ: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հողվածի մյուս հատվածում թիրախավորվում է նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ հայերի նկատմամբ «բացահայտ թքած ունենալու վերաբերմունք»-ի համար և վերլուծականի հեղինակը Ադրբեջանին ներկայացնում է որպես ԱՄՆ-ի գլխավոր հուսալի գործընկերոջ: Նման ձևակերպումները կարող են աստիության ձևավորել հավաքական արևմուտքի՝ Եվրոպայի և ԱՄՆ-ի նկատմամբ: Հարկ է նշել, որ ԱՄՆ-Ադրբեջան-Թուրքիա կապը առկա է նաև «Իրավունք» թերթում: Օրինակ՝ «Տեսնենք ով ում վերջում տեռորիստ կսարքի» վերնագրով վերլուծականի հետ մեկտեղ ներկայացված է ծաղրանկար, որում որպես ահաբեկիչներ պատկերված են ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանը: Նյութի տեքստային մասում անուղղակիորեն թիրախավորվում է նաև Ամերիկայի ժողովուրդը: Այս պարագայում ԱՄՆ-ն

¹⁰⁴ Տե՛ս Ժողովուրդ թերթի Դեկտեմբերի 20, 2022, համար՝ 214 (6768)-ի համարը:

ներկայացվում է որպես տեռորիստական պետություն, ինչը ընթերցողի մոտ կարող է առաջացնել բացասական տրամադրվածություն և վախ տվյալ պետության և ժողովրդի նկատմամբ: Հարկ է ընդգծել, որ «Իրավունք» թերթն պարբերաբար աչքի է ընկնում ամերիկատյաց ձևակերպումներով և հիմնականում ծաղրանկարներ է օգտագործում այդ քարոզչական գործընթացի համատեքստում: Այդ ծաղրանկարներում ԱՄՆ նախագահը ներկայացվում է Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների հետ միասին և ընթերցողը կարող է ձևավորել կարծիք առ այն, որ Հայաստանի հետ առկա կոնֆլիկտներում Միացյալ Նահանգները սատարում է վերոնշյալ պետությունների ղեկավարներին:



Պատկեր 7.

Ծաղրանկար «Իրավունք» թերթի 2022 թվականի Նոյեմբերի 16-ի համարից:

Դիտարկված թերթերում թիրախավորվել են ոչ միայն եվրոպացիներն ու ամերիկացիները, այլ նաև այն հայերը, ովքեր արևմտամետ են: Օրինակ «Առավոտ» թերթում տպագրված վերլուծականում նշվում է. «Մեր «արևմտամետները» սովորաբար անգամ հեռավոր պատկերացում չունեն այն մասին, թե ինչ է նշանակում «արեւմտյան (եվրոպական) արժեքներ»: Նրանց թվում է, որ դա նույն ռուսական կամ ռուսամետ կայսրապաշտությունն է, միայն թե՛ «միևնու» նշանով: Ինչպես օրինակ՝ մարտնչող աթեիստները նույն մոլի հավատացյալներն են եւ նույն բթամիտ խանդավառությամբ հավատում են, որ Աստված չկա: Դիմա էլ հայաստանցի «արևմտամետներն» են. նրանք հաստատ չեն կարդացել, ասենք, Կանտի աշխատությունները, որտեղ գրված է, որ մարդը չպիտի լինի միջոց, մարդը նպատակ է: Դենց դա՛ է իրականում արեւմտյան արժեքների հիմքը, հենց դրանից են սերում մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը՝ այդ ամենը գալիս է մարդուն ամեն ինչի կենտրոնում դնելուց: Իսկ մեր արևմտամետները ճիշտ նույն ձեւով պատրաստ են ասել մարդկանց, նույնիսկ հարազատներին, նույնիսկ հայրենակիցներին՝ միայն նրա համար, որ այդ մարդիկ դավանում են իրենց դուր չեկող գաղափարներ:»¹⁰⁵ Նման ձևակերպումները շատ զգայուն են և ընթերցողի (մասնավորապես այն ընթերցողների ովքեր ունեն արևմտամետ հայացքներ) կարող են առաջացնել բացասական տրամադրվածություն, անվստահություն և կասկածներ: Անհրաժեշտ է նշել նաև, որ արևմտամետ մարդկանց մասին հեղինակը խոսում է ընդհանրական կերպով, ինչը խոսում է այն մասին, որ թիրախավորվում են

¹⁰⁵ Տե՛ս Առավոտ թերթի դեկտեմբերի 21-ի հրապարակումը:

բոլոր այն մարդիկ, ովքեր ունեն արևմտամետ դիրքորոշում:
Այս հոդվածը հրատարակվել է նաև www.aravot.am կայքում
հավաքելով 9416 դիտում:

Ամփոփելով պետք է ընդգծել, որ Եվրոպայի և
Ամերիկայի դեմ ուղղված ատելության խոսքը հիմնականում
պայմանավորված է եղել Արցախի խնդրի նկատմամբ
անտարբերությամբ և առանձին դեպքերում Ադրբեջանի և
Թուրքայի հետ ունեցած հարաբերություններով: Ատելության
խոսքը դրսևորվել է ինչպես տեքստերի, այնպես էլ
ծաղրանկարների միջոցով, որոնք հասանելի են
հավելվածում:



5.3 Թուրքերի դեմ ուղղված ատելության խոսքը հայկական մամուլում

Թուրքերի դեմ ուղղված ատելության խոսքը հիմնականում գեներացվել է սոցիալական մեդիայում գործող լրատվականների հրապարակումների մեկնաբանություններում: Հարկ է նշել, որ օգտատերերը շատ հաճախ «թուրք» բառն օգտագործում են որպես վիրավորանք անձի նկատմամբ:

«Ազատություն» լրատվականը Նյութ է հրապարակել *«Ստամբուլի կենտրոնում պայթյուն է որոտացել. կա առևձավազն 4 զոհ»* վերնագրով: Նյութի մեջ չկա ատելության խոսք, վիրավորանք և հայհոյանք, սակայն ահաբեկչության մասին լուրը Ֆեյսբուքում և Ինստագրամում առիթ է դարձել մի շարք օգտատերերի համար ահաբեկչությունը ողջունող գրառումներ կատարելու համար: Մասնավորապես՝ օգտատերերը ավստոսանք են հայտնել, որ զոհերի թիվը քիչ է. *«Մենք մենակ ուրախ ենք, մեր ու մանուկ թող կոտորվեն»*, *«Մեկը հազար դառնա»* ևն: Այս թեմայով 2022 թ. նոյեմբերի 14-ին լրատվականն իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է ևս մեկ ֆոտոլուր՝ *«Ստամբուլի պայթյունի զոհերի թիվը հասել է 6-ի, տուժածներինը՝ 81-ի»* վերնագրով, որի տակ հայ օգտատերերը կրկին գրառումներ են արել այն մասին, որ թուրքերին

քիչ է, և զոհերը պետք է ավելի շատ լինեին. «մեկը հազար մեկը միլիոն, ինչքան շատ պակաս են ենքան շուտ կհասցնենք պետությունը հզորացնել: Բայց հույսներս չդնենք իրանց պակասելուն ըսենց դեպքերի համար, այլ մենք շատանանք ու հզորանանք, որ պատրաստ լինենք ցեղասպան տականքին դիմակայելու», «Քիչ են սատկել, ավելի շատ պիտի սատկեին»¹⁰⁶: Սա էթնիկ խմբի դեմ ատելության խոսքի օրինակ է, որն ավելի է խորացնում երկու ժողովուրդների միջև երկխոսության հնարավոր անդունդը:

«In.am» լրատվականը հրապարակել է «2 զոհ Ստամբուլի հայ կաթոլիկ «Սուրբ Փրկիչ» եկեղեցում բռնկված հրդեհի հետևանքով» վերնագրով լուր: Օգտատերերը և՛ Ֆեյսբուքում, և՛ Ինստագրամում չպարզված հանգամանքներում կատարվածի համար մեղադրել են թուրքերին, բռնության կոչեր և անեծքներ գրել. «Էսքան ժամանակ տեսել եք որ մի հատ մեջիթ վառվի՞ թուրքերը հայերի կուլտուրան են վերացնում», «թուրքի ձեռքի գործ, ձեր պատիժը հեռու չի»¹⁰⁷: Օգտատերերն այսկերպ բամբասանքներ են տարածել, որոնց հետևանքով ատելություն և թշնամանք է առաջանում երկու ժողովուրդների միջև: Այն կարող է նաև հասարակության շրջանում կասկածներ սերմանել կատարված դեպքի վերաբերյալ:

¹⁰⁶ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2022 թ. նոյեմբերի 14-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/azatutyun/posts/pfbid02zequqJ9gwwX32yJP7Yfjdk8VEvfQLLMER2KdrSutLosvB2LK4vVLjEPSd7ejXVMZl>:

¹⁰⁷ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2023 թ. հունվարի 24-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/watch/?v=583590110248575>:

Ատելության խոսքի թիրախում է եղել նաև Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: «İin.am»-ի հրապարակած *«Մեզ հետաքրքրում է, թե ինչպես կարող ենք ապահովել խաղաղությունը. Էրդողանի հայտարարությունը»* վերնագրով լուրի տակ ֆեյսբուքյան օգտատերերը թիրախավորել են Թուրքիայի նախագահին՝ նրան անվանելով *«շիզոֆրենիկ»*, *«հրեշ»*, *«նեռ»*, *«անասուն»*, *«թուրք շուն»*, *«սատանա»* ևն¹⁰⁸: Օգտատերերի մեծ մասը գրել է *«սատկես»*, *«քո մահն ենք ուզում»* արտահայտությունները: Թուրքիայի նախագահի հասցեին արված վիրավորանքներն արտացոլում են նաև օգտատերերի՝ թուրքերի դեմ էթնիկ ատելության դրսևորումները:

Թուրքերի դեմ ատելության խոսքը մեծ ծավալների է հասնում ավերիչ երկրաշարժից հետո: Սոցիալական մեդիայում օգտատերերը թիրախավորել են թուրքերին՝ դարձյալ անեծքներ գրելով: «Ազատություն»-ը հրապարակել է լուր՝ *«Ավերիչ երկրաշարժ Թուրքիայում, կան տասնյակ զոհեր»* վերնագրով: Ֆեյսբուքյան օգտատերերը նյութի մեկնաբանություններում գրառումներ են կատարել, որոնք էթնիկ ատելության դրսևորումներ են պարունակում թուրքերի և ադրբեջանցիների դեմ *«բա խի չեն սատկել»*, *«մեկը հազար անի»*, *«թրքանոց բիզիմդիր»*, *«տարոսը Ադրբեջանին»*, *«քիչ է»*, *«շարունակական լինի»*, *«վերանան երկրի երեսից»*, *«սատկեք»*, *«սաղ Թուրքիան պիտի խորտակվի»*, *«մահ թուրքին»*

¹⁰⁸ Տե՛ս «İin.am»-ի 2023 թ. հունվարի 9-ի հրապարակման մեկնաբանությունները՝

<https://www.facebook.com/İin.am/posts/pfbid02e29hpdTgAEP12e2AindXh2TD9jqUoihtztjuwxP9FuBtS4A1tNwa56YUgw818RrnBl>:

ան¹⁰⁹: Նույնաբովանդակ մեկնաբանություններ են գրվել նաև «Հրապարակ»-ի՝ «*Թուրքիայում երկրաշարժի զոհերի թիվն աճում է*» վերնագրով կյուրթի տակ. «*հասնում ա սրանց*», «*ալլախն էլ է մեր կողմից*», «*ավելին ենք ցանկանում*», «*այրվեն դժողքի կրակում*», «*աստված մեկը հազար անի*», «*թուրքեր սասկեք*», «*Բնաջնջվեք տեղով ցեղով*»¹¹⁰: Նման բովանդակությամբ աստելության խոսքը վիրավորանք է, բռնության կոչ ուղղված կոնկրետ ազգի, այս պարագայում թուրքերի դեմ:

¹⁰⁹ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2023 թ. փետրվարի 6-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/azatutyun/posts/pfbid022Rsq9W8QBXo76WTkxeiPKo5qZuFZVMcoxQCnug94DDdZ421p5dRoVf49TtKNNC2WI>:

¹¹⁰ Տե՛ս «Հրապարակ» լրատվականի 2023 թ. փետրվարի 6-ի հրապարակման մեկնաբանությունները՝ <https://www.facebook.com/hraparak/posts/pfbidONVqeYkzYBABLUF3JisYBCPd3X2i9kV89jdmdGR7RZqYuxYGP2zYUeubXfu3Ykxul>:



5.4 Ադրբեջանցիների դեմ ուղղված ատելության խոսքը հայկական մամուլում

Հայկական մամուլում ատելության խոսքի թիրախում են հայտնվել **ադրբեջանցիներն ու Իլհամ Ալիևն անձնապես**: Հարկ ենք համարում նշել, որ ադրբեջանցիները հիմնականում թիրախավորվել են սոցիալական մեդիայում օգտատերերի մեկնաբանությունների միջոցով կան նաև հեռուստահաղորդումների ժամանակ թիրախավորման դեպքեր: «Ադրբեջանցի» բառը հայ օգտատերերն օգտագործել են նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին և իր թիմին վիրավորելու համար, ինչն արդեն իսկ ատելության խոսքի դրսևորման օրինակ է: Սոցիալական մեդիայում գործող լրատվականներում հիմնականում տարածվել են Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Հայաստանին և Արցախին վերաբերող հայտարարությունների թարգմանությունները, որոնց մեկնաբանություններում օգտատերերը հայիոյանքներ, վիրավորանքներ, անձը նսեմացնող արտահայտություններ են գրել:

Ադրբեջանի և Իլհամ Ալիևի դեմ ուղղված ատելության խոսքը մեծ ծավալների է հասնում պայմանավորված Հայաստան-ՀԱՊԿ հարաբերությունների լարմամբ, Լաչինի միջանցքի փակմամբ, Հայաստան-Ադրբեջան խաղաղության

պայմանագրի դրույթային կետերի փոխանակմամբ: Հարկ է նշել, որ երբեմն Ադրբեջանի նախագահի հայտարարությունները, որոնք հրապարակվել են հայկական մամուլում, ատելության խոսք, թշնամանք կամ սպառնալիք են պարունակել: «Հրապարակ» լրատվականը հրապարակել է Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հայտարարությունը, որտեղ նշվում է. «Մենք ՀԱՊԿ-ում ավելի շատ ընկերներ ունենք, քան Հայաստանը»: Ֆեյսբուքյան օգտատերերն Ադրբեջանի նախագահի և ՀԱՊԿ անդամների մասին վիրավորական բառերով մեկնաբանություններ են գրել: Մասնավորապես Ալիևն անվանել են «կեղտ», «անասուն», «բեղլու», «ոչխար», իսկ ՀԱՊԿ մյուս անդամներին՝ «աղբանոցի առնետներ» և «կեղտեր»¹¹¹: Հատկանշական է, որ հայալեզու նյութերի տակ կան և՛ հայերի, և՛ ադրբեջանցիների գրած մեկնաբանություններ, որոնցով սոցիալական մեդիան հայերի և ադրբեջանցիների համար դարձել է ատելության խոսքի առճակատման վայր:

Օգտատերերն ատելության խոսք պարունակող մեկնաբանություններ են գրել նաև ոչ քաղաքական բնույթի հոդվածների տակ, օրինակ՝ «Ազատության» հրապարակած «Բաքվի տոնավաճառում երկու տասնյակ խանութ է հրդեհվել» լուրի: Մեկնաբանություններում ադրբեջանցի և հայ օգտատերերը փոխադարձ հայիությանքներ և վիրավորանքներ են գրել. հայերն ադրբեջանցիներին անվանել են «ոչխար»,

¹¹¹ Տե՛ս «1in.am»-ի 2022 թ. նոյեմբերի 21-ի հրապարակումը՝ <https://www.facebook.com/1in.am/posts/pfbid02ff8zC5LfJupQM6FQ5VubZtyaUA88zxAfQphtpmFgaJUQuqEF8CDW7NVw8wv2Wvykl>, <https://www.1in.am/3193634.html?fbclid=IwAR1dp3d2w3gmsHev3OhUU3JQO4bddE1zURs5J54Wu8L3IVKzAXj2bIhZbTM>:

ադրբեջանցիները հայերին՝ «խոզ»¹¹²: Ատելության խոսք դրսևորվում է միմյանց նկատմամբ վիրավորանքների, հայհոյանքների, նսեմացումների միջոցով երկու հասարակություններում էլ խորացնելով էթնիկական ատելության անդունդը:

¹¹² Տե՛ս «Ազատության» 2023 թ. հունվարի 9-ի հրապարակումը՝ <https://www.facebook.com/azatutyun/posts/pfbid0UwRw9uzcPQnXaCBprj5Qcc6L1uAesnPIfCdUYr1a4hhPmFsTthuTgMPQc7ahkWYEI>:



5.5 Հայերի դեմ ուղղված ատելության խոսքն ադրբեջանական մամուլում

Ադրբեջանական մամուլում հայերի դեմ ուղղված ատելության խոսքի դրսևորումներ առկա են ինչպես սոցիալական մեդիայում՝ օգտատերերի մեկնաբանություններում, այնպես էլ պաշտոնատար անձանց ելույթներում՝ նախագահից մինչև Մեջլիսի պատգամավորներ: Պաշտոնյաներն ատելության խոսքով են հանդես գալիս իրենց հայտարարություններում, մամուլի ասուլիսներում, ֆեյսբուքյան գրառումներում և միջազգային հանդիպումներում: Վերջինս առանձնանում է, քանի որ նման կերպ ոչ միայն ներհասարակական շրջանակներում է հայերի դեմ ուղղված ատելության խոսքը տարածվում, այլև այն բոլոր երկրներում, որոնց ներկայացուցիչների հետ Արդբեջանի պաշտոնատար անձինք հանդիպումներ են ունենում: Այս պարագայում գործ ունենք ազդեցության գործակալների հետ, որոնք մեծ հեղինակություն ունեն հասարակության մեջ. նրանց տարածած ատելության խոսքը կոնկրետ հասցեատերեր ունի: Ատելության խոսքը հիմնականում ուղղված է հայերի, ՀՀ իշխանությունների և Նիկոլ Փաշինյանի դեմ:

Այսպես, ատելության խոսքի հիմնական թեմանից մեկը եղել է Հայաստանին որպես «օկուպանտ», «ֆաշիստ» երկիր ներկայացնելը, իսկ հայերին որպես «դավաճան» դիտարկելը: Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության ղեկավար, գեներալ-գեոպոլիտիկոս Ալի Նազիևն իր ելույթում ասել է. «...շատ վտանգավոր միտում է առաջին հերթին հայկական պետության համար: Ասել եմ, էլի կասեմ եթե տեսնենք, որ հայկական ֆաշիզմը գլուխ է բարձրացնում, եթե տեսնենք, որ մեր ժողովրդի ու պետության համար վտանգի նոր օջախ է առաջանում, առանց վարանելու հերթական անգամ կջախջախենք հայկական «երկաթե բռունցքը» տեղում. թող ոչ ոք դա չմոռանա»¹¹³: Սա ոչ միայն պաշտոնատար անձի ազդեցության գործակալի միջոցով ատելության խոսքի տարածում է, այլև բռնության կոչ է հայերի դեմ: Նշենք, որ Հայաստանն ադրբեջանական մամուլում մեղադրվում է 30 տարի ադրբեջանական հողերը օկուպացրած պահելու, պատերազմական հանցագործությունների, ինչպես նաև 2020 թ. պատերազմից հետո Նոյեմբերի 9-ի հռչակագիրը խախտելու և ականապատ տարածքների քարտեզները չտրամադրելու համար: Այս թեզերը կրկնվում են Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարություններում. «Հայաստանն է, որ խախտել է միջազգային իրավունքի բոլոր նորմերը և սկզբունքները, շուրջ 30 տարի օկուպացրել է տակ պահել Ադրբեջանի տարածքները, մեկ գիշերվա ընթացքում Խոջալուում, ինչպես նաև Ադրբեջանի այլ քաղաքներում հարյու-

¹¹³ Տե՛ս «musavat.com»-ի 2022 թ. նոյեմբերի 5-ի հրապարակումը՝ https://www.musavat.com/news/eli-nagiyev-ermenistan-azerbaycanin-tehluksesizliyiine-risk-yaradacaq-butun-cirkin-emellerden-cekimelidir_933990.html:

րավոր խաղաղ բնակիչների զանգվածային ջարդի ենթարկել, Հայաստանից և Ադրբեջանի օկուպացված տարածքներից վտարել մոտ 1 միլիոն ադրբեջանցիների. օկուպացիոն քաղաքականության ավարտից հետո դեռևս չի դուրս բերել իր անօրինական զինված խմբավորումները Ադրբեջանի տարածքներից, ինչպես նաև շարունակում է ռազմական և ականային սպառնալիքները»: «Հայաստանի ԱԳՆ-ի՝ ադրբեջանական կողմին Լաչին տանող ճանապարհը փակելու և եռակողմ հռչակագիրը խախտելու համար մեղադրելը, ոչ այլ ինչ է, քան կեղծիք»¹¹⁴: Պատերազմական հանցագործությունների վերաբերյալ թեզերը կրկնում են Ադրբեջանի նաև մյուս պաշտոնատար անձինք: Որպես օրինակ կարող է դիտարկվել Ադրբեջանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Սաբինա Ալիևայի միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին ուղղված դիմումը. «Հայաստանի գերեվարած և պատանդ վերցրած ադրբեջանցիները դաժանորեն խոշտանգվել և սպանվել են, իսկ հետո նրանց աճյուններն անմարդկային ձևով զանգվածաբար թաղվել են»¹¹⁵: Հայտարարությունների նման ձևակերպումներն աստիճանաբար են սերմանում հայերի դեմ Ադրբեջանում: Դրանք, բացի այդ, միջազգային հնչեղություն ունենալով, կարող են

¹¹⁴ Տե՛ս «apa.az»-ի 2022 թ. դեկտեմբեր 13-ի հրապարակումը https://apa.az/az/xarici-siyaset/xarici-isler-nazirliyi-ermenistan-xin-in-susalacin-yolunda-son-veziyyetle-elaqedar-esassiz-beyanatini-qetiyetle-redd-edirik-737246?fbclid=IwAR34a8v6oBxv4GBkQNHD2kU4I3fEv-T06c1SynsdxskRHlaJUXc_K1uXnU:

¹¹⁵ Տե՛ս «apa.az»-ի 2023 թ. հունվարի 25-ի հրապարակումը՝ https://apa.az/az/sosial/ombudsman-ermenistanin-toretldiyi-muharibe-ve-ekoloji-cinayetlerle-bagli-yeniden-beynelxalq-teskilatlara-muraciet-edib-744192?fbclid=IwAR1KULxZv4T-TBrv_YWnvAmUvjdSSmY7ReeMht_-dRa3EQAgphuNr8yvDns:

նպաստել միջազգային հանրության շրջանում Հայաստանի և հայերի դերի նսեմացմանը: Ադրբեջանական հրապարակումներում Հայաստանը ներկայացվում է որպես ցեղասպան երկիր: Ադրբեջանի նախկին զինդատախազ Իլհամ Մամեդովը «Trend BIA»-ի «Սահիլ Զարիմլիի հետ ակտուալ» հաղորդման ժամանակ ասել է. «Հայերն ադրբեջանական հողերում ապօրինի վերաբնակեցվելուց հետո երկար տարիներ ցեղասպանել են մեր ժողովրդին: Նրանց դաժանության հիմքում ահաբեկիչ Գարեգին Նժդեհի ֆաշիստական գաղափարախոսությունն է: Հայկական պետությունը որպես իր քաղաքական գիծ ընտրել է ահաբեկչությունը: Ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակ հայերը սարսափելի ռազմական հանցագործություններ են կատարել ադրբեջանցիների նկատմամբ: Մեր տասնյակ բնակավայրերում անխնա ցեղասպանություններ են իրագործվել: Մարդկանց տանջել են աներևակայելի խոշտանգումներով»¹¹⁶: Նման ձևակերպումները թիրախավորում են հայերին՝ որպես ցեղասպան ազգի ներկայացնելով բիրտ և անզգա ազգ: Թիրախավորվում է նաև Գարեգին Նժդեհը, որին հաղորդման հյուրը պիտակավորել է որպես «ֆաշիստ»: Հայերին ուղղված «ցեղասպան» պիտակավորումն ավելի է տարածվել փետրվարի վերջին՝ «Խոջալուի հիշատակի օրերին: Մամուլի գրեթե բոլոր միջոցներում, դրանց սոցցանցային էջերում, ինչպես նաև տելեգրամյան ալիքներում տեղ են գտնում իբրև թե հայերի կազմակերպած «ցեղասպանության» մասին վկայություններ, պատմություններ, օրվան նվիրված հիշատակի արարողությունների լուսաբանումներ, ղարաբաղյան հակամարտության մասին պատմագիտական տեղեկություններ:

¹¹⁶ Տե՛ս «az.trend.az»-ի 2023 թ. փետրվարի 14-ի հրապարակումը <https://az.trend.az/azerbaijan/politics/3710045.html>

«Ara.az», «haqqin.az», «Девичья башня» և «caliber.az» տելեգրամյան հարթակներում թեմայի վերաբերյալ հրապարակվել է հայերին թիրախավորող շուրջ 50 նյութ:

Նույնանման բովանդակություն է ունեցել նաև Իլհամ Ալիևի Շուշիում նոյեմբերի 8-ի հայտարարությունը: Հայտարարության օրը շատ կարևոր նշանակություն ունի, քանի որ այն պատերազմի վերջն ազդարարող օր է և ազդեցիկ է թե՛ ադրբեջանցիների, թե՛ հայերի համար: Ալիևն ասել է. «Ներկայիս ադրբեջանական բանակն ավելի ուժեղ է, քան երկու տարի առաջվա ադրբեջանական բանակը, և դա պետք է իմանան բոլորը, Հայաստանը և բոլորը», «Այնպիսի ջախջախիչ հարված հասցրինք թշնամուն, որ նա դեռ չի կարողանում ուշքի գալ: Տեսեք, թե Հայաստանում ինչ գործընթացներ են ընթանում, հիմա արդեն իրենց գայրույթն ու թույլը թափում են իրար վրա: Տեսեք, թե այնտեղ ինչ գործընթացներ են ընթանում այս երկու տարվա ընթացքում», «Մզկիթներ ոչնչացնողը չի կարող բարեկամ լինել մահմեդական երկրների հետ»¹¹⁷: Նման ձևակերպումները ոչ միայն նսեմացնում են հայերին և թշնամանք տարածում, այլև սպառնալիքի տարրեր են պարունակում: Ատելության խոսքով ողողված այս հայտարարությունն արտատպել է 29 կայք:

Հարկ է ընդգծել, որ **Լաչինի միջանցքի փակումը** ևս սրել է իրավիճակը: Այս պարագայում ևս պետական, պաշտոնական տեղեկատվությունն ու սոցիալական

¹¹⁷ Տե՛ս «apa.az»-ի 2022 թ. նոյեմբերի 8-ի հրապարակումը՝ https://apa.az/az/resmi-xeber/prezident-ilham-eliyev-zefer-gunumunasibetile-susada-teskil-olunan-tedbirde-istirak-edib-yenilenib-731624?fbclid=IwAR2taAlmIgu7jzgggIXsdIKbCnoD5-cg_AkELwDWppBqZXvyBeuE5bHcPM

ցանցերում օգտատերերի մեկնանաբությունները թիրախավորել են հայերին և ՀՀ իշխանություններին: Ադրբեջանի ԱԳՆ-ի՝ ադրբեջանցիների կողմից Լաչինի ճանապարհն արգելափակելու մասին ՀՀ ԱԳՆ-ի հայտարարության պատասխանի մեկնաբանությունները հեղեղված են հայերին և ռուս խաղաղապահներին ուղղված ատելության խոսքով. «Քանի դեռ մեր հողերի վրա ռուս օկուպանտներ կան, հայերն արմատականանալու են և Նորից փորձելու պատերազմ սկսել...», «Ռուսաստանին պետք է վտարել, հետո բոլոր հայկական ստորաբաժանումներին Ղարաբաղը լքելու համար 24 ժամ տալ: Հրաժարվելու դեպքում բոլորին ոչնչացնել», «Ավելի լավ է ճանապարհիդ առյուծ լինի, քան տանդ ապրող հայ»¹¹⁸: Այստեղ ակնհայտ է ոչ միայն ատելության խոսքը, այլև բռնության և խաղաղ բնակչության տեղահանման կոչերը: Հարկ է ընգծել, որ պաշտոնատար անձինք ատելության խոսքով են հանդես գալիս նաև միջազգային գործընկերների հետ հանդիպման ժամանակ. այսպերպ հայերի դեմ ուղղված ատելության խոսքը ստանում է մասշտաբային բնույթ: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը 2023 թ. հունվարի 18-ին Դավոսում Լիտվայի Հանրապետության նախագահ Գիտանաս Ետեմուսի հետ հանդիպման ժամանակ ասել է. «Հայաստանը միջազգային հանրությանը շփոթեցնելու նպատակով զբաղվում է Լաչինի ճանապարհի իրադարձությունների վերաբերյալ մանիպուլյացիաներով»¹¹⁹:

¹¹⁸ Տե՛ս «minval.az»-ի հետյալ կյութի մեկնաբանությունները՝ <https://minval.az/news/124289724>

¹¹⁹ Տե՛ս «modern.az»-ի 2023 թ. հունվար 18-ի հրապարակումը՝ <https://modern.az/aktual/390530/ilham-eliyev-litvali-hemkari-ile-grusdu-fotolar/>

Ադրբեջանի նախագահն ասել է, որ հայկական կողմը երկու տարուց ավելի է, ինչ Լաչինի ճանապարհն օգտագործում է ականների, զինամթերքի և անձնակազմի տեղափոխման համար: Այս ձևակերպումներն արտատպել է 15 կայք, ինչը խոսում է ատելության խոսքի շղթայական տարածման մասին: Այս թեմայի վերաբերյալ ատելության խոսքը մեծ ծավալների է հասնում հատկապես արցախցի երեխաների վերադարձի լուրի շրջանակներում: Սոցիալական մեդիայում տելեգրամյան ալիքում, օգտատերերը թիրախավորել են հայ երեխաներին՝ նշելով. «Այս անպիտանների աչքերում, բացի ատելությունից և վախից, ես ոչինչ չտեսա: Պետք էր բոլոր աղջիկներին իջեցնել և տանել անհայտ ուղղությամբ», «Նրանք իրենք են այսպես վախեցնում յուրայիններին, որ մյուս երեխաները մասն Չայաստանում»¹²⁰: Մեկնաբանություններն ատելության խոսք և բռնության կոչեր են պարունակում, ընդ որում դրանցում առկա են սեռով պայմանավորված բռնության կոչեր: Այս պարագայում նման ատելության խոսքն ուղղված է հատկապես երեխաների դեմ. կրանց մեջ կարող են առաջացնել թե՛ թշնամանք, թե՛ վախ և թե՛ ատելություն:

Թեմայի վերաբերյալ խոսելիս հարկ է նշել նաև, որ ադրբեջանական մամուլում Չայաստանը թիրախավորվել է բնապահպանական խնդիրներ ստեղծելու համար: Ադրբեջանի ՄԻՊ գրասենյակի փոխանցմամբ՝ Ադրբեջանի Չանրապետության մարդու իրավունքների պաշտպան Սաբինա Ալիևան Ադրբեջանի դեմ Չայաստանի կատարած պատերազմական և բնապահպանական հանցագործությունների

¹²⁰Տե՛ս «Девичя Башня» տելեգրամյան ալիքի 2023 թ. հունվարի 18-ի հրապարակման մեկնաբանությունները:

հարցով դիմել է միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին՝ նշելով. «Յայաստանի՝ Ադրբեջանի տարածքներում բնական ռեսուրսների ապօրինի շահագործման և կողոպուտի հետևանքով շրջակա միջավայրին լուրջ վնաս է հասցվում»¹²¹: Սաբինա Ալիևան ազդեցության գործակալ է, որի հայտարարությունները հասարակության մեջ կարող են արմատավորել կարծիք, որ հայերը գողեր են և ապօրինի գործողություններ են կատարում: Յարկ է է ընդծել, որ հայտարարությունը դարձյալ ուղղված է միջազգային հանրությանը, ինչն ընդլայնում է ատելության խոսքի լսարանը: «Ntv.az»-ում ներկայացվել է հոդված՝ «Յայաստանի՝ Ադրբեջանի դեմ կատարած բնապահպանական ահաբեկչությունը» վերնագրով, որտեղ նշվում է. «Թշնամին շահույթ ստանալու նպատակով ոչնչացրել է Ջանգիլանի, Աղդամի, Քալբաջարի, Գուբադլիի և այլ շրջանների արժեքավոր ծառատեսակներն ու որպես կիսաֆաբրիկատներ վաճառել այլ երկրների», «Բազմիցս ահազանգեր են հնչել հայ ֆաշիստների օկուպացրած տարածքներում կատարված այս դաժանության և բնապահպանական ահաբեկչության մասին, հարցեր են բարձրաձայնվել միջազգային կառույցներում, սակայն այս ամենը ոչ մի արդյունք չի տվել»¹²²: Յոդվածի վերնագիրն ինք-

¹²¹ Տե՛ս «apa.az»-ի 2023 թ. հունվարի 25-ի հրապարակումը՝ https://apa.az/az/sosial/ombudsman-eremenistanin-toretldiyi-muharibe-ve-ekoloji-cinayetlerle-bagli-yeniden-beynelxalq-teskilatlara-muraciet-edib744192?fbclid=IwAR1KULxZv4T-TBv_YWnvAmUvjdSSmY7ReeMht_-dRa3EQAgphuNr8yvDns:

¹²² Տե՛ս «Ntv.az»-ի 2023 թ. փետրվարի 2-ի հրապարակումը՝ <https://ntv.az/news/siyaset/77984-eremenistanin-azerbaycana-qarsi-toretldiyi-ekoloji->

Նին ատելության խոսք է պարունակում: Նման ձևակերպումները աղբբեջանական հասարակության մեջ կարող են արմատավորել հայերի՝ ահաբեկիչ լինելու մասին կարծիքը: Դրանք միտված են հանրության ուշադրությունը հրավիրելու հայերի «դաժան» գործողություններին:



9 may 2023. Çərşənbə axşamı

NTV

Xəbərlər Verilişlər Proqram Qalereya Haqqımızda

Ermənistanın Azərbaycanı qarşı törətdiyi ekoloji terror



Պատկեր 7.

Էկրանակադր աղբբեջանական «ntv.az» լրատվական պորտալից, որտեղ հայերն անվանվում են տեռորիստ

Աղբբեջանական մեդիայում ատելության խոսքի թիրախում են եղել նաև ՀՀ իշխանությունները և վարչապետ Նիկոլ Փաշինյանն անձնապես: Փաշինյանին պիտակավորել

terror?fbclid=IwAR1gRgBAAxNHXDKnRN2zNf3HovuKpl8s7MpSeVsQPUW66seTWXgnSLPAYsA:

են որպես «պատերազմական հանցագործ», նշել. «Իսկ եթե բնական հիմարությունից ելնելով Փաշինյանը սա չի հասկանում, և թիմը հավաքել է իր կերպարով ու նմանությամբ, ապա սա դեռ ոչինչ չի փոխում», «Հայտնի մեջբերում կա իտալացի դրամատուրգ Կառլո Գոցցիից. «Աշխարհում ավելի մեծ դժբախտություն չկա, քան իշխանությունը զավթած ապուշը»¹²³: Նման ձևակերպումները վիրավորանք են ՀՀ վարչապետի հասցեին և կարող են նսեմացնել Նիկոլ Փաշինյանի դերը հանրության մեջ: Հոդվածը ռուսերեն է, ինչը մեծացնում է ատելության խոսքի լսարանի մասշտաբները:

Ատելության խոսքի թիրախում հայտնվել է նաև ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանը: «Day.az»-ում հրապարակված հոդվածում նշվում է. «Եթե նայեք պարոն դեսպանի վերջին թվիթը, ապա պարզապես կսարսափեք, թե ով է Հայաստանում զբաղվում դիվանագիտությամբ և քարոզչությամբ», «Այնպես որ, պարոն դեսպանի զավեշտալի հայտարարությունները պարզապես փորձ են կոծկելու իրական վիճակը և խաբելու միջազգային միջևորդներին, ինչով, որ նա միշտ է զբաղվում»¹²⁴: Նման ձևակերպումներն միտված են նսեմացնելու ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանի հեղինակությունը և ցույց տալու նրա ոչ արհեստավարժ լինելը: Նման ձևակերպումներից հետո միջազգային հասարակությունը կարող է անվստահություն հայտնել և դիվանագիտական հարաբերություններում լուրջ չընդունել դեսպանին:

¹²³ Տե՛ս «Minval.az»-ի 2022 թ. նոյեմբերի 11-ի հրապարակումը՝ <https://minval.az/news/124288089>:

¹²⁴ Տե՛ս «Day.az»-ի 2022 թ. նոյեմբերի 27-ի հրապարակումը՝ <https://news.day.az/politics/1512920.html>:

Դիտարկված ժամանակահատվածում ադրբեջանական մամուլում քննարկվել են նաև հայ-ռուսական հարաբերությունները: Դիտարկված նյութերից շատերը պարունակել են սադրիչ արտահայտություններ՝ երկու երկրների հարաբերությունների վատթարացմանը ուղղված: Օրինակ՝ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր, Ադրբեջան-Ռուսաստան միջխորհրդարանական հարաբերությունների աշխատանքային խմբի անդամ Ջեյհուն Մամեդովը «apa.az»-ին տված հարցազրույցում անդրադարձել է Հայաստան-ՀԱՊԿ և Հայաստան-Ռուսաստան հարաբերություններին՝ նշելով. «Մինևույն ժամանակ, Հայաստանը ձեռնարկեց քայլեր՝ ՀԱՊԿ-ի հիմքերը խարխլելուն ուղղված, ռուսական սպառնազինության համակարգերի բոլոր տեխնիկական բնութագրերը, ռուսական մարտական պլանները, մարտական պատրաստության և ռազմական գործողությունների մեթոդաբանությունը փոխանցվեցին Արևմուտքին», «Ռուսաստանի ռազմաուսումնական հաստատություններում սովորող հայ սպաների ուսումնական բոլոր նյութերը և նրանց հետ սովորող ռուս զինծառայողների անձնական տվյալները փոխանցվել են Արևմուտքին», «Այսօր Հայաստանում ակտիվ աշխատանք է տարվում ռուսական ռազմաբազաները երկրից դուրս բերելու ուղղությամբ»¹²⁵: Այս հայտարարությունները տարածվել են ազդեցության գործակալի միջոցով և բամբասանք և ասպատեղեկատվություն են պարունակում. դրանք ուղղված են հանրության մեջ Հայաստանի դերի նսեմացմանը, հայ-ռուսական հարաբերությունների խարխլմանը, ինչպես նաև

¹²⁵ Տե՛ս «apa.az»-ի 2022 թ. նոյեմբերի 22-ի հրապարակումը՝ <https://apa.az/az/mdb-olkeleri/ceyhun-memmedov-pasinyanin-addimlari-ktmt-ve-rusiyaya-qarsi-tehqir-idi-734129>:

ռուսաստանյան հանրության մեջ Հայաստանի՝ որպես դավաճան երկրի ներկայացմանը: Նույնաբովանդակ ատելության խոսք առկա է նաև Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեի՝ Մոսկվայում տեղի ունեցած ասուլիսում: Նա ասել է. «Պատրիարք Կիրիլի ուշադրությանն եմ ներկայացրել նաև հայերի վերաբերմունքը մեր մզկիթների նկատմամբ, վանդալիզմի փաստերը, մեր մզկիթներում խոզեր պահելու հանգամանքը, Ռուս ուղղափառ եկեղեցու ոչնչացման փաստերը, և նա, իհարկե, իր բացասական վերաբերմունքն է արտահայտել այս հարցում:Վեհափառ Կիրիլին ասացի, որ Աղդամն ամբողջությամբ ավերվել է, և հայերը նույնիսկ փոխել են Ռուս ուղղափառ եկեղեցու ծագումը (դարձրել են Հայ առաքելական)»¹²⁶: Կրոնական թեմայով նման ձևակերպումներն ուղղված են միմիայն երկու ազգերի՝ հայերի և ռուսների միջև թշնամանքի առաջացմանը: Հանդիպումը տեղի է ունեցել Մոսկվայում, լրագրողները եղել են տեղացիներ և նման ձևակերպումների հասցեատերը ռուս հասարակությունն է: Դրանք կարող են ռուս հասարակության մեջ ատելություն և հակակրանք առաջացնել հայերի նկատմամբ: Նույն գրույցի ժամանակ Ալլահշուքյուր Փաշազադեն թիրախավորել է նաև Ռուբեն Վարդանյանին և Հայաստանի գործողությունները դարձյալ որակել որպես «ռևանշիստական». «Պատրիարք Կիրիլի հետ զրույցում ես ասացի ափսոս, որ Մոսկվայից նոր մարդ [Ռուբեն

¹²⁶Տե՛ս «apa.az»-ի 2022 թ. դեկտեմբերի 9-ի հրապարակումը՝ https://apa.az/az/din/allahsukur-pasazade-patriarx-kirille-xankendiye-moskvadan-yeni-bir-sexsin-gelmeginin-teessuf-dogurdugunu-soyledim-musahibe-736673?fbclid=IwAR0Z-YPmL801fjvjGeEGhRszWxyb_RGM3xOYEK024Tf2CuvuelJneDq_C9k:

Վարդանյանը] Է եկել Խանքենդի [Ստեփանակերտ], ժողովրդին ռևանշիզմի Է դրդում, իսկ Հայ եկեղեցու ղեկավարը աջակցում Է դրան: ...Տեղեկացրել եմ, որ հաղթած Ադրբեջանը տարածաշրջանում խաղաղության կոչ Է անում և տնտեսական նախագծերով հանդես գալիս, սակայն, ցավոք, Հայաստանը չի դադարեցնում ռևանշիզմի դրսևորումները»¹²⁷: Ընդհանուր առմամբ Վարդանյանը դիտարկված ժամանակահատվածում նվազագույնը տասն անգամ հայտնվել Է ատելության խոսքի թիրախում: Նրան ատելության խոսք հիմնականում ուղղել են երկրի բարձրաստիճան պաշտոնյաները, պաշտոնական լրահոսները և օգտատերերը՝ մեկնաբանություններում: Օրինակ՝ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Քամալ Ջաֆարովը խորհրդարանի նիստի ժամանակ անդրադարձել Է Արցախում տեղի ունեցող իրադարձություններին և միտք արտահայտել, թե Երևանն ու Ստեփանակերտն իրենք պետք Է «վտարեն» Ռուբեն Վարդանյանին¹²⁸: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵՄԽՎ) Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Սամեդ Սեիդովը ձմեռային նստաշրջանում ելույթ Է ունեցել, որտեղ ասել Է. «Ռուս օլիգարխ Վարդանյանը, որն այժմ գտնվում Է Եվրամիության և ԱՄՆ-ի պատժամիջոցների տակ, հայտնվել Է Ղարաբաղում: Այս Վարդանյանից Էլ են վախենում. այո, որովհետև այս Վարդանյանն ուզում Է իշխանության գալ, բայց ոչ թե Ղարաբաղում, այլ Հայաստանում:

¹²⁷ Տե՛ս «apa.az»-ի 2022 թ. դեկտեմբերի 9-ի հրապարակումը [https://apa.az/az/din/allahsukur-pasazade-patriarx-kirille-xankendiye-moskvadan-yeni-bir-sexsin-gelmesinin-teessuf-dogurdugunu-soyledim-musahibe-736673?fbclid=IwAR0Z-](https://apa.az/az/din/allahsukur-pasazade-patriarx-kirille-xankendiye-moskvadan-yeni-bir-sexsin-gelmesinin-teessuf-dogurdugunu-soyledim-musahibe-736673?fbclid=IwAR0Z-YPmL801fjvjGeEGhRszWxyb_RGM3xOYEK024Tf2CuvuelJneDq_G9k)

YPmL801fjvjGeEGhRszWxyb_RGM3xOYEK024Tf2CuvuelJneDq_G9k:

¹²⁸ Տե՛ս «apa.tv»-ի 2022 թ. դեկտեմբերի 20-ի հրապարակումը <https://fb.watch/hHgZFNLQ5K/>:

Այդ պատճառով էլ հայ պատգամավորներն այդքան անհանգստացած են»¹²⁹: Վարդանյանի մասին նման ձևակերպումները միտված են հասարակության մեջ վախ և տագնապ առաջացնելու նրա անձի և գործունեության նկատմամբ: Վերջին օրինակը նաև *ապատեղեկատվություն* է պարունակում, որի նպատակն է Վարդանյանի կերպարը ավելի վտանգավոր դարձնել հասարակության աչքերում:

¹²⁹ Տե՛ս «azertag.az»-ի 2023 թ. հունվարի 23-ի հրապարակումը՝ https://azertag.az/xeber/Semed_Seyidov_Ermenistan_Lachin_dehlizi_kim_i_meselelerle_beynelxalq_ictimaiyeti_chasdirмага_cehd_edir_VIDEO-2456969:



Ամփոփելով

«Քայերի դեմ արելության խոսքը ադրբեջանական մամուլում»
գլուխը՝

հարկ է կշել, որ ատելության խոսքի նման դրսևորումները ադրբեջանական հասարակության շրջանում **հայի կերպարի խեղաթյուրման, Հայաստանի Հանրապետությունը և հայ ժողովրդին որպես թշնամի և մշտական վտանգի աղբյուր ներկայացնելու, դրանով իսկ ադրբեջանական հասարակությանը տարբեր իրավիճակներում Հայաստանի դեմ թշնամական գործողությունների դրդելու** նպատակն ունեն: Ադրբեջանի ԱԳՆ-ն ՀՀ-ին մեղադրել է էթնիկ զտումների, օկուպացիայի, ադրբեջանցի խաղաղ բնակչությանը թիրախավորելու, Եռակողմ հռչակագիրը խախտելու և Լաչինի միջանցքը ականներ և ռազմական միջոցներ տեղափոխելու նպատակով օգտագործելու, իսկ Արցախի իշխանություններին բնակչությանը պատանդ պահելու և նրանց ելումուտն արգելելու համար: Վերոնշյալ թեզերը քննարկվել են մշադիտարկման բոլոր շաբաթների ընթացքում, ինչը խոսում է ատելության խոսքի քարոզչության մասին: Ատելության խոսքը գեներացվել է կրկնվող թեզերի միջոցով, որոնք դիտարկված չորս ամիսների ընթացքում ներկայացվել են հասարակությանը. այս ամենը խոսում է ատելության խոսքի քարոզչության մասին:

ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՅԱՅՏՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Մշտադիտարկված ժամանակահատվածում հանդիպել է նաև **Ճայրահեղական (Ֆաշիստական, Նացիստական) գաղափարախոսությամբ արտահայտված ատելության խոսք**¹³⁰՝ հրապարակված տպագիր թերթում և սոցիալական մեդիայում: 168.am-ը իր բլոգում հրապարակել է տելեգրամյան «Յոսանք/Hosank»¹³⁰ անվանումով ալիքի մի գրառում, որտեղ համեմատական է արվում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության լոգոյի և Թուրքիայում արտադրվող ապրանքների վրա փակցվող «yerli uretim» (տեղական արտադրանք) պիտակի հետ: Բլոգում վերոնշյալ գրառումը հրապարակվել է *«Ինչպես է առաջացել ԹԴ-ի լոգոն»* վերնագրով: Գրառման մեջ մասնավորապես նշվում է. *«Հայաստանը ներսից թրջացնելու ջիոդական ծրագիրը կանխելու ու ոչնչացնելու համար Հայաստանին պետք է ցեղային արժեքների վրա*

¹³⁰ <https://t.me/hosank/667>

հիմնված մի թարմ «ռադիկալ» ու «ֆաշիստական» քաղաքական ուժ, որը չի վախենում թշնամիների տարբեր պիտակներից ու իսկապես հավատարիմ է իր գաղափարներին և իր ողջ սրտով հավատում է «Հայաստանը՝ հայերին» կարգախոսին»:³¹ Այսպիսով, լրատվականը տելեգրամյան մասնավոր ալիքում գրառված կարծիքը ընթերցողին ներկայացնում է որպես ճշմարտություն: Բացի դա, ֆաշիստական կոչերով նյութի հրապարակում բլոգում և ֆեյսբուքյան էջում նշանակում է, որ լրատվականը խրախուսում է այդ պրոպագանդան: Մեկ այլ օրինակում «Իրավունք» թերթը հրապարակել է հոդված «Ամեն ինչ թուրքի համար, ոչինչ՝ ընդդեմ թուրքի» վերնագրով: Հոդվածում համեմատական է տարվում Իսպանիայի ֆաշիստական դիկտատոր գեներալ Ֆրանկոյի «Ամեն ինչ ազգի համար, ոչինչ՝ ընդդեմ ազգի» կարգախոսի հետ՝ նշելով, որ Նիկոլ Փաշինյանը հետևում է այդ կարգախոսին՝ պարզապես ամեն ինչ թուրքի համար, ոչինչ ընդդեմ թուրքի փոփոխությամբ:

Վերոնշյալ օրինակներից բոլորը վերագրվում են հայկական իրականությանը, ինչը ոչ միայն վտանգավոր է, այլ նաև մտահոգություն և անհանգստության առիթ, քանի որ ուղղակի կամ անուղղակի կերպով նման ձևակերպումներ պարունակող հրապարակումները գտնում են իրենց լսարանը՝ ձևավորելով կարծիք և համոզմունք:

³¹ Տե՛ս 168.am-ի դեկտեմբերի 20-ի հրապարակումը: Հասանելի է այստեղ՝

https://blog.168.am/blog/423354.html?fbclid=IwAR2rRvRaKInbjwi7o7p8fOix3SRvKsn2EznYXtly9O3EOQRjLA0COYod_k


Այդ ներքին թրջացմանը դիմադրելու համար ի գորու չեն Բայաստանի ոչ մի ներկա քաղաքական կուսակցություն, քանի որ բոլորը ազգայնականության մորթիով թաքնված նեոբրլզկիկյան կամ լիբերալ ուժեր են:

Նրանք, որոնք կարծում են հնարավոր է այս երևույթի դեմն առնել «պահպանողական» ֆլան ֆստան միջոցներով ոչ միայն չարաչար սխալվում են, այլև անտղղակիորեն օգնում են մեր թշնամիներին ու միայն խոչընդոտ են հանդիսանում, քանի որ իզուր տեղը ժամանակ են ծախսում, ժամանակ, որից մենք չատ չունենք:

Բայաստանը ներսից թրջացնելու ջիւղական ծրագիրը կանխելու ու ոչնչացնելու համար Բայաստանին պետք է ցեղային արժեքների վրա հիմնված մի թարմ «ռադիկալ» ու «ֆաշիստական» քաղաքական ուժ, որը չի վախենում թշնամիների տարբեր պիտակներից ու իսկապես հավատարիմ է իր գաղափարներին և իր ողջ սրտով հավատում է Բայաստանը Բայերին կարգախոսին:

Պատկեր 8.

168.am-ի ֆաշիստական գովք պարունակող գրառումը



ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ

6

Ատելության խոսքը մշտադիտարկված ժամանակահատվածում մեծ ծավալների է հասել **Պեմզաշեն գյուղում կատարված սպանության** հետևանքով: Թե՛ հեռուստահաղորդումներում, թե՛ սոցիալական մեդիայում և թե՛ տպագիր մամուլում դեպքի վերաբերյալ լուսաբանումները լեցուն են եղել ատելության խոսքով: Անհրաժեշտ է ընգծել, որ եթե մնացած մյուս դեպքերում ատելության խոսքը ստեղծվում էր ՋԼՄ-ի միջոցով՝ արտահայտելով հաղորդավարի կամ հրավիրված հյուրի կարծիքը, իսկ հասարակական անհանդուրժողականությունը դրսևորվում էր հիմնականում սոցիալական մեդիայում, ապա Պեմզաշենի սպանության դեպքի պարագայում գործ ունենք հասարակական համատարած անհանդուրժողականության հետ՝ տպագիր մամուլ, հեռուստահաղորդումներ, սոցիալական մեդիա:

«Լուրերի թողարկում» հաղորդման ժամանակ ներկայացվում է քաղաքացիների կարծիքը. *«Ըդոնց է՛ն չիդեմ, բայց գիտեմ, որ է՛ն մեկը վրեն առել է՛ Վրույր է, ինչ գրող ու*

ցավ է, թաղվածը»¹³²: «Ազատություն» լրատվականը Պեմզաշենի սպանության դեպքի մասին տեսանյութ է տեղադրել, որտեղ ատելության խոսք, վիրավորանք և հայիոյանք չկա, սակայն Ֆեյսբուքում և Յություբում օգտատերերը բռնության կոչերով ողողված մեկնաբանություններ են գրել սպանության կասկածյալների դեմ առաջարկելով սատկացնել, գնդակահարել, սպանել նրանց («Ոչնչացրեք՝ կտրեք ձեռքերը՝ անդամահատեք՝ անմեղ երեխեքի ցավն այսօր բոլորիս տներում է՝ թշնամուն մոռացնել տվեցին իրենց դաժանութամբ»), ինչպես նաև նրանց ընտանիքներին («Սատկացրել իրենց ընտանիքներով վոր էդ մարդու սիրտը մի քիչ հովանա մորթենք բոլորին»)՝¹³³: Օգտատերերը կոչ են արել, որ կասկածյալներին փաստաբան չտրամադրեն: Նույն լրատվականի՝ «Պեմզաշենցի 31-ամյա կնոջ և նրա երկու երեխաների սպանության կասկածանքով ձերբակալված Վրույր Բարսեղյանը կալանավորվեց» վերնագրով նյութը տեղադրվել է նաև ֆեյսբուքյան էջում. նյութի տակ առկա է 137 մեկնաբանություն՝ սպանության կասկածյալներին ուղղված վիրավորանքներով, հայիոյանքներով, բռնության կոչերով, ինչպես նաև առկա են կասկածյալների փաստաբաններին ամոթանք տվող գրառումներ¹³⁴:

Հարկ է ընդգծել, որ որոշ հրապարակումներում սպանությունը կապվել է իշխանությունների հետ: «Հրապարակ»

¹³² Տե՛ս «Լուրերի թողարկում» հաղորդման 2022 թ. նոյեմբերի 14-ի եթերը:

¹³³ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2022 թ. նոյեմբերի 14-ի հրապարակումը:

¹³⁴ Տե՛ս «Ազատություն» լրատվականի 2022 թ. նոյեմբերի 15-ի հրապարակումը՝

<https://www.facebook.com/azatutyun/posts/pfbid02cYHFcQBai1p8FyRsT54NtgB9VgWV2yWcRhbG6vNawVL5PDgBxtv9WdNDUjzBhMexZI>:

լրատվականը հրապարակել է հոդվածագիր և բլոգեր Հասմիկ Աղաջանյանի «Ում տակն է մորն ու երեխեքին սպանողների պոչը» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակը փորձում է կապ տեսնել Պեմզաշենում կատարված սպանության և ՀՀ վարչապետի միջև: Մասնավորապես հեղինակը գրում է. «Հիմա Պեմզաշենի «մոր ու մանկանց» սպանությունն է: Ձեռագրի նմանությունն են տեսնում: Կրակը գցել, հրապարակել սպանողների անուններ ու հանրությանը «կապել նրանց հարազատների ջանին»: Մանվելի ժամանակ էլ այդպես էր: Այնքան միամիտ չեմ, որ ասեմ հայր չի կարող նման բան անել: Բայց և այնքան միամիտ չեմ, որ հաշվի չառնեմ մի շարք հանգամանքներ: Խաղաղության օրակարգի է գնում այս իշխանությունը ու այդ շեմին նման սահմոկեցուցիչ դեպք: Հայաստանը ադրբեջանաթուրքական ռելսերի վրա դնելուց հինգ պակաս նման դեպք: Ում է ձեռնտու, որ այս դեպքով հայր հայի դեմ հանի: Ում է պետք, որ հայր մտածի՝ մենք ավելի վատն ենք, քան թուրքը»¹³⁵: Այսպիսով, հեղինակը սպանության հետևում փորձում է տեսնել անուղակի դիտավորություն՝ իշխանությանը մեղադրելով. այսկերպ «սենսացիա» առաջացնելով խուճապ է տարածում հանրության մեջ: Սա հաստատվում է նաև հեղինակի հաջորդ մտքերում. «Պետք է հասկանալ սպանության դրդապատճառները՝ քաղաքական են, թե՛ կենցաղային: Նորից են ասում ես այնքան միամիտ չեմ, որ մտածեմ, թե հայր նման բան անել չի կարող: Բայց այս իրավիճակում, երբ օրեցօր աշխատանք է տարվում քայքայելու ազգային սրբությունները, արժեքները, ուզում եմ

¹³⁵ Տե՛ս «Հրապարակի» 2022 թ. նոյեմբերի 13-ի հրապարակումը՝ <https://hraparak.am/post/e9ec010cd1af1faf0a25440d013615cf>:

հասկանալ, թե նման հայերի փեշերը ո՞ր երկրի դարպասների տակ են... Հասկանալ՝ ում տակ է նրանց պոչը: ...Թե չէ անուներ հրապարակել, ձերբակալել... Այնպիսի տպավորություն է, որ աներևույթ մի ուժ ուզում է, որ մենք հրաժարվենք մեր ազգությունից էլ: Մենք ինքներս մեզնից այնքան զզվենք, որ ասենք՝ կեցցե թուրքը: Ու ամենաահավորը: Այսօր ողջ իրավական համակարգը ենթարկվում է մի մարդու ու ականատես ենք լինում մի մարդու գործողության: Նման դեպքում առաջանում է վստահության խնդիր, և իշխանությունը պիտի իմանա, որ ի վերջո, ինչպես շատ դատական գործերի ժամանակ, կանգնելու է հանրության անվստահության խնդրի առաջ»: Հողվածը դիտարկվում է որպես հակա-իշխանական քարոզչություն, որը նպատակ ունի ընթերցողի մեջ կասկածներ առաջացնելու, նրան մոլորեցնելու, որ Պեմ-զաշենում տեղի ունեցած սպանությունը միգուցե իշխանությունն է կազմակերպել հանրության մեջ ազգային թշնամանք հրահրելու համար: Ընդհանուր հաշվարկով՝ այս լրատվականը հրապարակել է դեպքի վերաբերյալ 22 կյուր:

Իշխանության և մարդասպանության միջև նույնացում կա նաև «Իրավունք» թերթում հետևյալ բովանդակությամբ. «Սա Պեմզաշենի քստմնելի ոճիրը կատարած վիժվածքներից մեկն է: Եվ նա ոչ թե զարմանալի է, այլ՝ օրինաչափ, որ մոլի նիկոլական է: Այո՛, իրավացի ես հարգելի ընթերցող, հայը չի կարող այդպիսի ոճիր կատարել, իսկ նիկոլականը կարող է»¹³⁶: Թերթի վերլուծականի հեղինակն առանց որևէ ապացույցի պնդում է, որ սպանություն կատարած անձը նիկոլ Փաշինյանի քաղաքական հետևորդներից

¹³⁶ Տե՛ս «Իրավունք» թերթի 2022 թ. նոյեմբերի 15-ի 119 (3593) համարը:

Է՝ փորձելով տրամաբանական տեխնիկայի (սիլոգիզմ) միջոցով (այն է՝ «հանցագործը նիկոլական է, հետևաբար նիկոլականները հանցագործ են») վարկաբեկել քաղաքական համոզմունքներ ունեցող անձանց: Հրապարակումը նաև աստելության խոսք է պարունակում Նիկոլ Փաշինյանի համակիրների դեմ ուղղված. հեղինակը հայ չի համարում այն անձանց, որոնք Նիկոլ Փաշինյանի քաղաքական համախոհներն են: Սա ոչ միայն վիրավորանք է, այլև անձի նսեմացում հասարակության մեջ:

«Ատելության խոսքի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության և հանդուրժողականության հաստատման» ծրագրի շրջանակում 2022 թ. նոյեմբերի 1-ից մինչև 2023 թ. փետրվարի 28-ը մշտադիտարկման են ենթարկվել հեռուստահաղորդումների, լրատվական կայքերի, տպագիր մամուլի և ժամանցային ծրագրերի եթերները՝ նպատակ ունենալով ա) պարզել, թե արդյոք դրանք ատելության խոսք գեներացնողներ, տարածողներ կամ հանդուրժողներ են, բ) դիտարկել ատելության խոսքի դրսևորման ձևերը և տարածման հաճախականությունը վերոնշյալ հարթակներում:

Մշտադիտարկման է ենթարկվել «5-րդ ալիք» հեռուստաընկերության «Չարցագրույց», «Մամուլի տեսություն», «Լուրերի թողարկում», «Սինթեզ», «Երկիր մեդիա»-ի «Երկրի հյուրասրահ», «Լրատվական տեսանյութեր», «YerevanToday»-ի «Կարճ ասած», «FreeNews»-ի «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ», «Ազատ գրույց Արթուր Կիրակոսյանի հետ», «Չարցագրույց Արա Աբրահամյանի հետ» հաղորդումների 442 եթեր: Տպագիր մամուլից դիտարկվել է «Առավոտ», «Ժողովուրդ», «Իրավունք» թերթերի 113 համար: Սոցիալական մեդիայում ուսումնասիրվել են «Յրապարակ», «Ազատություն», «168.am», «1in.am» լրատվական հարթակների 387 հրապարակում և 6.844 մեկնաբանություն: Դիտարկվել են «Ազապի», «Ամեն տարի գարնանը», «Կույր աշխարհ», «Արդարության որս», «Սերը թակարդում», «30 արծաթ» հեռուստասերիալների 131 սերիա և Աննա Աբրահամյանի, Վարդան Ղուկասյանի բլոգների 37 թողարկում: Ուսումնասիրության են ենթարկվել նաև

ադրբեջանական մամուլի «Caliber», «Shedevrplus», «APA.az», «Ordu.az», «Haqqin.az», «Oxu.az» հարթակների 208 հրապարակում և 310 մեկնաբանություն:

Մշտադիտարկողներն ուսումնասիրության համար, ըստ սահմանված ձևաչափի, դիտարկել են տվյալ հարթակը՝ դուրս բերելով ատելության խոսք պարունակող ձևակերպումները, արձանագրել ատելության խոսքի հնչեցման բույն, տպագիր մամուլի և էլեկտրոնային մամուլի դեպքում թերթի համարն ու հրապարակման ամսաթիվը: Մշտադիտարկողները դասակարգել են ատելության խոսքի դրսևորումները և, համաձայն մեթոդաբանության, մեկնաբանել դրանք՝ դիտարկելով նաև նյութին հաջորդող մեկնաբանությունները: Ամփոփվել են բոլոր հարթակների տվյալները սահմանված նպատակի վերլուծական պատկերը ստանալու համար:

Մշտադիտարկման ընթացքում ատելության խոսք է արձանագրվել.

- անձի կամ անձանց խմբի դեմ բռնության քարոզումը կամ արդարացումը,
- անձի կամ անձանց խմբի պիտակավորումը,
- անձի կամ անձանց խմբի հասցեին վիրավորական եզրույթների օգտագործումը,
- անձի կամ անձանց խմբի նվաստացումը,
- ծաղրանկարները,
- հայիոյանքների և անպարկեշտ արտահայտությունների կիրառումը,
- հասարակության շրջանում ատելության խոսքն ու բռնությունը որպես նորմ մատուցելը,
- ատելության խոսք պատկերող ցանկացած խորհրդանշանի կիրառումը,
- կանանց թիրախավորումը՝ սեռով պայմանավորված,

- այլ դրսևորումներ:

Մշտադիտարկված 1.037 նյութից 720-ում հայտնաբերվել է ատելության խոսքի դրսևորում, որը կազմում է դիտարկված նյութերի 69,43%-ը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերոնշյալ թիվը չի ներառում սոցիալական մեդիայի մեկնաբանությունները, քանի որ դիտարկված բոլոր 6.844 մեկնաբանությունները պարունակել են ատելության խոսք: Ադրբեջանական մամուլում ուսումնասիրվել են բացառապես հայերի դեմ ուղղված ատելության խոսք պարունակող նյութերն ու մեկնաբանությունները:

Ատելության խոսք պարունակող նյութերը դասակարգվել են ըստ կատեգորիաների.

- *Մխալ կամ կեղծ տեղեկատվություն* – Առանց դիտավորության տարածված ոչ հավաստի տեղեկատվությունը:
- *Բամբասանք* – Լրատվամիջոցի տարածած կարծիքը կամ խոսակցությունը, որը հստակ նշված աղբյուր չունի:
- *Քարոզչություն/պրոպագանդա* – Ատելության համակարգված քարոզչությունը:
- *Ապատեղեկատվություն* – Չանրությանն ապակողմնորոշելու համար ստեղծված տեղեկատվությունը:
- *Ազդեցության գործակալ* – Այն անձը, որն օգտագործում է իր դիրքը՝ ազդելու հանրության շրջանում կարծիքի ձևավորման կամ որոշումների կայացման վրա՝ հօգուտ այն թիմի, որի համար աշխատում է:

Ապատեղեկատվությունը, բամբասանքը և սխալ կամ կեղծ տեղեկատվությունն ավելի բնորոշ են տպագիր մամուլին ու առցանց լրատվականներին, քան հեռուստահաղորդումներին: Թվում է, թե վերոնշյալ բոլոր կատեգորիաներն ուղղված են կեղծ տեղեկատվության տարածմանը, սակայն այդպես չէ: Գործնականորեն չափազանց դժվար է տարանջատել կեղծ տեղեկատվությունն ապատեղեկատվությունից. արդյո՞ք տարածողը տեղյակ է եղել, որ տեղեկությունը կեղծ է (ընթերցողը չգիտի՝ հեղինակը տիրապետում է նյութին, թե ոչ):

Կեղծ կամ սուտ թվացող տեղեկատվության օրինակ է «Դիրքապահ քառօրյա պատերազմի մասնակիցների միավորում» ՀԿ ղեկավար Մանուել Մանուկյանի ֆեյսբուքյան գրառումը, ըստ որի՝ հրապարակված առանձնատունը պատկանում է ՀՀ ՊՆ Նախարար Սուրեն Պապիկյանին: Մանուել Մանուկյանը մակագրել է. «...կեցցե նազարը, կեցցե նիկոլը, կեցցե փրկիչը: Նիկոլական դեմդ խոտ կա՞»¹³⁷: Գրառումը տարածվել էր մի շարք լրատվականներով: Օրեր անց, սակայն, հայտնի է դառնում, որ Նախարար Պապիկյանը դատական հայց է ներկայացրել ընդդեմ Մանուկյանի՝ պահանջելով հերքել կեղծ լուրը: Տվյալ իրավիճակի վերլուծությունից տպավորություն է ստեղծվում, որ Մանուկյանը տեղեկությանն ամբողջապես չտիրապետելու պատճառով է ապատեղեկատվություն տարածել՝ ատելության խոսքով համեմված:

Նպատակաուղղված ապատեղեկատվության տարածման օրինակ է «168.am»-ի «Ռիվյու» հաղորդման եթերի ժամանակ հյուրի՝ Էդգար Ղազարյանի հնչեցրած կար-

¹³⁷ <https://mamul.am/am/news/258135>:

ծիրը Ի. Ալիևի և Ն. Փաշինյանի՝ Լաչինի ճանապարհը փակելու պայմանավորվածության մասին: ՋԼՄ-ն նյութը հրապարակել է հետևյալ վերնագրով՝ «Արցախը հանձնված է Փաշինյանն Ալիևի հետ իրականացնում է երկու խոշոր ծրագիր. Ղազարյան»¹³⁸: ՋԼՄ-ն ոչ միայն բացարձակ ապատեղեկատվություն է հաղորդում, այլև սկանդալային վերնագրի միջոցով խուճապ է տարածում հասարակության մեջ՝ Նիկոլ Փաշինյանին ներկայացնելով որպես Արցախը հանձնողի: Լրատվականն այս վերնագրով նյութը տարածել է երեք կայքում՝ «168.am»-ում, «168.am»-ի բլոգում և յուրօրօրյան ալիքում, որտեղ հաղորդումն ունի շուրջ 19 հազար դիտում, ինչը ևս խոսում է ապատեղեկատվության տարածման դիտավորության մասին:

«Ժողովուրդ» թերթի դիտարկված համարներում հայտնաբերվել է բամբասանք պարունակող 12 նյութ: Բամբասանքների համար առանձնացված անկյուն ունի նաև «Իրավունք» թերթը. խմբագրակազմը նշում է, որ պատասխանատվություն չի կրում այդ բաժնում հրապարակված տեղեկատվության՝ իրականությանը չհամապատասխանելու համար՝ չստուգված, առանց հստակ աղբյուրի տեղեկատվություն տպագրելով և տարածելով:

Ադրբեջանական մամուլի դիտարկված նյութերը ուղղված են քարոզչությամբ՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարանին ուղղված, թե իբր հայերն օկուպանտ են, ագրեսոր ևն:

Սույն ուսումնասիրության մեջ խոսվում է նաև այնպիսի դեպքերի մասին, երբ ատելության խոսք տարածող-

¹³⁸ Տե՛ս «Ռիվյու» հաղորդման հունվարի 4-ի էթերը՝ https://168.am/2023/01/04/1816212.html?fbclid=IwAR2pH_uptxbWLo1WpRAelzeIzRQ03OTAuc_kqCpuV1VObbj6Uy8_BjF9Ik:

ներն ազդեցության գործակալներ են: Յարկ է նշել, որ հեռուստահաղորդումների և էլեկտրոնային հարթակների պարագայում ազդեցության գործակալներն աստելության խոսք են տարածում կրկնվող թեզերի միջոցով, ինչը հասարակության մեջ ավելի է ամրապնդում այն: Ազդեցության գործակալի օրինակ է Արմեն Աշոտյանը: Յարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Աշոտյանը դիտարկված ժամանակաշրջանում չորս անգամ հյուր է եղել «Երկիր մեդիա»-ի և «5-րդ ավիք»-ի հաղորդումներին, իսկ «168.am»-ը շուրջ 40 անգամ սոցիալական մեդիայում արտասույել է նրա ֆեյսբուքյան հրապարակումները, ինչը նշանակում է, որ Աշոտյանի ասելիքը կոնկրետ հասցեատեր ունի, կոնկրետ լրատվամիջոցներ են օգտագործում այն:

Ազդեցության գործակալի մեկ այլ օրինակ է Տիգրան Խզմալյանը «FreeNews» հեռուստաալիքի համար, քանի որ դրա հիմնական հյուրերից մեկն է. դիտարկված ժամանակահատվածում նա չորս անգամ մասնակցել է «Ազատ գրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդմանը:

Յատկանշական է, որ «Երկիր մեդիա»-ի «Երկրի հյուրասրահ» և «5-րդ ավիք»-ի «Յարցագրույց» հաղորդումներին հաճախ որպես հյուր ներկայանում են նույն անձինք՝ նույնաբովանդակ աստելության խոսք տարածելով: Կրկնվող հյուրերի ցանկում են եղել Էդուարդ Ծարմազանովը, Արմեն Աշոտյանը, Իշխան Սաղաթեյանը, Անդրանիկ Թևանյանը, Զրիստինա Վարդանյանը, Գեղամ Մանուկյանը, Դավիթ Զամալյանը, Վահե Յովհաննիսյանը և այլք:

Ադրբեջանական մամուլի պարագայում ազդեցության գործակալներ են պաշտոնատար անձինք (նախագահ Իլհամ Ալիևից մինչև Մեջլիսի պատգամավորներ), որոնք հասարակության շրջանում մեծ հեղինակության ունեն. նրանց

տարածած ատելության խոսքը կոնկրետ հասցեատերեր ունի:

Մշտադիտարկման ընթացքում առանձնահատուկ ուշադրության է արժանացել նաև ատելության խոսքի ծագումը: Ուսումնասիրվել է, թե արդյոք ՁԼՄ-ն ստեղծել, տարածել, թե հրահրել է ատելության խոսք:

Այսպես, հեռուստահաղորդումների պարագայում ատելության խոսքը հիմնականում ծագել է վերոնշյալ երեք ձևերով: Տպագիր մամուլի պարագայում ատելության խոսքը հիմնականում ստեղծել են թերթի հոդվածագրերը: Սոցիալական մեդիայում պատկերն այլ է, քանի որ լրատվականներն ավելի հաճախ տարածում են ատելության խոսք (ազդեցության գործակալների մտքերի, ֆեյսբուքյան գրառումների, հրապարակումների և/կամ ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները չհեռացնելու միջոցով), քան ստեղծում: Հեռուստասերիալների պարագայում ատելության խոսքը գեներացվել է ըստ սերիալի սցենարի և տարածվել ցուցադրող հեռուստաընկերության միջոցով: Իսկ ադրբեջանական մամուլի պարագայում ատելության խոսք գլխավորապես տարածել են ազդեցության գործակալները՝ պետական պաշտոնյաները և նրանց շահերը սպասարկող մամուլը, ապա՝ մյուս լրատվամիջոցները, այդ թվում սոցիալական հարթակներում գործող լրատվականները, որոնց նյութերի տակ գրված հասարակական անհանդուրժողականությունն արտահայտող մեկնաբանությունները դարձյալ չեն ֆիլտրվել:

Թեմատիկայի առումով՝ հեռուստահաղորդումների ժամանակ հնչած ատելության խոսքը հիմնականում ուղղված է եղել քաղաքական հարցերին և պետական ապարա-

տին: Ուշադրության է արժանի այն փաստը, որ հեռուստահաղորդումների հյուրերն ընտրված են եղել ըստ իրենց քաղաքական հայացքների: «5-րդ ալիք», «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունների հաղորդումներում հիմնականում հյուրերն ընդդիմության շահերը պաշտպանող անձինք են, որոնք ատելության խոսք են ձևավորում իշխանության դեմ ուղղված, իսկ «FreeNews»-ի պարագայում ընդդիմության դեմ:

Տպագիր մամուլը ևս քաղաքական բնույթի ատելության խոսք է պարունակում: «Առավոտ» և «Ժողովուրդ» թերթերի պարագայում ատելության խոսք դրսևորվել է միայն տեքստերում և հոդվածներում, իսկ «Իրավունք» թերթի պարագայում և՛ տեքստերում, և՛ ծաղրանկարներում:

Սոցիալական մեդիայում ատելության խոսքի թեմատիկ շրջանակները լայն են եղել՝ քաղաքական բախումներից մինչև էթնիկ պատկանելությամբ պայմանավորված ատելության խոսք: Իսկ հեռուստասերիալներում ատելության խոսք պարունակող արտահայտությունները հիմնականում ուղղված են եղել կանանց դեմ (սան բռնության տեսարաններ են եղել):

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրության ենթարկված ադրբեջանական մամուլի և սոցիալական մեդիայի հրապարակումները միտված են եղել հասարակության մեջ հայերի նկատմամբ հակակրանք առաջացնելու: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական մեդիայում աճում է երկու ազգերի միջև ատելության խոսքի ու դրա տարբեր դրսևորումների ծավալում:

Մշտադիտարկման ընթացքում նշվել են նաև այն բոլոր իրադարձությունները, որոնք ազդել են ատելության

խոսքի սրման վրա, ինչպես՝ Պեմզաշենում ընտանիքի սպանության դեպքը, Լաչինի միջանցքի փակումը, Թուրքիայում աղետալի երկրաշարժը, Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գորամասի պայթյունը ևն: Իրադարձությունների ազդեցության մասին անհրաժեշտ ենք համարել խոսել, քանի որ դիտարկված հարթակները դրանցից հետո ողողվել են ատելության խոսքով: Պեմզաշենի դեպքից հետո թիրախավորման կենտրոնում են հայտնվում հանցագործության կասկածյալն ու նրա հարազատները: Հատկապես սոցիալական մեդիայում այս թեմայով բոլոր հրապարակումների տակ օգտատերերը թողել են ատելության խոսք և բռնության կոչ պարունակող մեկնաբանություններ: Լաչինի միջանցքի փակումն ատելության խոսքը սրել է միանգամից մի քանի ուղղությամբ: Մի կողմից մեծ ծավալով ատելության խոսք է ուղղվել ՀՀ իշխանությունների, վարչապետի, Արցախի իշխանությունների և պաշտոնատար անձանց դեմ, մյուս կողմից թիրախավորվել են ռուս խաղաղապահները, ադրբեջանցիները (որպես էթնիկ խումբ) և Ադրբեջանի իշխանությունները: Լաչինի միջանցքի փակումից հետո ադրբեջանական մամուլում սրվել է հայերի, Հայաստանի և Ռուսաստանի իշխանությունների դեմ ուղղված ատելության խոսքը: Թուրքիայում տեղի ունեցած աղետալի երկրաշարժից հետո ատելության խոսքի սրում է նկատվել երկու ուղղությամբ՝ նախ թուրքերի՝ որպես էթնիկ խմբի, ապա Հայաստանի իշխանությունների և ԱԻՆ աշխատակիցների դեմ Թուրքիա մարդասիրական օգնություն ուղարկելու համար: Փրկարարների դեմ ատելության խոսքի հաճախակի դրսևորումներ են արձանագրվել նաև ադրբեջանական մամուլում, որտեղ հայ փրկարարներին ներկայացնում էին որպես գողերի, կողոպ-

տիչների և վտանգավոր հանցագործների: Ատելության խոսքի սրում է նկատվել նաև Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի զորամասի պայթյունից հետո. թիրախավորման կենտրոնում էին հայտնվել ՀՀ իշխանությունները, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՊՆ-ն ու նախարար Սուրեն Պապիկյանը, ինչպես նաև զորամասի կապիտանը:

Սույն մշտադիտարկման ընդլայնված վերլուծությունն ընդգրկում է վերոնշյալ բոլոր հարթակների ուսումնասիրության ժամանակ հայտնաբերված ատելության խոսքի դրսևորումների հիմնական թեմաներն ու կրկնվող թեզերը՝ առանձին գլուխներով: Յուրաքանչյուր գլխում համադրված են ուսումնասիրված հարթակներից դուրս բերված օրինակները, որոնք ոչ թե մասնավոր, այլ կրկնվող դեպքեր են: